



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԱՐՄԷՆ ՔԱՀԱՆԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

# ՏԵՄՆ ՊԵՏԳԵՄՔ

Կ Ա Մ

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱՑՈՅՑ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՊԵՃԱՓՈՒ ԿԱՓՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տ. Տ. ԳԷՈՐԳԻԱՅ ԴԻ:

ԵԱԻԻԻՔ ԻՇԻԱՆ ԳՐԻԳՈՐԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԲԷՀՐՈՒԴԵԱՆՑ

Տ Փ Խ Ս

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ


ՅՐԲԷԼԵԱՆ ՓՈԳՐԵ, Ծ

1881

Անթրոպոլոգիա

27 ✓

9  
2 n 02



ԱՆՔԵՐՔԱԿ

27

Կ.

Նախնիս ուսանող ընդհանուր  
Սրբաբանական արվեստների:

ԱՐԱԷՆ ՔԱՂԱՆԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ.

# ՏԱՄՆ ՊԱՏԳԱՄՔ

Կ Ա Մ

## ԲԱՐՈՅԵԿԱՆ ՊԱՐՏԱՑՈՅՑ.

104.



Ք-ՕՔԵՔ (105)

Տ Փ Ի Մ  
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՂԱՆՈՒ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ.  
ՕՐԲԵԼԵՆՑ ՓՈՂՈՑ 5.

1881

Handwritten text at the top left of the page, including the number 30405-42.

30405-42

Handwritten text in the middle left section.

Ն. Ս. ԳԵՈՐԳԻԱՆԻ ԳԻՐԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆՈՅՆ ՀԱՅՈՑ  
Ն. Ս. ԳԵՈՐԳԻԱՆԻ Գ.



Handwritten number 1824.

(4522 / 41) (13380-58)

Дозволено Цензурою. Тифлисъ, 7 Августа 1881 г.  
Типографія И. Мартиросіанца, Орбеліан. ул., 5

27-2001

Handwritten numbers 990700 and 75.

### ԵՐԿՈՒ ԽՕՍԲ.

Չարմանում ենք շատ անգամ թէ ինչնու մեր ժողովրդական կեանքը բոլորովին հակառակ ընթացք է վարում խղճի կանոնները և Աստուածային օրհնքները դէմ. թէ ինչնու ընկերական մարդը, հիմնում է իւր ընկերութիւնը սոսի անձնական շահուց վերաբերեալ նպատակի վերայ, որին հետևում է ընկերի զիւանքը. թէ ինչնու վերջապէս ճշմարտութեան ձայնը բոլորովին խեղձութիւն ընկերական մարդոց սրտի և հոգւոյ մէջ՝ Աստութիւնը և Մարդեւորութիւնը բարձր ՚ի ճակատ է պարծում կեանքի ամեն մի ասպարէզում:

Չարմանում ենք միայն և բաւականանում ենք. և երբեմն մեր Չարմանաց պատճառը վերագրելով կեանքի անդամադրելի հոսանքին, մնում ենք անշուփոխ մեր կենցաղաւարտութեան բոլոր պայմաններն տակ, դժուարին համարելով և կամ անհնար՝ դիմադրելու այդ հոսանքին: Այն դժուարին է. դուցէ և շատ զօհեր պահանջէ կեանքի հոսանաց զիմադրելը և չաղթութեան բարբոսն ստանալը: Սակայն ինչնու չենք խորհրդածում առ վաղրի մի և համոզում, թէ ոչ ժամանակն է մեզաւոր և ոչ ժամանակի հոսանքը և ոչ դուքա են պատճառ մարդոց կեանքի ապահանութեան. այլ յանցաւոր է ժամանակի տէրը կամ գործադիրը՝ որ է մարդը: Եթէ մարդը՝ այդ բարձր և իմաստուն հակը, իւր տիեզերածաւալ հանձարով ձկտում է քննել երկինք ու երկիր, ինչպէս վկայում է և Աւետարանական ճշմարտութիւնը (1) «կեղծաւորք զերեսս երկնի և երկրի գիտէք փորձել, իսկ դժամանակս դաշտ զիւնրդ ոչ փորձէք: Բնդէր և յանձանց իսկ ոչ ընտրէք զարժանն»։ Ղուկ. Ժբ. 56. ինչնու ուրեմն նոյն սրանչելի հակը—մարդը, իւր անսահման հանձարով չէ կարողանում կամ աւելի ճշմարեան ասել չէ ձկտում չաղթել ժամանակին, զիմադրել նորա խրոխտ հոսանքին՝ այսինքն իւր կեանքի վնասակար և պակասաւոր կողմերին: Մէթէ չերաւի այդ իմաստուն և խորհուն հակը բարձր հանձարի անսահման ծաւալը նորա համար է միայն, որ անուղղաչ ճանապարհներով ձեռք բերած անձնական շահաւետու-

Թիւնք և օգուտք մըշտ և անպաշտան դերադասէ քան Հասարակական արդիւնաւորութիւնք. Մեթէ մարդոց այդ հըօր Հանձարին նպատակ է դրոշմուած և տահման է կնքուած չափշտակել և զրկել ընկերը, զինքը ստուար լիարթամութեան Հասցնելու համար. ոչ, ոչ, այս չէ ամենեւին մարդոց Հանձարի նպատակակէտը և ոչ այս է նորա կոչումը աշխարհի մէջ. սակայն մարդը ոչ իսկ քննելով իւր լիւսն կոչումը, զինում է մըշտ զէպի այդ զրկողական կէտը, զարգանալով օր քան զօր դադանալացել ունակութիւններն մէջ, մոռանալով իւր բարձր գիւրքը, որ ունի բոլոր արարածոց մէջ, ինչպէս և Հաստատում է այս Գաւթ մարդարէն (2) «Մարդ ՚ի պատուի էր և ոչ խմացաւ, Հաւատարեցաւ անամոց անբանից և նմանեցաւ նոցա» սաղմ. ԽԼ. 11: Սոչնպիսի մի գատալճիւր լսում ենք և Յովհանն Ասիերեբան Հաշրապետից (3) «Զի այնուհետև ոչ դադան թոնաւոր և ոչ անասուն անմիա արժան է ասել, այլ ճիւղաղ բերածիւրդ բերածոցն պիտիացեալ:» Սորանից պարզ հետեւում է, որ ոչ թէ ժամանակն է մեղաւոր և կամ իւր հոսանքը, այլ մեղաւոր է մարդը՝ որ տէրն է ժամանակի և չանցաւոր է նոյն մարդոց գործքը՝ որ արդիւնք է նորա չափշտակող և զրկող պարտաւելի չատկութեանց. Եւ սոցա ամբողջութիւնը արդիւնք են և պտուղք Տգիտութեան Աստուածային օրինաց և Պատուիրանաց, որոց գիտութեան ճշմարիտ մատակարարումը՝ ցաւալի խոտտովանութեամբ պէտք է աւած, որ շատ թույլ է և գրէթէ բնաւին զանցաւորութեան տուած մեր ժողովրդական կեանքն մէջ և ընտանեկան շրջաններում. Սա է Կրօնի գիտութիւնը, որ արհամարուած է մեր մէջ մինչև անդամ. Ասում եմ այս խօսքերը ակտուր վստահութեամբ, որովհետև իսկ է:

Այս է պատճառը, որ իմ կողմից մի լիւրբիկ զսհողութիւն Համարուեցաւ, Հանդէս բերել ընկերական մարդոց կեանքի այս շատ Համառօտ բարոյական պարտացոյցը, որ թէպէտ մանրամասնօրէն չէ խօսում մարդոց պարտաւորութեան ուրոյն ուրոյն մասի վերայ և չէ որոշում նորա կեանքի ամեն մի պահասաւոր կողմերը և իւրաքանչիւր բոժող առանձնական միջոցները, որովհետև այս աշխատասիւրբութեան գլխաւոր նպատակն ու սկզբնապատճառը եղած է մի այլ Հանգամանք, որ կտեսնուի, սակայն և այնպէս օգտուել ցանկացողը և այս սակաւութիւնը կարող է ամբարել իւր մտաւոր շտեմարանում բարոյական պարտուց ցորենոյ այն

Հատկիները, որոնք բազմաաւոր բեղմնաւորութեամբ կըցուցանեն մարդոց մտաւոր անդատանքը, ըստ այնմ (4) «Ամեն ասեմ ձեզ, եթէ ոչ Հատն ցորենոյ անկեալ չեղկի մեռանիցի, ինքն միայն կայ. սպա թէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ.» Յովհ. ԺԲ. 24. մեռցնել ասելով չհատկանանք լսել և մոռանալ և կամ անդործութեան և մոռացութեան անդունդը դահալիժել, այլ միս ու արիւն փոխել և կամ բնութիւն կազմել այդ բարոյական պարտերը և գործադրել, սրպէս զի օգտուի մեղանից և մեր ընկերը:

Այս իմ չնչին երկոցս գլխաւոր սկզբնապատճառը եղած է իշխանուհի Կատարինէ տիկին Բէհբուդեանցը ըստ տոհմին Արդարնեանց, որ բանիցս ներկայ դտանուելով իմ չնչին բարոյներն, չաչանեց ցանկութիւն ունենալու իւր առաքինակենցաղ Նատալիայ դստեր Համար Տասն Պատգամաց բացատրութիւնք. Ես նորա ինձ վերայ դրած այս քաղցր պարտքը, շատ նպատակաշարմար տեսնելով, ջանացի ՚ի կատար Հանել ՚ի լրումն նորա սուրբ փախաքանաց և ՚ի կրթութիւն սրտից ցանկացող բարեպաշտից:

Նրանի, բիւր երանի կլինէք Հայ կնօջը՝ եթէ փախազէր նմանուել այս իշխանուհոյ բարձր և լիւսն ձկտումներն և օրինակին:

Արսէն չահանայ Բաքուցոյնի.





# Ք Մ Ա Ք Ա Ս

(<sup>1</sup>) Երանեալ է այլ որ ոչ գեաց ՚ի խորհուրդս ամբարշտաց. ՚ի ճա-  
նապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, և յաթուռս ժանտից նա ոչ նստաւ: Ս. Մ.  
յորէնս Տեառն են կամք նորա, և յորէնս նորա խորհեցի նա ՚ի տուէ և ՚ի  
գէշերի. Սաղմ. Ս. 1-2.

Քեզ կատարինէ՛ տիկին Բէհբուզեան  
Ի շառաւիղէն սերեալ Ղորղանեան,  
Քեզ և քո զստեր՝ զայս Բարոյական  
Զօնեմ Պարտացոյց ծասն — Պատգամեան.

Ընթերջի՛ք զայս միշտ հուժկու ձեր մտօք,  
Պըտուղ քաղեսջիք զհասկըն ատոք:  
Եւ ձեր սերնդոց և զարմին բոլոր  
Տուէք կտակաւ Պարտք պատշաճաւոր,  
Քաջիկ ուսանել լեզուն Հայկական  
Կարգալ, հասկանալ այս փոքրիկ Մատեան:

Ս. Ք. Բազբառուունի.

# ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱՆ.

(<sup>1</sup>) «Եւ է՛մ Տէր Աստուած չո, որ հոնի պէս յերկրէն եգիպտացոյ  
ի որսնէ ծառայութեան. Ի եղիցին չէս այլ աստուածք Բայ յիսէն.»

Սառաջին պատուիրանը սորվեցնում է մեզ ա. Միայնոյ Աս-  
տուծոյ ճշմարիտ հաւատ և ճանաչումը, պաշտօն և երկրպա-  
գութիւն տալը, ինչպէս ասաց Յիսուս իւր փորձող չարին (<sup>2</sup>)  
«Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես և զնա միայն պաշտես-  
ցես». Մատթ. Մ. 11. բ. Զարթեցնում է շնորհակալաց զգաց-  
մունք որպէս Հրէական ազգի՝ նոյնպէս և մեր՝ Քրիստոսնէիցս  
մէջ, պատուիրելով ՚ի արիտուր Աստուածային անսահման բա-  
րեաց գերագոյն սէրը, ըստ այնմ (<sup>3</sup>) «Սիրեսցես զՏէր Աստուած  
քո յամենայն սրտէ քումմէ և յամենայն անձնէ քումմէ և  
յամենայն մտաց քոց.» Մատթ. ԻԲ. գ. Յտար աստուածներ  
պաշտելու արդէլքն է առաջադրում (<sup>4</sup>) «Զանուն Աստուծոյ օտա-  
րաց մի յիշեցէք և մի՛ լուիցի ՚ի բերանոյ ձերմէ.» Ելից. ԺԳ. 15.

Ասելով «Ես եմ Տէր Աստուած քո», պահանջում է որ  
հաւատանք իրան, իւր ստեղծագործութիւնը և նախախնա-  
մութիւնը՝ որ ունի մարդկան ազգի վերայ. և այս շատ բնա-  
կան է, որովհետեւ եթէ այնքան ողորմած դտաւ որ զմեզ  
ստեղծեց սէր երկրի և յորդէգրութիւն իւր Հայրութեան,  
պարզ է ուրեմն որ և յանձն կառնէր մեր խնամքը և հոգսը  
ըստ այնմ (<sup>5</sup>) «Արդ մի նմանիցէք նոցա. զի գիտէ հայրն ձեր  
զինչ պիտոյ է ձեզ մինչև ձեր խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ.»  
Մատթ. Զ. 8. <sup>1</sup>): Սակայն կան և շատ են մարդիկ այնպիսիք,  
որոնք իւրեանց կեանքի մէջ պատահած դժբաղդութեանց,  
անյաջողութեանց, յանկարծահաս և տարածամ մահուան և

<sup>1</sup>) Տես Մատթ. Զ. 25-54 համար:

այլ ամենայն վնասուց զիպուածոց մէջ ընկած ժամանակ կարծես թէ պատրաստուում են մերժելու Աստուածային նախախնամութիւնը զրդուած իրանց հասած և կամ սպառնացող վշտերի ծանրութիւնից, որից ոչ մի հնարով չեն կարողանում ազատուել Այո՛, դժուարին է նոցա այդ դրութիւնն ու վիճակը, սակայն ընկնենք ամենայն խոնարհութեամբ և հպատակութեամբ Յիսուսի խաչին առաջ, որ իւր ուսոց վերայ դրած տանում էր ՚ի Գողգոթայ և լսենք նորա խօսքերն ու աշակերտանք նորա համբերութեանը <sup>(6)</sup> «Կատարեք Նրուսաղէմի, մի՛ լայք ՚ի վերայ իմ: այլ լացէք ՚ի վերայ անձանց և ՚ի վերայ որդւոց ձերոց: Զի եկեացեն աւուրք, յորս ասիցեն՝ թէ երանի ամլոց և որովայնից՝ որ ոչ ծնան, և ստեանց՝ որ ոչ զիեցուցին: Յայնժամ սկանկիցին ասել լերանց՝ թէ անկերուք ՚ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ: Զի եթէ ընդ փայտ դալար զայս տունեն, ընդ չորն զինչ լինիցի.» Գուկ. ԻԳ. 28—32: Պարզ խրատ է մեզ և յուսադրութիւն. եթէ Յիսուսի անձառ և անհաս Բարերարութեանց՝ այս եղաւ փոխադարձ հատուցումն, ի՞նչ ենք սպասում ուրեմն մենք. ոչ ապաքէն ցաւ և վեշտ է մեր կեանքը այս աշխարհիս մէջ. մէջ բերենք այստեղ մի քանի վկայութիւններ Ս. գրքից նախ իբրև հաստատութիւն մեր խօսքերի և երկրորդ իբրև միջոց և առիթ յուսոյ և միտիթարութեան վշտացեալների <sup>(7)</sup> «ի խանձարուրս ծնայ և ՚ի հոգս.» Իմաստ. Ե. 4. <sup>(8)</sup> «Ոչ ապաքէն իբրև զփորձութիւն են վարք մարդոց ՚ի վերայ երկրի. և իբրև զառօրեայ վարձք վարձկանի կեանք նորա: Կամ իբրև զծառայ երկուցեալ ՚ի տեառնէ իւրմէ և զօղեալ ընդ հովանեաւ. և իբրև զվարձկան՝ որ սպասիցէ վարձուց իւրոց: Նոյնպէս և ես սպասեցի ամսոց սնտեաց. զիշիբք ցաւազինք տուեալք են ինձ: Եթէ ննջեցից. ասեմ, կրբ իցէ տիւ. և թէ յառնիցեմ, դարձեալ թէ կրբ իցէ երեկ.» Յոր. Ե. 1—4: <sup>(9)</sup> «Խոնարհեցարուք առաջի Տեառն և բարձրացուցէ զձեզ.» Յակ. Գ. 10:

(10) «Յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք.» Հովմ. ԺԲ. 12: (11) «Համբեր Տեառն և քաջալերեաց. զորասցի սիրտ քո և համբեր Տեառն.» Սաղմ. ԻԶ:

Կայ և դաղանիք Աստուածային նախախնամութեան և խորհրդոց, որին մենք չպէտք է յանդգնենք հասնել մեր քրննութեամբ, այլ անպայման հպատակութիւնը Նորա Մեծ կամքին, պէտք է լինի մեր նշանաբանը. այն՝ որ մենք կարծում ենք բարւոք և ցանկանում ենք ունենալ, դուցէ ըստ Աստուծոյ է չարիք մեզ համար և վնաս, որին ժուժել անգամ չենք կարող, ուստի և զերծուցանում է մեզ նորանից Բարերարն Աստուած. նա խնամում է մեզ բայց իւր խնամոց ձևը և իւր խորհուրդը դաղանիք է պահում մեզ համար, ինչպէս ասում է մարգարէն <sup>(12)</sup> «Ոչ են խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր, և ոչ ճանապարհք իմ իբրև զճանապարհս ձեր, ասէ Տէր.» Նսայ. ԾԵ. 8: Հպատակենք ուրեմն այդ անքննելի Աստուծուն և բարի Հօրը, հաւատալով որ նա խնամում է մեզ և հոգում է մեր կարիքը՝ որպէս իմաստուն ծնողը՝ իւր զաւակացը:

Աւելորդ չէր լինի մէջ բերել այստեղ Յովհաննէս Յակոբ Ռուսոյի ճշմարիտ խոստովանութիւնը Աստուծոյ գոյութեան և իւր հպատակութեան մասին ինչպէս ասում է <sup>(13)</sup> «Որչափ աւելի բուռն առնեմ անձինս խորհել զանսահման իսկութիւնն Աստուծոյ, այնչափ նուազ ըմբօնեմ. այլ շատ է ինձ, զի նա դոյ, որչափ նուազ ըմբօնեմ, այնչափ առաւել երկիրպագանեմ. խոնարհեմ զիս ինքն, և ասեմ առ նա. Էակդ էից, ես դոմ, վասն զի դու գոս. է վերամբառնալ զիս յողբերակն իմ՝ խորհելս իմ զքեզ անդադար. լաւազոյն վարումն բանականութեանս իմոյ՝ է ունայնացուցանել զիս առաջի քո. հիացումն է ոգւոյս, ափովումն է տկարութեան իմոյ տեսանել զիս ընկլուզեալ ՚ի քո մեծութենէդ.» յեմիլիա. հատ. Գ: Աստուածային տեսլութեան և նախախնամութեան հաւատալ ցանկացողը

Թող բաց անէ Սաղմոսի Ի Ա. ԼԲ. ԽԳ. զլուսնները և խորհրդաճեղով կարգաց, յուսով ենք որ օգուտ կբաղէ:

Սոյն առթիւ և Սողոմոնն է խօսում իւր իմաստութեան զրոյց մէջ ասելով <sup>(14)</sup> «Քանզի քո, հայր, վարէ տեսչութիւն.» Իմաստ. ԺԳ. 3:

Ասելով «որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացոց ի տանէ ծառայութեան» յիշեցնում է հրէական ազգին իւր արած բարիքները և զարթեցնում է նոցա մէջ երաստագիտութեան և շնորհակալեաց զգացմունքը:

Բայց որովհետև Հրէական ազգի Եգիպտացոց ծառայութիւնից և կամ Փարաոնի ձեռքից ազատուիլը, ունի խորհուրդ Քրիստոնէիցս՝ Յիսուսի ազատութեան անմարմին Փարաոնից, այն է Աստանայի իշխանութիւնից և ծառայութիւնից, որին ենթարկուած էինք մեր նախածնողաց մեղքը, վասնորոյ այս խօսքերը և մեզ են վերաբերում, յիշեցնելով մեզ Յիսուսի Չարչարանքն ու խաչը՝ որովք ազատուելով մեղաց իշխանի ծառայութիւնից, որդէգրուեցանք Հօր Աստուծոյ և իրաւունք ստացանք ժառանգ լինելու երկնից արքայութեան:

Ասելով «մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն» արգելում է կռապաշտութիւնը, որովհետև Եսայիքի 400 տարւոյ չափ Եգիպտոսի մէջ կենալով, իւրացրել էին գրէթէ նոցա ազգային և կրօնական սովորութիւններն ու ծէսերը և Եգիպտոսից դուրս գալով՝ գնում էին իրանց նախնական հայրենիքը, որ Աստուած խոստացել էր նոցա նախահայրերին. և որովհետև այն աշխարհը գտանում էր կռապաշտ ազգերի ձեռքի տակ, վասն որոյ, որպէս զի Եսայիքից չմիանան նոցա հետ և չպաշտեն նոցա աստուածները, տուեց այս պատուիրանը. որով նախ՝ այդ վտանգից ազատ պահելու և երկրորդ՝ իրան ճանաչելու և անպայման հնազանդելու նպատակն ունէր:


Այսպէս և պէտք է լինէր. որովհետև Աստուած այդ ազգի նախահայր նշանակեց Աբրահամին՝ որին ասելով <sup>(15)</sup>

«Ել դու յերկրէ քումմէ, և ազգէ քումմէ և ի տանէ հօր քոյ. և եկ յերկիր, զոր ցուցից քեզ. և արարից զքեզ յազգ մեծ և օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի» Ծննդ. ԺԲ. 1—4: Հրէական ազգի կազմութեան հիմքը դրաւ Աբրահամով. և Աբրահամ հաստատապէս հաւատով այդ Աստուածային կոչմանը, հետևեց նորան ըստ արժանւոյն և եղաւ նահապետ կամ ազգապետ իրանից յառաջ եկած մի ազգի՝ որ Յակովբի անուամբ կոչուեցաւ Եսայիք: Եւ որովհետև Եսայիքը Աստուծով կազմուեցաւ և Աստուծոյ սուած օրհնեքներով էր զարդանում փրկչի ակնկալութեան մէջ, ուստի և ասուեցաւ Աստուածպետական Ժողովուրդ, նա պէտք է լիովին ճանաչէր իւր Տէրը և Աստուածը, նորան միայն հնազանդէր անպայման և նորան միայն պաշտէր հաւատարմութեամբ, որոշուելով միւս կռապաշտ ազգերից, որոնք բաղմաստուածութիւն էին դաւաւանում: Գոյ պէտք է լինէր միակ Աստուածապաշտ Ժողովուրդը, որովհետև Աստուծոյ արքայութիւնը Աբրահամով սկսուեցաւ, որովհետև նա եղաւ հայր հաւատոյ և նորանից յառաջ եկած ազգի մէջ պիտի երևէր Աբրայութեան Տէրը և աշխարհի փրկիչը: Այս պատուիրանը հրամայում է ճշմարիտ կերպով պաշտել զԱստուած և արգելում է սուտ պաշտօն մատուցանելը. հրամայում է պաշտել ճշմարիտ Աստուածը և արգելում է պաշտօն մատուցանել չաստուածներին. հրամայում է հաւատալ Աստուծոյ գոյութիւնը, Աստուածային ճշմարտութիւնները և նախախնամութիւնը. յուսալ Աստուծոյ Ամենակարող զօրութեան վերայ և ապաւինել նորան. միանալ նորան՝ իբրև մեր կեանքի վերջին վախճան և նպատակ. սիրել նորան ամեն բանից աւելի. հնազանդուել և խոնարհուել նորա առաջ և հրպատակել նորան անպայման:

Այս պատուիրանը արգելում է մեզ Աստուածատեցութիւնը, անհաւատութիւնը և յուսահատութիւնը, ուսուցանելով մեզ Աստուածսիրութիւն, հաւատ և յոյս. և բաժանում

է երկուսի՝ Տեսական և Գործնական Աստուածապաշտութիւն. Տեսականն է՝ հաւատք, յոյժը և սէրը, որովք հաւատում ենք թէ կայ Աստուած, սիրում ենք Նորան բոլոր սրտով և զնում ենք Նորա վերայ մեր յոյժը, իբրև մեր կատարեալ երջանկութիւն և վերջին վախճան: Գործնականն է՝ որ մատուցանում ենք Նորան Երկրպագութիւն, Պաշտօն, Աղօթք, Ծնրադրութիւն և կատարում ենք ընկերսիրութեան բոլոր պայմանները և Աստուածապաշտութեան բոլոր պարտիքը, ոլք ենք Ողորմածութիւն, Գթութիւն, կարեկցութիւն, Այցելութիւն հիւանդաց և բանտարկելոց, օգնութիւն նեղելոց և կարօտելոց, պատրասարան պանդուխտ և չքաւոր օտարականաց, բարի կամեցողութիւն և Աղօթք թշնամեաց և ատելեաց և այլն:

Ճշմարիտ Աստուածապաշտութիւնը պահանջում է որ մենք ոչ թէ բաւականանանք մեր աղօթքով միայն, այլ թափանցեմք Աստուածային կամաց գիտութեան մէջ և ըստ այնմ կենցաղավարեմք, ինչպէս նուագում է «Հաւատով խոստովանիմ» աղօթքի մէջ Ներսէս Շնորհալին <sup>(16)</sup> Կամեցող Բարեաց, Տէր կամարար, մի թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. Իսկ Աստուծոյ կամքն է Սէր առ Աստուած՝ իբրև Հայր, և Երկիւղ յԱստուծոյ՝ իբրև մեր արդար Դատաւոր և Տէր կենաց և Մահու. երկրորդ Սէր առ ընկերն և օգնութիւն ընկերին: Ընկեր ասելով պէտք է հասկանալ ամենայն մարդ սիրելի և ատելի, բարեկամ և թշնամի, Քրիստոնէայ և անհաւատ, արդար և մեղաւոր, մերձաւոր հարազատ և հեռաւոր օտար. միով բանիւ ամէնքին՝ որոնք ՚ի պատկեր Աստուծոյ են ստեղծուած. Ամենեցուն ևս պէտք է սիրենք, կարեկցենք և օգնենք ըստ չափու կարողութեան, որովհետև այս է Ճշմարիտ Աստուածապաշտութեան ապացոյցը և ընկերական մարդոյ կոչումը:



### ԵՐԿՐՈՐԴ ԳԱՏՈՒԻՐԱՆ.

(1) «Մե՛ պրայտն ուր չեղ իւրաս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկնս ՚ի վեր և որ ինչ յերկնս ՚ի խոնարհ:»

Այս երկրորդ պատուիրանը կցորդ է առաջնոյն. Որովհետև ինչպէս տեսանք Իսրայէլացիք կռապաշտանրի աշխարհն էին գնում. և սակայն ինչպէս քանիցս անգամ իրանց անպատի մէջ արած ճանապարհորդութեան ժամանակ փորձ փորձեցին պաշտելու յգիպտացուց աստուածը, նոյնպէս և վտանգ կար, որ երբ կամենէին աւէտեաց երկիրը՝ որ տիրում էին կռապաշտ ազգերը, հարկիւ պիտի պաշտէին նոցա կուռքերը իբրև աստուածներ. և որպէս զի այդ ապագայ վտանգից ազատ մնայ Իսրայէլը, ուստի տուեց Նորան Աստուած այս արդեւական պատուիրանը. իսկ որ ասում է «որ ինչ յերկինս ՚ի վեր» այդ նշանակում է երկնային մարմինները, ինչպէս արեգակն, լուսին և աստեղք. «և որ ինչ յերկիր ՚ի խոնարհ» նշանակում է երկրային մարմինները, ինչպէս կենդանիները, թռչունները կամ հաւերը, սողունք և այլն, որոնք ստեղծուած են մարդոյ օգտի համար, որոց վերայ իշխելով մարդը իբրև տէր՝ օգտուի նոցանից. շատ անգամ ևս հսկայ, քաջ և զօրաւոր մարդկանց մահուանից յետոյ նոցա արձանները իբրև աստուած էին պաշտուած. որովհետև մարդը ՚ի բնէ ունակութիւն է ունեցել պաշտելու և մեծարելու, սիրելու և վախենալու այն և նորանից՝ որը միշտ բարձր է ճանաչած և կամ որից նա օգուտ և բարիք կամ երկիւղ է ստացած. Այս է Իսրայէլացուոց վերաբերեալ կռապաշտութիւնը, որից զգոյշ պահելու համար Աստուած տուեց նոցա այս պատուիրանը, ճանաչելով նոցա զիրաւարժ բնաւորութիւնը զէպի կռապաշտութիւնը:

Թէպէտ մենք Քրիստոնէայքս բարեբաղդաբար չենք են-

Թարկում այդ տեսակ կռապաշտութեան, այսինքն չենք պաշտում կռուքեր ոչ երկնային և ոչ երկրային մարմիններից շինուած. սակայն ապաքաղգաբար ունենք այլ տեսակ կռապաշտութիւն՝ որ ըստ իս, աւելի զօրագոյն է քան զառաջինն. այդ կռապաշտութիւնը կատարում է մեր մէջ մտածութեամբ, խորհրդով, խօսքով և վերջապէս գործքով:

Մի՞թէ կռուք շինելն և նոցա պաշտելն է միայն կռապաշտութիւն. ոչ ապաքէն մեր ամբողջ կեանքը կռապաշտութիւն է, եթէ միայն մեր խորհրդոց և մտածութեանց, խօսից և գործոց մէջ հրաժարում ենք որոնելու Աստուածային կամաց և պատուիրանաց զիտութիւնը և ըստ այնմ մեր կենցաղավարութեան կանոնը. խօսքիս բացատրութեան համար, կարևոր եմ համարում մէջ բերել Ներսէս Ենորհալոյ «Հաւատով խոստովանիմ» իմաստնալից աղօթքի իններորդ տունը, որ պարզ ցոյց է տալի մարդոյ օրինաւոր կեանքի սահմանը և ձևը <sup>(2)</sup> «Ամենախնամ Տէր. դէր պահապան աչաց իմոց՝ զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յարատ. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ գստութիւն. և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ զնալ ՚ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զչարժումն սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի:»

Մենք մեր անձնական շահը և օգուտը նախադասում ենք Աստուծոյ կամքից և պատուիրանից, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ կռապաշտութիւն:

Հարեանցի մի ակնարկ ձգենք մարդկանց իւրաքանչիւր գասակարգի վերայ:

Դատաւորները իրանց գատաւորական աթոռի վերայ նստած, փոխանակ աղքատի և հարստի, իշխանի և աամիկի, քաղաքացւոյ և գիւղացւոյ, ծանօթի և անծանօթի, բարեկամի և օտարի, մինչև անգամ թշնամոյ և ատելոյ դատը

արդարապէս տեսնելու, առանց որոշելու մէկը միւսից, ընդհակառակը հարստից կաշառուելով՝ աղքատին մերժում է, իշխանից վախենալով՝ աամիկին դադապարտում է, քաղաքացւոց ամաչելով՝ գիւղացուն արհամարհում է, ծանօթին պատուելով՝ անծանօթին նեղացնում է. և այս ամենայն ինչիցն է յառաջ գալի, եթէ ոչ անձնական շահից. իսկ անձնական շահին զոհել խեղճի իրաւունքը ի՞նչ է, եթէ ոչ կռապաշտութիւն <sup>(5)</sup> «Անիրաւութիւն ՚ի գատաստանի մի՛ առնիցես. և ակն աղքատի մի՛ առնուցուս. և մի՛ երեսաց աչառիցես հարստի. արդարութեամբ դատեսցես զընկեր քո.» Աւտ. ԹԹ. 15:

Քահանան իւր Աստուծոյ և մարդկանց մէջ ունեցած Պատգամաւորութեան մեծ զործում, փոխանակ անդադար ՚ի ժամու և ՚ի տարաժամու իւր հօլուութեան յանձնուած ժողովուրդի հոգեկան կարիքը հոգալու, նորա մէջ կրօնական զգացմունք զարթեցնելու, նորան իւր խօսքով, գործքով և ամբողջ կեանքով կրթելու, գաստիարակելու և առ Աստուած մօտեցնելու, նորա պակասութիւնները, մոլութիւնները, յանցանքները արմատախիլ անելու, փոխանակ նորան ճշմարիտը քարոզելու, օգտակարը սորվեցնելու. փոխանակ զինքը իւր մարմնական շատ հաճոյքներից, զուարճութիւններից և բաւականութիւններից զրկելու ըստ Առաքելոյն <sup>(6)</sup> «Մի՛ երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս, այլ ունիցին զխորհուրդս հաւատոցն սուրբ մտօք:» Ա. Տիմ. Գ. 9: Փոխանակ իւր միակ մտիթարութիւնը Ա. Գրոց մէջ որոնելու և այնտեղից ժողովուրդին մատակարարելու, նորանով լցուելու, նովաւ և ՚ի նմա խորհելու ըստ Առաքելոյն <sup>(7)</sup> «Միտ դիր ընթերցուածոց մտիթարութեան վարդապետութեան, մի՛ անփոյթ առներ զչնորհացդ որ ՚ի քեզ են, որ առւաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երկցութեան. յայդ խորհեաց և ՚ի գոյն կանխեսջեր.» Ա. Տիմ. Գ. 15—16. փոխանակ զիտութիւնը մերժելու համար սարսափելու Աստուածային սպառնացող վրէժխնդիր ձայնից, որ

1002-17  
27-2007  
11  
5254  
104  
13380-58  
13381

յառաջադրում է մեզ Ովսէ մարգարէն (8) «Իու զգիտութիւն մերժեցեր, մերժեցից և ես զքեզ զի մի՛ քահանայասցիս ինձ.» Ովսէ. Գ. 6. փոխանակ ըստ Առաքելոյ բանին ցաւակից և վշտակից լինելու իւր ժողովրդին, նորա ցաւը և վեշարը ընդունելով իբրև իւրը, որովհետև ինքն է նորա հոգևոր բժիշկը ըստ այնմ (9) «Ո՞ հիւանդանայ և ոչ ես հիւանդանամ, ո՞ գայթակղե և ոչ ես տապանամ.» Բ. Կորնթ. ԺԱ. 29 (10) «Զի ուխտիւք խնդրէի ես ինքնին նզով լինել ՚ի Քրիստոսէ վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ.» Հռովմ. Թ. 3. փոխանակ սոսկալու այն ծանր պատասխանատուութիւնից, որ ունի տալ Աստուծուն՝ նորա ահեղ դատաստանի առաջ իւր հովուութեան և տեսչութեան յանձնուած ժողովրդի վերաբերմամբ ըստ մարգարէին (11) «Որդի մարդոյ դէտ կացուցի զքեզ տանդ Իսրայէլի. լուիցես յինէն պատգամ՝ և սպառնացիս նոցա իբրև յինէն: Յորժամ ասիցեմ ցանօրէնն եթէ մահու մեռանիցիս. և դու ոչ զգուշացուցանիցես նմա. և ոչ խօսեսցիս զգուշանալ անօրինին. և դառնալ ՚ի ձանապարհաց իւրոց չարաց՝ և կեալ. անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից.» Եղեկ. Գ. 17—19: Փոխանակ ահա այսպիսի հովուութեամբ և տեսչութեամբ, սիրով և յօժարութեամբ արածելու բանաւոր հօտը և ինքը իւր կեանքով առաքինութեան, արդարութեան և սրբութեան հայելի լինելու ժողովրդի համար, որի մէջ տեսնելով ժողովուրդը իւր անուղղայ կեանքը և պակասուոր կերպարանքը՝ ուղղել և նորան նմանութիւն, որպէս խրատում է և Առաքեալը (12) «Զերիցունս այսուհետև աղաչեմ՝ իբրև երիցակից և վկայ չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձեալ փառացն յայանելոյ հաղորդ. արածեցէք որ ՚ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ.» Ա. Պետր. Ե. 1—2: (13) «Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եղ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս. հովուել

5522  
2072

զժողովուրդ Տեառն զոր ապրեցոյց արեամբ իւրով.» Գործք. Ի. 17. 28: Փոխանակ ահա այս ամենայն պարտիքը լյուցանելու և կատարելու՝ ընդհակառակը կամ չէ ուղղում, չէ դատարակում, չէ քարոզում, չէ սորվեցնում և կամ պաշտպանում է իւր ժողովրդի պակասութիւնը կամ զանցառութեան է տալի իւր անձնական շահերի համար. իսկ ինքը կամ մոռանալով թէ ինքը քահանայ է և կամ արհամարհելով իւր քահանայական մեծ կոչումը, անում է այն՝ ինչ որ ամօթ է և յանցանք աշխարհականին մինչև անգամ, ուր թէ իրան՝ որ Առաջնորդ է իւր ժողովրդին. ապրում է և կենցաղավարում, խօսում է և զործում այնպէս՝ որպէս արհամարհելի է և աշխարհականին մինչև անգամ, ուր թէ իրան՝ որ Միջնորդ կամ Պատգամաւոր է կարգուած Աստուծոյ և մարդկան մէջ. նա հայելի է ժողովրդի համար, բայց ի՞նչ բանի՝ մեղաց և գայթակղութեան. նորա մէջ ժողովուրդը մեղք և գայթակղութիւն տեսնելով՝ ինքն ևս գայթակղում է և մեղքից դուրս դալու փոխանակ՝ մեղքի անդունդի խոր յատակն է սուղւում. և այս ամենայն ի՞նչիցն է յառաջանում, եթէ ոչ անձնական շահից, մարմնական բաւականութիւնից և աշխարհասիրութիւնից, որոնք սարսափելի կռապաշտութիւն են քահանայի համար:

Ուսուցիչը իւր ուսուցչական ամբիոնից փոխանակ օգտակարը խօսելու իւր ուսանող ունկնդիրներին և այնպիսի բացորոշ և հասկանալի ձևով, որ ուսանողները աւանց դժուարութեան ըմբռնեն դասական խօսքը, մարտեն և ուղղուն են ու զարգանան, փոխանակ իբրև հայր՝ սիրով, յօժարութեամբ և երկայնամիտ համբերութեամբ վարուելու իւր սանիկների հետ դասական դործի մէջ, փոխանակ բարձր և վսէմ հեղինակութիւն՝ քաղցր վարմունքով զարդարուած, պահելու աշակերտների առաջ, ընդհակառակը աղձատեալ ոճով է դասախօսում, որը չեն հասկանում ունկնդիրը ուսանողները, կամ բոլորովին անօգուտն ու աւելորդն է սորվեցնում, կամ պաշտօնական և սառն մի ձև է

պահպանում իւր ուսուցչական բարձր և վսեմ պաշտօնի մէջ և կամ ակամայ և անսիրտ է ընթանում իւր ուսուցչական պարտականութեան մէջ, ամենեին հաշիւ չտալով իրան թէ որքան օգտուեցան իրանից ուսում և դիտութիւն սպասող անմեղ մանուկները, միայն ստանայ իւր ռոճիկը ճիշտ և ի ժամանակին. Այս ևս անձնական շահ է և ուրեմն կռապաշտութիւն:

Ծնօղները փոխանակ սրբութեամբ պահելու ծնօղական իրաւունքը և հարազատութեամբ կատարելու ծնօղական պարտիքը, այն է՝ փոխանակ իրենց որդւոց նախ քան զամենայն Աստուծոյ հետ ծանօթացնելու, նորա Բարիքը իրենց որդւոցը պատմելու և սովորցնելու, և հետևաբար առ Աստուած մի սքանչելի Սէր և Նրախտագիտութիւն սերմանելու նոցա սրտերի մէջ, փոխանակ նախապէս եկեղեցւոյ և ուսումնարանի դուռը ցոյց տալու որդւոց, փոխանակ Աստուծոյ կամքը սորվցնելու նոցա, աղօթելու նոցա համար և օրհնելու նոցա, փոխանակ վարժեցնելու նոցա առաքինութեան մէջ, այն է սիրելու, կարեկցելու և օգնելու աղքատին, կաղին, կուրին, հիւանդին, անտուն թափառող խեղճին, մերկերին, անհայր և անմայր թշուառ օրբերին, փոխանակ իրենց որդիքը Աստուածային աւանդ կամ գրաւ ընդունելու և ըստ այնմ մեծ զգուշութեամբ հսկելու նոցա բարոյական կեանքի վերայ, աղատ պահելով ամենատեսակ զայթակղութիւններից՝ ընդհակառակը ժամանակից շատ վաղ ծանօթացնում են նոցա աշխարհի հետ, այսինքն ապականուած յատկութեանց և սովորութեանց. Որդւոց ներկայութեանը՝ իրանք բանբասում են, անիծում են, հայհոյում են այլոց և այս կենդանի դասը սովորցնում են նոցա. պճընում են շուրջ զարդարանքներով և թանկագին հագուստներով, յաճախում են զուարճութեան և պարսպութեան տեղերը, ապրում են և կենցաղավարում շուրջարար, արհամարհում են, զրկում և արտաքսում ամենատեսակ աղքատներին

ու խեղճերին. հեռու են շրջում եկեղեցուց, ձանձրանում են աղօթքից՝ ու վշտացած մարդոց ամենասիրելի և մխիթարիչ ընկերն է. զլանում են և աւելորդ են համարում պատմել և սորվեցնել որդւոց Աստուծոյ Բարիքը և մեծ գործքերը. չեն ձկաւում ամենեին զարթեցնելու որդւոց սրտերի և հոգիների մէջ Նրախտագիտական զգացմունք՝ դէպի մեր ամենիս բարի Հայրն Աստուած, կարեկցութիւն դէպի թշուառը, սէր՝ դէպի ընկերը, յարգանք և պատկառանք՝ դէպի ծերերը, շնորհակալք՝ դէպի բարերարները, ջերմեռանդութիւն և հաւատ՝ դէպի Աստուածապաշտութիւն, ջերմ համակրութիւն՝ դէպի ազգը և հայրենական եկեղեցին և ակնածու հնազանդութիւն՝ դէպի իրանց ծնօղական անձնաւորութիւնը. բոլորովին անզգոյշ և առանց հեռասէս խոհեմութեան են վարոււմ, շարժոււմ, խօսոււմ, զործում իրենց որդւոց ներկայութեանը և այս ընթացքով դեռ ի մանկութենէ թունաւորում են որդւոց բնաւորութիւնը. Ծնօղների այս ձև զանցառու և անզգոյշ յարաբերութիւնը դէպի որդիքը՝ ոչ այլ ինչ է եթէ ոչ կռապաշտութիւն:

Որդիքը փոխանակ զնահաստելու ծնօղաց երախտիքն ու աշխատանքը, փոխանակ իրենց կեանքով մինչև անգամ նուիրուելու ծնօղաց կեանքի բարօրութեանը, փոխանակ Աստուծոյ պատկերը տեսնելու նոցա մէջ, և ուրեմն պաշտելու նոցա և յարգելու և նոցանից պատկառելու, փոխանակ ծնօղական ձակատի վերայ կարգալու նոցա կամքը և իրանց պարտականութիւնը և հետևելու նոցա գովելի յատկութիւններին և փոխանակ նեցուկ և գաւազան պատրաստելու զերկնք ծնօղաց ծերութեան և կամ ապաբաղութեան ծանր ժամանակի համար՝ ընդհակառակը պատրաստ են չհաւանելու իրենց բազմերախտ ծնօղների կրթութիւնը, կենցաղավարութիւնը, յատկութիւնները, համեստ խորհուրդները և հեռու չեն մինչև անգամ արհամարհելու երախտաւոր ծնօղներին. այս դեռ փոքրագոյն չարն է. եթէ չքաւոր և թշուառ են ծնօղները, որդիք պատ-

րաստ են մի փոքր դէպքից դուրսած թողնելու բոլորովին ծնողական յարկը, ուրանալով բնաւին իրանց երախտաւոր ծընօղներին. իսկ եթէ հարուստ են ծնողները և կայ իրանց համար փարթամ ժառանգութիւն, յայնդէպս միայն ակամայ և առ երեսս հնազանդուում են ծնողական հրամաններին, ոչ թէ նոցա երախտիքը գնահատելով, այլ իրանց սեպհականութիւն մնալու ժառանգութիւնը պաշտելով. Սա ի՞նչ է, եթէ ոչ դառն կռապաշտութիւն. (14) «Այ որ ասէ ցհայր իւր՝ թէ ընդէր ծնար զիս. կամ ցմայր իւր՝ թէ ընդէր երկնեցեր զիս.» Ասայ. ԽԵ. 10. (15) «Որդի զօրավիգ լեր ծերութեան հօր քոյ. և մի արամեցուցաներ զնա ՚ի կեանս նորա.» Եկղես. Գ. 14:

Աճառականները և արհեստաւորները փոխանակ առևտուրի և արհեստի մէջ իրենց չափաւոր օգուտը միայն խընդրելու և զնոյն կամ գործատիրօջ հաւասար չխախտելու, թէև սակաւ՝ սակայն արգարութեամբ վաստակելու՝ ընդհակառակը իրանց շահերի համար ծախում են վատը իբրև լաւ և մեծագնի. իսկ արհեստաւորները գործատիրօջ գործը շինում են թոյլ և խախտատ, որպէս զի շուտով հնանայ և մաշուի և իրանք դարձեալ օգտուին. Սա ևս մի տեսակ կռապաշտութիւն է, որովհետև խարդախութիւնն է սորա հիմքը: Սոյնպէս պէտք է հասկանալ և ամենայն դասակարգի մարդկանց վերաբերութեամբ: Այս երկրորդ պատուիրանի մէջ մտնում և կախարդութիւնը, նախապաշարմունքն ու սնտոխապաշտութիւնը, սոքա ևս ըստ մասին կուռքեր են, որոց մասին պարզ ասուած է Ս. Գրոց մէջ: (16) «Մի գտանիցի ՚ի քեզ, որ ածիցէ զուտը կամ զդուսար իւր զըոցով և դիւթիցէ զդիւթութիւն և հմայիցէ և հաւահարց լինիցի և կախարդիցէ կախարդանօք և վհուկ և նշանակէտ լինիցի առ զմեռեալս հարցանելոյ.» Երկ. Յրին. ԺԸ. 10—11:

Երկրորդ պատուիրանը ինչպէս զգուշացնում էր Իսրայէլացւոց կուռքեր շինելուց ու պաշտելուց, նոյնպէս զգուշաց-

նում է և մեզ այս տեսակ կռապաշտութիւնից, որ ըստ իս աւելի մեծ կռապաշտութիւն է. որի մէջ, ցաւելով եմ ասում, անպայման թաթախուած ենք մենք մարդիքս, և որի մասին Առաքեալը զգուշացնում է այսպէս (17) «Սպանէք այսուհետև զանդամս ձեր երկրաւորս. ՚ի բաց ընկեցէք զպոռնկութիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց և զագահութիւն, որ է կռապաշտութիւն.» Կող. Գ. 5:

### ԵՐՐՈՐԴ ԳՍՏՈՒԻՐԱՆ.

(1) «Մի՛ ստանալուս զանոն Աստուծոյ չո՛ ՚ի վերայ ստորեայ.»

Առաջին և երկրորդ պատուիրանով մենք պարտաւորուեցանք պաշտել և պատուել զԱստուած. իսկ այս երրորդ պատուիրանով մենք պարտաւորուում ենք պաշտել և պատուել նորա Անունը. Չէ կարելի պաշտել զինքը և չպաշտել Իւր Անունը, որովհետև Անունը Իւր մէջ է և Ինքը Անուան մէջ, Անունը Իւրն է և Ինքը՝ Անուամբ. Իսկ եթէ անարգեմք Անունը, հետեապէս անարգած կլինեմք և զինքն զլսովին:

Աստուծոյ սուրբ Անունը մենք պաշտում ենք և պատուում օրհնաբանութեամբ, սաղմոսերգութեամբ, աղօթքով և ուխտակատարութեամբ: Ընդհակառակն նորա սուրբ Անունը անարգում ենք և անպատուում հայհոյութեամբ, անիծաբանութեամբ, անիրաւ և սուտ երգումներով և ուխտազանցութեամբ:

Այս պատուիրանը ուսուցանում է մեզ առաջինը անել և կատարել իսկ երկրորդից զարշել և հեռանալ:

Նորա Անունը պաշտելու և պատուելու համար, մենք պէտք է հանենք մեր շրթունքներից միայն օրհնութիւն, սաղմոսերգութիւն, աղօթք, օրհնենք նորա Ս. Անունը և գործքը,

Սաղմոսներ և Աղօթենք Նորան 'ի ժամու և 'ի տարածամու և եթէ ուխտադիր ենք Նորան մի որ և իցէ բարեգործութեան կամ Պարտակատարութեան համար. պէտք է ջանանք կատարել նոյն ուխտը սահմանեալ ժամանակին անպատճառ և բոլոր պայմանաց համաձայն, եթէ խոչընդոտ չէ լինի մի յարգելե առիթ. այս առ Աստուած:

Իսկ առ ընկերն մեր ունեցած պարտականութեանց մէջ Աստուծոյ սուրբ Անունը պատուելու և պաշտելու համար, մենք պէտք է հանենք առ ընկերն մեր սրտից՝ բարի կամեցողութիւն, մեր հոգուց՝ կարեկցութիւն, մեր մոքելց՝ բարի խորհուրդ, մեր շրթունքներից՝ օգտակար և հաւատարիմ խօսք և մեզանից գլխովին՝ հարազատ եղբայրութիւն և բարեկամութիւն, որպէս զի լինենք որդիք մեր Հօրը՝ որ երկնքումն է, ինչպէս յորդորում է մեզ մեր հարազատ Բարեկամն Յիսուս (2) «Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ որ յերկինս է.» Մատթ. Ե. 45:

Ընդհակառակն Նորա սուրբ Անունը մենք անարդում ենք և անպատուում, եթէ մեր շրթունքներից հանում ենք հայհոյութիւն, անիրաւ և սուտ երդումն. Պէտք է զգուշանան մեր շրթունքները հայհոյելուց, ինչպէս Իրան՝ նոյնպէս և եկեղեցական սուրբ արարողութիւններն ու ծէսերը, խորհուրդներն ու պաշտամունքը. Պէտք է զգուշանան մեր շրթունքները սուտ և անիրաւ երդումներից, նա մանաւանդ՝ եթէ Աստուծոյ Անունովն է, որովհետեւ ամենամեծ անպատուութիւն է Աստուծոյ անուամբ սուտ երդուելը, մինչև անգամ ճշմարիտ երդուելն իսկ, քանի որ Աստուած մեր վկայն չէ, այլ մեր Ստեղծողն է և մեր երկնաւոր Հայրը, որի Անունը միայն Օրհնելու և երախտապարտ զգացմամբ յիշելու և Նորանով մխիթարուելու պարտաւորուած ենք և ոչ վկայ կանչելու:

Սակայն կայ արդեօք պատճառ Աստուծոյ Անունը զգուշութեամբ առնելու մեր բերանը և սուրբ պահելու, որպէս

յիշում է Տէրունական աղօթքի առաջին խնդրուածքը «Սուրբ եղիցի Անուն քո. կայ, և շատ յարգելի և անուրանալի պատճառ. քանի որ հաւատում ենք և պէտք է հաւատանք, որ Աստուած է բովանդակ տիեզերքի և արարածների Արարիչը, և տիեզերք և արարածք նորա ձեռաց գործքն են, ուրեմն պէտք է և ընդունենք որ Նորա Անունն է Տիեզերքի և Արարածների վերայ, որովհետեւ Նորանն են համայնք (3) յերկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս ձեռաց նորա՝ պատմէ հաստատութիւնս Սաղմ. ԺԷ. 1: (4) Ողորմութեամբ տեսան լի եղև երկիր. և բանիւ Տեսան երկինք հաստատեցան և հոգևով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա. Սաղմ. ԼԲ. 4. (5) Ե՞րբ է տիւ և քո է զիշեր. զլոյս և զարև դու հաստատեցեր. և դու հաստատեցեր զամենայն սահմանս երկրի. զգարուն և զամառն դու ստեղծեր.» Սաղմ. ՀԳ. 16: Տիեզերք և Արարածք բնաւինք՝ են գործք Աստուծոյ և Աստուած է Տէր գործոյն, ուրեմն Տիրոջ անունը պէտք է լինի գործի վերայ. լաւ գործը, լաւացնում է տիրոջ անունը. Մենք արարածներս լաւ լինելով, սրբութեամբ կենցաղավարելով և մեր առ Աստուած և առ ընկերն ունեցած պարտիքը լցուցանելով՝ 'ի հարկէ պաշտած կլինենք մեր Արարչի սուրբ Անունը, հետեւաբար և սուրբ կլինի Նորա Անունը մեզ վերայ:

Երկրորդ՝ Յիսուսիւ մենք որդեգրուեցանք Աստուծոյ. նա եղաւ մեր Հայր. և մենք՝ Նորա որդիք. և որովհետեւ հօր անունը որդւոյ վերայ է, նոյնպէս և Աստուծոյ սուրբ Անունը մեզ վերայ է. և որպէս որդին առ երախտիս հօրը, պարտական է պատուել և մեծարել իւր հօր անունը բարի վարքով, խոհեմ և խմաստուն կենցաղավարութեամբ, նոյնպէս և մենք՝ իբրև որդիք մեր Նրկնաւոր Հօրը, պարտական ենք պաշտել Նորա սուրբ Անունը մեր առ Աստուած և առ ընկերն ունեցած բոլոր պարտակատարութեամբ. յարգանքով և ակնածութեամբ յիշել Նորա սուրբ Անունը և ոչ թէ մեր երգմանց առարկայ շինել:

Սակայն Ս. Գիրքը թողատրուած են Աստուծոյ Անունով երգուելը, միայն արժանաւոր գործի և ճշմարտութեան համար համոզելով որ Աստուծոյ Անուամբ արժանաւոր գործի համար ճշմարիտ երդումը ապացոյց է և նշան մեր առ Աստուած հաւատոց և խոստովանութեան նորա բոլոր կատարելութեանց. ընդունելով որ նա ճանաչում է մեր սիրտը, քննում է մեր միտքը, գիտէ մեր խորհուրդները, ուրեմն և կարող է պատժել մեզ մեր սուտ երդմանց համար, ըստ այնմ<sup>(6)</sup> «ի Տեառնէ յԱստուծոյ քումմէ երկիցես և զնա պաշտեսցես և ՚ի նա յարեսցիս և յանուն նորա երգնուցուս.» Երկ. Օրին. Ժ. 20:

Երդման կարեորութիւնը ընդունում է և Առաքեալը ճշմարտութիւնը զօրացնելու և վէճերը արդարութեամբ վճռելու համար<sup>(7)</sup> «Ապաքէն մարդիկ, որ ինչ ՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երգնուն և ամենայն հակառակութեան նոցա վճիռ ՚ի հաստատութիւն՝ երգումն է» Եբր. 2. 16:

Իսկ եթէ Աստուծոյ Անունով երգւողը կամ սուտ է երգւում և կամ երգմնազանց է գտանուում, յայն դէպս նա ամենամեծ չարիք է գործում և որոշուած է նորա համար Աստուծոյ սպառնալիքը մարդարէի բերանով<sup>(8)</sup> «Եւ հանից զդա, առէ Տէր Ամենակալ, և մտցէ ՚ի տուն գողոց և ՚ի տուն, որք երգնուցուն սուտ յանուն իմ և բնակեցի ՚ի մէջ տան նորա և վախճանեսցէ զնա և գիայա նորա և զքարինս նորա.» Զաք. Ե. 4:

Երդման մի տեսակն ևս ուխտադրութիւնն է, որով մարդ իւր մի որ և իցէ հոգեւոր և մարմնաւոր գործքի յաջող կատարման համար, հատուցման ուխտ է զնում Աստուծոյ և իւր մէջ. Ա. յսպիսի հատուցողական երդմնադիրը կամ ուխտադիրը պարտաւոր է անվրէպ ճշտութիւն և հարապատութիւն պաշտպանել դէպի իւր երդմնական ուխտադրութիւնը, ինչպէս պատուիրում է Ս. Գիրքը<sup>(9)</sup> «Եթէ ուխտիցես Տեառն Աստուծոյ քում, մի յամեսցիս հատուցանել զայն, զի պահանջելով պա-

հանջէ Տէր Աստուած քո ՚ի քէն և լինիցի քեզ ՚ի մեզս. ապա թէ չկամիցիս ուխտել՝ չլինիցի քեզ ՚ի մեզս.» Երկ. Օրին. ԻԳ. 21:

Սակայն Յիսուս այս պատուիրանի թերութիւնը լըոյց ասելով<sup>(10)</sup> «Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն, մի երգնուցուս սուտ. բայց հատուցես Տեառն զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի երգնուլ, մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի յերկիր՝ զի պտտուանդան է ոտից նորա, և մի յերուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. և մի ՚ի գրուխ քո երգնուցուս զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո, և ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն ՚ի չարէն է.» Մատթ. Ե. 33—38: Եւ այս ինչո՞ւ այսպէս, որովհետեւ մեր կեանքի ճշմարիտ Դաստիարակն Յիսուս, կամենում էր ամեն բանի մէջ կատարեալ անել մարդկանց՝ որպէս կատարեալ է Աստուած, ինչպէս և ասում է<sup>(11)</sup> «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր կատարեալ է.» Մատթ. Ե. 48: Իսկ կատարեալ լինելու պայմանն է, որ մարդիկ զիրենք այնպէս ճշմարիտ պահեն իրենց գործքերի մէջ, որ ամենքն ևս նոցա հասարակ այո կամ ոչ խօսքին ստիպուած լինին հաւատալ և հարկ չ'լինի երգուել Աստուծոյ Անունով, Աստուծոյ՝ որոյ սուրբ Անունը մեր երջանկութեան մէջ պիտի լինի մեր առ նա երախտադէտ զգացմանց յայտարարը, վասնգի, նեղութեան և վշտերի մէջ՝ մեր յոյսը, միտթարութիւնը և համբերութիւնը. ընկերական կենցաղավարութեան շրջաններում՝ սէրը և հաւատը և այլն:

Եւ որովհետեւ երդմնական բնաւորութիւնը մարդ նախապէս մանկութեան հասակումն է ստանում կամ կազմում և ապա կեանքի մէջ զարգացնում, վասնորոյ մեծ պարտականութեան են թարկուում ծնողք իրանց որդւոց սկզբնական կրթութեան վերաբերութեամբն նոքա ՚ի մանկութեան որդւոց, պէտք է այնպիսի սէր յարգանք և մեծարանք զարթեցնեն զա-

ւակաց սրտերի մէջ դէպի Ամենաբարի Հայրն Աստուած, որ որդիք զեռ ի մանկութեան սովորեն ոչ միայն սոսկալ Աստուծոյ Անունով երգուելու, այլ Նորա սուրբ Անուան յիշելն անգամ, պարտականութիւն համարեն անելու մեծ յարգանքով, ակնածութեամբ և լի երաստագէտ զգացմամբ: Ուրեմն դատարաններում և կամ այլ հանգամանքներում երգմնեցուցանելը գողցէս մեղք է համարուելու, ընդդէմ լինելով Յիսուսի պատուիրանին և Նորա նպատակին՝ որ էր կատարելութիւն մարդկային բնաւորութեան: Եւ յիրաւի եթէ մարդիկ ձկտէին լինել կատարեալ, ապա ուրեմն երգումը ինքն ըստ ինքեան կեղծուէր: Բայց հակառակ պատկերն ենք տեսնում մարդկային կեանքի մէջ, այն է՝ մարդիկ շատացնելով իրենց սուտը, ստիպուած են երգումներով ճշմարտութեան փոխել զայն, սա է արդիւնք հաւատոյ խախտման: Ձէր արդեօք բարուք և գեղեցիկ, որ մարդիկ իրենց ճշմարիտ խօսքով և գործքով այնպէս գրաւէին ուրիշների հաւատը, որ իրանց մի հասարակ այոն և ոչը՝ բաւական լինէին հաստատելու իրենց խօսքը և գործքը: Եթէ Յիսուսի խօսքը կամ պատուէրը իսկութեամբ կատարուէր, յայնդէպս հաւատը ժողովուրդի մէջ հաստատուն կլինէր և ուրեմն միմեանց կհաւատային անպայման. այն ժամանակ այլ ևս կարիք չէր լինի ոչ դատարանների երգումներին, ոչ պարտամուրհակներին և ոչ գրաւներին դիմելու: Բացակայ է հաւատը և ուրեմն մարդիկ միմեանց հաւատացնելու դիմամբ դիմում են յիշեալ միջոցներին:

Հետզհետէ բոլորովին ոչնչանալով հաւատը, մարդիկ չեն վստահանոյ այլ ևս հաւատալ միմեանց նոյն իսկ երգումներով, պարտատմաներով և գրաւներով: Այս ախուր ճշմարտութիւնը արդէն սկսել է արձակել Խւր բողբոջները մարդկանց յարաբերական կեանքի մէջ, եթէ սկիզբն է, ուրեմն և վախճանին պէտք է սպասել: Ուրեմն պէտք է ընդհատուին մարդկանց միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները, սուրբապատու-

թիւնները և ամենատեսակ գործք և յանձնարարութիւնք և այս ինչնու համար, որովհետև մարդը չէ խորհում բնաւ աշակերտել իւր ճշմարիտ Դաստիարակին Յիսուսի՝ լինելով կատարեալ և այս գրութիւնը ուր պիտի վերջաւորուի արդեօք, եթէ ոչ անդ՝ ուր մարդիկ թուլացնելով ընկերական յարաբերութիւնները, մարդկային կեանքի գործունէութիւնը, եռանդը և աշխոյժը կշղթահարին և իրենք իսկ մեռելութեան կհասնեն. մինչև դարձեալ կկարօտին հետեւելու և աշակերտելու ճշմարիտ կեանքի Աեծ Հեղինակին կամ Դաստիարակին, որ է Յիսուս, կատարելով Նորա պատուէրը որ է ճշմարտութիւն և հաւատ ամենայնիւ և յամենայնի, որ մարդկանց կատարեալ անելու ամենահզօր միջոցն է և որը միայն կարող է պարծել վստահաբար արձակելու մարդկային կեանքի կաշկանդուած գործունէութեան շղթաները, հանելով դմարդիկ մեռելութեան գրութիւնից:

**ՉՈՐՈՐԴ ԳՍՏՈՒԻՐԱՆ.**

(<sup>1</sup>) «Յիշեշէր զօրն շաբաթուոյ պիճել զհա, զվէց օր գործեսցես ևս որոսցես զամենայն գործս հո. յառաքին եօլեներորդի շաբաթ Տէտան Աստուծոյ հոմ. մի գործեսցես ի տես պամենայն գործս հո.»

Որովհետև Աստուած իւր ստեղծագործութիւնը աւարտեց վեցերորդ օրը և հանգստացաւ եօթներորդ օրը որ էր շաբաթ, ուստի և պատուիրեց որ մարդիկ ևս վեց օր իրանց մարմնական պիտոյից համար հոգս քաշեն և աշխատեն, իսկ եօթներորդ օրը, որ է շաբաթ Տէտան՝ հանգստանան իրանց մարմնական աշխատանքներից և հոգևոր աշխատանքներով նուիրեն այդ օրը Աստուծոյ:

Հրեայք շատ ճիշտ էին կատարում այս պատուիրանը,

մինչև անգամ չափազանցօրէն, որովհետև արգելուած էր նոցա այդ օրը ամենայն մի մարմնական գործք, ինչպէս կերակուր պատրաստելը, դրամական առևտուրը, կրակ անելը, անտառից փայտ ժողովելը. այս օրինաց զանցառուները քարկոծուած էին. Այդ չափազանցութիւնն էր պատճառը, որ Յիսուս նկատեց Հրէից մէջ և տեսաւ որ օրէնքի օրինաւորութիւնը նոքա փոխել են բոլորովին, տալով նորան մի արտաքին ձև միայն. ուստի և երբ հրաւիրուած էր միանգամ մի փարիսեցւոյ մօտ ճաշի, տեսաւ այնտեղ ջրգողութեան ցաւով հիւանդացած մի մարդ, որին խղճաց, կարեկցեց և բժշկեց, պահպանելով օրուայ իսկական սուրբ նշանակութիւնը, որովհետև այդ օրը բարեգործութեան օր էր և Յիսուս բարեգործութիւն արեց. սակայն ձևապաշտ աւելի քան օրինապաշտ Հրէայք չարախօսեցին թէ ինչո՞ւ շաբաթ օրը բժշկեց ինչպէս վկայուած է Առկաս աւետարանիչը (2) «Նւ եղև ՚ի մտանելն նորա ՚ի տուն ուրեմն յիշխանաց փարիսեցւոց ՚ի շաբաթու ուտել հաց, և նոքա սպասելին նմա: Նւ ահա այր ոմն էր անդ ջրգողեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս, եթէ արժանից է ՚ի շաբաթու բժշկել: Նւ նոքա լուռ եղին: Նւ բուն հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա և արձակեաց: Նւ ասէ ցնոսա, ո՞յր ուրուք ՚ի ձէնջ էշ կամ եզն անկանիցի ՚ի ջրհոր, և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: Նւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն.» Առկ. ԺԿ. 1—7:

Այս պատուիրանաւ յիշում էին Հրէայք Աստուծոյ մեծ բարիքը, այն է՝ Աշխարհի արարչագործութիւնը և հետևապէս Աստուածային Նախախնամութիւնը. որովհետև եթէ Աստուած ստեղծել է աշխարհքը, հետևապէս խնամք պէտք է ունենայ իւր ստեղծած աշխարհքի վերայ ինչպէս հաստատում է Աւետարանական ճշմարտութիւնը (3) «Մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և մի վտան մարմնոց ձերոց՝ թէ զինչ ազանիցիք, ոչ ապաքէն ոգի

առաւել է քան զկերակուր և մարմին՝ քան զհանդերձ: Հայեցարուք ՚ի թռչունս երկնից, զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ՚ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա»: Մատթ. 2. 25—27: (4) «Ո՞ր իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քննր տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն՝ միթէ օճ տայցէ նմա: Արդ՝ եթէ դուք՝ որ չարքդ էք, զիտէք պարզևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տայցէ բարիս այնոցիկ՝ որ խնդրեն զնա.» Մատթ. Է. 9—12: Որպէս և ծնողք, որ ծնում են զաւակներ, պէտք է և սնուցանեն, խնամեն ու դաստիարակեն նոցա. Սոյնպէս և տանուաէրը, ոչ միայն շինել է տունը, այլ և ամենայն տարի հոգս է քաշում և մտածում է իւր տան նորոգութեան, հաստատութեան, պայծառութեան և դեղեցկութեան մասին:

Եւ այսպէս Հրէից ազգը շաբաթ օրը յիշելով Աստուծոյ մեծ բարիքը, այն է Արարչագործութիւնն ու Նախախնամութիւնը՝ իրանք իրանց պարտաւորում էին բարիք և օգուտ պատճառել ընկերին. յիշելով նոյնպէս իրանց Նհովայի հանգիստը, իրանք ևս պարտաւորում էին հանգստանալ մարմնական գործքերից կամ աշխատանքներից, նուիրելով այդ օրը Արարչին: Շաբաթ աւուր սուրբ պահելը կամ Աստուծուն նուիրելը հասկացւում է այսպէս, որ մարդիկ վեց օր անդադար աշխատելով, հոգացին իրանց մարմնաւոր պիտոյքները, եօթներորդ օրը նոքա պէտք է նուիրեն իրանց Արարչին, այն է՝ Պէտք է գիմեն խմբովին Աստուծոյ տաճարը, սակայն ի՞նչպէս, ոչ թէ իրանց մեղքերով և յանցանքներով, առանց զղջման, որովհետև այնպիսիների Եկեղեցի գնալը մերժում է Աստուած Երեմիայ մարգարէի բերանով (5) «Նւ գողանայցէք՝ և սպանանիցէք՝ և շնայցէք՝ և երդնուցուք սուտ: Նւ գայցէք կայցէք առաջի իմ՝ ՚ի տանս յայսմիկ. . . Մի՞թէ այր աւազակաց եղև տունդ իմ, յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ այդ առաջի

ձեր. ես ահա առիկ տեսի. առ Տէր.» Երեմ. Է. 9—11. այլ պէտք է իւր շարժութեայ մէջ գործած մեղքերն ու յանցանքները զլջայ, ապաշխարէ և այնպէս դիմէ իւր Արարչի տունը ըստ այնմ<sup>(6)</sup> «Այլ լոյճ զկնճիւն անիրաւութեան քակեան զկարգախուժիւն վաճառաց քոց. արձակեան զնեղեալս թողու թեամբ և զամենայն մուրհակս անիրաւութեան պատառեա.» Եսայ. ԾԼ. 6: Ուրեմն մարդիկ այս իրանց վերայ եղած Աստուածադիր պարտիք պէտք է կատարեն և ապա համարձակ ձակատով յանդիման լինեն Աստուծոյ, փառք տալով վեց օրուայ աշխատանքի համար և խնդրելով Նորա շնորհքը առաջիկայ շաբաթն ևս արդար գործակատարութեամբ անցկացնելու: Մարդիկ այդ օրը պէտք է ողորմութիւն տան աղքատներին, օգնեն խեղճերին և բարեգործութիւն անեն առհասարակ ՚ի նշան և Սիրոյ Երախտագիտութեան առ Աստուած, որովհետեւ օրը Աստուծունն է և խեղճերն ու աղքատներն ևս Աստուծունն են և այդ օրն են ուրախանում նոքա բարեպաշտների ողորմութեան տուրքերով<sup>(7)</sup> «Փոխ տայ Աստուծոյ, որ ողորմի անանկին. ըստ տրոց նորա հատուցէ նամ», Առակ. ԺԹ. 17: <sup>(8)</sup> «Քրդեան քաղցեոց զհաց քո. և զաղքատս անյարկս տար ՚ի տուն քո. եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջիւր. և յընտանեաց զաւակի քո զակն մի արկանիցես» Եսայ. ԾԼ. 7:

Մարդիկ այդ օրը պէտք է յիշեն իրանց բոլոր պարտականութիւնները և շտապեն լցուցանելու. Պարտապանը պէտք է հատուցանէ իւր պարտատիրոջ պարտքը, եթէ վերջինս այլ ևս հնարք չունի սպասելու. Պարտատէրն ևս իւր կողմից պէտք չէ որ ստիպէ պարտապանին պարտուց հատուցումը, եթէ պարտապանը նեղ դրութեան մէջ, իսկ իւր վիճակը տակաւին ապահով է և անկարօտ: Գործատէրը պէտք է հատուցանէ այդ օրը իւր մշակների և կամ այլ արհեստաւորների վարձը, եթէ իւր վերայ է և ոչ թէ այսօր և վաղը ասելով՝ զրկէ նոցա օրական հացից և յուսահատութեան ու դայթակցութեան

հասցնէ նոցա խաղաղ կեանքը<sup>(9)</sup> «Մի ասիցես թէ երթ և եկեսջիւր և վաղին տաց. զի կարող ևս իցես բարի առնել. քանզի ոչ դիտես զինչ վաղին ծնանի քեզ.» Առակ. Գ. 28: Հարուստը պէտք է բաց անէ այդ օրը իւր քսակը այն խեղճ, թշուառ ու որբացեալ ընտանիքների կամ գերզաստանց համար, ուր աշխատաւոր ոյժը վախճանուած է և որբերը իրենց այրիացած մօր շուրջը պատառատուն հանդերձներով նստուած՝ իբրև անմայր թոռնոց ձագուկներ սպասում են թէ երբ Աստուածային ողորմութիւնը կհասնի իրենց, թէ երբ մի բարի մարդ կկերակրէ զիրենք այդ ուրախութեան և սրբութեան օրը: Քահանայք պէտք է այդ օրը սեղան ուղղեն, Պատարագ մատուցանեն, աղօթեն, քարոզեն և մխիթարեն իրենց հովուութեան յանձնուած ժողովուրդը, իսկ ժողովուրդը պէտք է հոգայ այդ օրը իւր քահանայի ապրուստը<sup>(10)</sup> «Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուոյն իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ անձին իւրում գանձեցէ, որ ինչ և յաջողեցի.» Ա. Կորնթ. ԺԶ. 2: Ծնօղները այդ օրը պէտք է առաջնորդեն որբուց զէպի Նկեղեցի. պէտք է պատմեն որբուց օրուայ նշանակութիւնը. պէտք է աղօթեն նոցա համար և օրհնեն նոցա:

Սյդ օրուայ խօսքերը, գործքերը, մտածմունքներն ու խորհուրդները պէտք է լինեն սուրբ, օգտակար ու բարի. որովհետեւ սուրբ է օրը և պատկանում է Սրբոց Սուրբին և Ամենաբարի Հօրը և Արարչին: Չպէտք է լինի մարմնաւոր աշխատանք քսակի և անձնական պէս պէս շահուց համար, որովհետեւ Աստուծոյ արդարութիւնը կհանթէ այնպիսիներին և վնասը կը գերազանցէ նոյն աւուր մէջ ձեռք բերած օգուտին:

Մենք Քրիստոնեայքս շաբաթ աւուր փոխանակ կիւրակէ օրն ենք հանդստանում մեր մարմնական աշխատանքներից. Կիւրակէն է Միաշաբաթ, այսինքն շաբաթուայ առաջին օրը. և այս ՚ի յիշատակութիւն Յիսուսի Քրիստոսի հրաշափառ Յարութեան, որովհետեւ այդ օրը յարութիւն առաւ և մեզ

պարեւելց յաւիտենական կեանքը անսահման ժամանակաւ։

Իւրաքանչիւր Միաշաբաթին կամ Կիւրակէին Առաքեալք և հաւատացեալք Յիսուսի փրկութեան մեծ գործի յիշատակը անջինջ պահելու համար, հաւաքուում էին միասին և լսում էին Աստուծոյ խօսքը. և իրանց մտածութեան առարկայ էին կազմում միայն Աստուծոյ մեծ Բարիքը, որ արեց մարդկան ազգին. ապա միաբանութեամբ և միաբարբառ վերուղղում էին առ Աստուած շնորհակալեաց զգացումներ և աղօթքներ, խնդրելով Նորանից միլենոյն ժամանակ Նորա Աչրը, Խնամքը, Պաշտպանութիւնը, Թրհնութիւնը, Նորա կամքի գիտութիւնը և պատուիրանաց պահպանութեան կարողութիւն, որով հաստատուն կլինի մարդկանց առ ժամանակեայ կեանքի երջանկութիւնն ու խաղաղութիւնը և անխուսափելի՝ երկնային յաւիտենական կեանքի ժառանգութեան յոյսը։ Այդ օրը Պօղոս առաքեալը պատուիրում է և իրանց մարմնական ապրուստի հոգատարութիւնը, «Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուօն իւրաքանչիւր ոք՝ ՚ի ձէնջ անձին իւրում գանձեցէ, որ ինչ և յաջողեցի.» Ա. Կորնթ. ԺԶ. 2. որովհետև օրը Աստուծոյ նուիրական է և Եկեղեցւոյ պաշտօնեայք ևս Աստուծոյ նուիրեալներն են և Աստուածային խօսքի թարգմանք. ուստի այդ օրը նոցա մարմնական պիտոյքը պէտք է հոգան հաւատացեալք։

Այդ օրը ամենայն ընտանիք ներկայ պիտի գտանուին Ս. Պատարագին. իսկ ներկայ չլինելը մեղք է համարուում, եթէ յարգելի չեն բացակայութեան պատճառները. յարգելի պատճառներն են հիւանդութիւն մարմնական և ոչ հոգեոր, որովհետև հոգեոր հիւանդութիւնը պէտք է առողջանայ այդ օրուայ համար. հիւանդին պահպանութիւն և խնամատարութիւն. երեխայոց հսկողութիւն, եթէ չկայ մի այլ հսկող. ճանապարհորդութիւն այսինքն եթէ ճանապարհի վերայ են այդ օրը։ Այսպիսիք չեն մեղանչի, եթէ ներկայ չլինեն կիւրակէ աւուր Ս. Պատարագին սոցանից դուրս եղած պատճառները, յարգելի չեն և Ս. Պա-

տարագին ներկայ չեղողը կմեղանչէ։ Սակայն Ս. Պատարագին ներկայ լինել ցանկացողը պարտաւոր է նախապէս խորհրդածել իւր թշնամական յարաբերութիւնը՝ եթէ ունի ընկերի հետ և շտապէ պայն սիրով և հաշտութեամբ վերջացնելու, որպէս զէ ընդունելի լինի նորա ներկայութիւնը Ս. Պատարագին. ըստ Աւետարանական ճշմարտութեան (1) «Եթէ մատուցանիցես զպատարագ քո՝ ՚ի վերայ սեղանոյ, և անդ յիշեցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ գքէն, թող զպատարագն քո ՚ի վերայ սեղանոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուցիս զպատարագն քո.» Մատթ. 23—25։

Կիւրակէ օրը ամենայն մարդ արդար հաշիւ պիտի տայ Աստուծուն իւր շաբաթուայ մէջ գործած չարիքներին և բարիքներին. Աէտք է խոստանայ չարիքը թողնել, պատճառած փասները հատուցանել և զգուշանայ որ առաջիկայ շաբաթն ևս այնպէս չսխտէ. Իսկ բարիքը դարձեալ շարունակէ. որովհետև եթէ մարդը իւր օրական ել ու մուտը ամենայն յօժարութեամբ նայում է, քննում և հաշուում ու ստուգում. մեծ բան է արդեօք եթէ շաբաթը միանգամ քննէ իւր ամբողջ շաբաթուայ կեանքը և թուէ իւր չարիքները, փասները և օգուաններն ու բարիքը։

Կիւրակէ օրը Ս. Պատարագից յետոյ ընտանիքը իրենց տանը միասին հաւաքուած պէտք է յիշեն Աստուծոյ բարիքը, նորանով զբաղուեն, պատմեն որբւոց օրուայ պատմութիւնը և խորհուրդը, ՚ի դաստիարակութիւն որբւոց։

Այդ օրը զեղև զուարճութիւնից և մարմնական առհասարակ հեշտութիւններից ու բաւականութիւնից պէտք է հեռանալ, որովհետև ամենքն ևս պէտք է զբաղուեն Յիսուսի Քրիստոսի Յարութեան ուրախութեամբ, որովհետև Նորա Յարութիւնն է մեր փրկութեան և անմահութեան հզօր դրաւականը։

### ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ՝

(1) «Պատուէա՛ զնայր քո եւ զնայր, զի Բարի լինիցի զեղ եւ երկայնաւ ինչս լինիս ՚ի Վերայ երկրի»:

Հինգերորդ պատուիրանը բովանդակում է իւր մէջ Սէր, Յարգանք, Հնազանդութիւն, Երախտագիտութիւն կամ բարոյական հասունցումն:

Սէրը՝ որ Աստուծուց յետոյ որդիք պէտք է ունենան դէպի իրանց ծնօղները՝ պէտք է լինի հարազատ, հաստատուն եւ յարգանք լի:

Հարազատ՝ առանց ժառանգութեան ակնկալութեան եւ կամ առանց որ եւ իցէ մարմնական նպատակների. Հաստատուն՝ որ ոչ մի հզօր դէպք չկարողանայ լուծել եւ խզել այն սուրբ կապը, որով կապուած են որդիք ծնողաց՝ և ծնողք որդւոց հետ. Յարգանք լի՝ որ ծնողաց թշուառ դրութիւնը ամենեւին առիթ չպիտի տայ որդւոց անարգելու իրենց ծնողքը, որոց՝ յետ Աստուծոյ, պարտական են իրանց կեանքով:

Յարգանքը՝ որ որդիք պիտի ունենան դէպի իրանց ծրնողքը, պէտք է լինի անկեղծաւոր և հաստատուն, առանց ինչ ինչ նպատակների և ոչ առ երեսս. այլ զնահատելով ծնողական անփոխարինելի խնամքը, ջանքը, սէրը և աշխատանքը, որ ունեցել են իրանց վերայ և որոց երախտեաց հատուցումը պէտք է լինի իրանց պարտականութեանց մէջ առաջինը և նախադասը: Հնազանդութիւնը՝ է հետեւանք Սիրոյ և Յարգանաց, որպէս և յարգանքը՝ արդիւնք է սիրոյ. որդիք անպայման պէտք է հնազանդին իրենց ծնողաց. բնական օրէնքը այդ պարտքը դրել է որդւոց վերայ, որպէս և Առաքեալն է պատուիրում (2) «Որդիք հնազանդ լինուք ծնողաց ձերոց, զի այն է արժանն.» Եփես. 2. 1: Անհնազանդ և անստակ որդիք իրանց

կեանքով պատկերացնում են մի անկերպարան հրէշ, որից խուսափ կտայ ամենայն մի ազնիւ և պարտքն ու իրաւունքը ճանաչող անհատը:

Երախտագիտութիւնը կամ բարոյական հասունցումը՝ է ամենաազնիւ հատուցման արխուրը երախտառուի կողմից առ երախտաւորը. Ծնողք՝ յետ Աստուծոյ, առաջին երախտաւորներն են որդւոց. երախտագէտ որդիք ամենայն իրանց շահ և օգուտ յօժարութեամբ պիտի զոհեն ծնողական անկեալ, առնահարուած և թշուառ դրութիւնն ու վիճակը և անուճը վերականգնելու համար. և իրանք պէտք է մտիթարուին ու բերկրին իրանց այդ հատուցմամբ, պէտք է զուարճանայ նոցա սիրան ու հոգին, տեսնելով ծնողաց ապահով վիճակը, խաղաղ դրութիւնը, մտիթարուած կեանքը, ինչպէս խրատում է Սողոմոնն իմաստունը (3) «Որդի՛ զօրավիզ լեր ծերութեան հօրքոյ, և մի տրտմեցուցես զնա ՚ի կեանս նորա.» Եկղես. 9. 14:

Ուրեմն այս պատուիրանով Աստուած Սիրոյ, Յարգանաց, Հնազանդութեան և Երախտագիտութեան պարտք է դնում որդւոց վերայ: Որդիքը իրենց ծնօղների մէջ Աստուծոյ պատկերը պէտք է տեսնեն. Պէտք է սիրեն ծնօղներին և գնահատեն նոցա աշխատանքը, որ իրաւամբ հասնեն ծնողական աստիճանին. Ծնողաց աշխատանքը մի առ մի թուելը աւելորդ է այստեղ, որովհետեւ յայտնի է այն որդւոցը. մնում է ուրեմն ճանաչել նոյն աշխատանքը, և գնահատել և այն ոչ լոկ խօսքով միայն՝ այլ և ամենատեսակ զործքով. իսկ զործքն է Սէր, Յարգանք, Հնազանդութիւն և Երախտագիտութիւն՝ որպէս տեսանք հարեանցօրէն:

Որդիք պիտի ջանան արդարութեամբ օրէնքի վերայ հիմնած գործքի մէջ օր ըստ օրէ յաջողութիւն ձեռք բերել և չձանձրանալ. միայն որպէս զի այդ ձեռք բերած յաջողութիւնից մասն հանեն և ծնօղներին, այն է խնամք և հոգատարութիւն ունենան իրենց ծերացած և կամ աղքատ ծնողաց

վերայ: Որդիք միշտ պէտք է խորհրդածեն ճնօղական աշխատանքը, քննեն, դնահատեն և ապա ուխտեն հատուցանող լինելու նոյն աշխատանքին, նեցուկ և դաւազան լինել նոյա՝ ծերութեան և անյաջողութեան ժամանակ՝ իրենց օգտակար և խելացի կեանքով պիտի ջանան մխիթարել նոյա սիրտը ամենայն դէպքում: Ծնօղական ձակատը պիտի լինի որդւոց կեանքի առաջնորդը, այն ձակատի վերայ խելացի որդին կկարգայ իւր պարտականութիւնը. Ո՛չ մի հզօր դէպք առիթ չպիտի տայ որդւոց թողնելու ծնողքը և հեռանալու նոցանից առ միշտ: Որդին պիտի մնայ միշտ որդի և ծնօղը պիտի լինի միշտ ծնօղ: Եւ երբ որդւոց և ծնօղաց մէջ կախարակեալ այս ճշմարիտ և կատարեալ յարաբերութիւնը, այն ժամանակ և որդւոց կեանքը բարութեամբ կպսակուի և խողաղութեամբ կտևի, որովհետեւ պատուեցին ծնօղներին և ճշտութեամբ կատարեցին իրենց որդիական պարտքը. Հակառակ դէպքում՝ շատ չարեաց և ծնօղական մեղաց պատասխանատուութեան կենթարկուին. Որդիք այնքան խելացի և իմաստուն պէտք է լինին, որ ծնօղաց մեղքերն ու յանցանքները և նոցա՝ այլոց պատճառաց փնտնեն ու չարիքը, իրանք պիտի ջանան քաւել իրանց բաղմատեսակ բարեգործութեամբ. Որդիք պիտի ջանան ուղղել իրենց ծնօղաց պակասութիւնները, եթէ ձեռնհաս են՝ հատուցանել նոցա հոգևոր և մարմնաւոր պարտքերը, վերականգնել նոցա անարգութեամբ անուներ և ոսնահարութեամբ պատիւը և այս ամենը թէ Աստուծոյ և թէ մարդկանց վերաբերութեամբ. Որդիք իրանց վերայ ՚ի բնէ դրուած այս պարտիքը լրիւ պիտի լցուցանեն, համոզուելով՝ որպէս ծնօղաց մեղքի՝ նոյնպէս և բարեաց արդիւնքը անցնում և հասնում է իրանց սերունդէ սերունդ, ինչպէս վկայում է Ս. Գիրքը <sup>(4)</sup> «Հատուցանեմ զմեզս հարց՝ որդւոց իւրեանց, յերիս և ՚ի չորս ազգս ատկեաց իմոց: Եւ առնեմ օղորմութիւն ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց և որոց պահիցեն զկամս իմ» Բ. Յրին. Ե. 10: Ուրեմն որպէս որդիք

պէտք է խորհրդածեն իրանց ծնօղաց և նախահարց մեղքերը և ջանան քաւելու իրենց բարեգործութեամբ, նոյնպէս և ծնօղք պարտական են տեսանել իրենց ապագայ սերունդի կեանքը և զգուշանան մեղանչելուց, համոզուելով որ իրանց մեղքը կանցնի իրանց ապագայ սերունդի վերայ և դառն հատուցում կպահանջէ նոցանից Աստուած, որի սկզբնապատճառը կլինին իրանք ծնօղք, և այս ըստ իս կարի իրաւամբ, որովհետեւ եթէ կեանքի բոլոր պարագաների մէջ կայ մի միաւորող կապ, եթէ արեւական մանմնաւոր սերունդների կամ շառաւիղների մէջ կայ նոյնպէս մի միաւորող կապ, ինչո՞ւ չենթադրել ուրեմն որ կայ և կապ բարոյական կեանքի մէջ: Եթէ ծնօղական տիպը, կերպարանքը, բնութիւնը գրէթէ մեծ մասամբ փոխանցում է առ որդիս, պէտք է ենթադրել որ և նոցա հոգևոր նմանութիւնը՝ թէ բարին և թէ չարը, թէ արդարութիւնը և թէ մեղքը նոյնպէս կփոխանցի առ որդիս. Այս ճշմարտութիւնն էր՝ որով ոգևորուեցաւ մեր Լուսաւորիչը և իւր հօր գործած չարիքը՝ Տրդատի մօտ ծառայութեամբ ջանաց քաւել: Եթէ ուրեմն որդիք և հնարք չքաւեն իրենց փոխադարձ մեղքը, յայնդէպս նոցա մեղքը իբրև մի պարտք կշահանայ ապագայ սերունդների վերայ և Արդար Պարտապահանքը խտուութեամբ կպահանջէ զայն վերջին շառաւիղից: Ուրեմն ինչպէս ծնօղք չպէտք է դայթակղեցնեն որդւոց, նոյնպէս և որդիք պարտական են քաւել ծնօղաց մեղքը: <sup>(5)</sup> Որպէս որդիք պարտական են Սիրելու, Յարգելու, Հնազանդելու, և Նրախտագեա կամ Բարոյական հատուցանող լինելու ծնօղաց, նոյնպէս և ծնօղք պարտական են ծնելուց յետոյ ջերմ փափագանօք Մուլցանել, Խնամել և Գաստիարակել իրենց որդիքը առանց դայթակղեցնելու նոցա իրենց փաստակար յատկութիւններով և թոյլ բնաւորութեամբ, որպէս զէ մի գուցէ ապագայում վշտացնեն ու դառնացնեն իրենց կեանքը, ինչպէս խրատում է Սողոմոնը <sup>(5)</sup> Մի ծիծաղեսցիս յերես

որդուոյ քոյ. զի մի ցաւեսցիս. և ՚ի վախճանի ընդարմասցին ատամուք քո. մի՛ գուցէ կարծրասցի և ոչ հաւանեսցի քեզ և եղեցի քեզ վեշտ անձին». Եկղեւ. Լ. 10—15: (6) Խրատեան զորդիս քո և հանգուսցէ զքեզ և սացէ զզարդ անձին քուծմ. Առակ. ԽԹ. 17: Ծնօղք պարտական են չինայել որդւոց բարին և օգտակարը. պարտական են զոհել որդւոց ճշմարիտ կրթութեան և դաստիարակութեանը՝ իրենց հանգստութիւնն ու բաւականութիւնը. պարտական են մեծացնել, խնամել, պահպանել և կրթել իրենց զաւակները ոչ միայն իրանց՝ այլ և աշխարհի և Աստուծոյ արքայութեան համար, որովհետեւ որդիքը Աստուծոյ աւանդն են իրանց մօտ:

Ծնօղք պարտական են որդւոց տուած գիտութեանց մէջ նախադասել Աստուածգիտութիւնը կամ Կրօնագիտութիւնը, որ է գիտութիւն և ճանաչումն խղճի, զարգացումն հոգւոյ, ազնւութիւն սրտի և հեռուապէս պատրաստութիւն որգիանալու Աստուծոյ (7) «Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ անուցանիջք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն.» Եկղեւ. 2. 4:

Նոյնպէս և որդիք չպէտք է խնայեն ծնօղաց համար իրանց աշխատանքը. պէտք է խորհրդածեն, իմաստասիրեն ծնօղաց զրութիւնը, վիճակը և կենսական հանգամանքները և ըստ այնմ չափաւորեն իրենց մեծամեծ պահանջները, որոց կատարումը գուցէ թէ Ը՛նչէ ծնօղի սուղ զրութիւնը. Արդիք պիտի ջանան որ իրանց ստացած գիտութիւնը կամ ուսումը լինի հիմնական և յօգուտ՝ որպէս իրանց, նոյնպէս և ծնօղաց և ընկերութեան. Արդիք իրենց ուսմամբ և ստացած գիտութեամբ չպէտք է աշխատեն հեռանալ իրենց Արարչից և մոռանալ Նորան, այլ աւելի ևս պիտի մօտենան Նորան և աւելի հաստատուն շողկապով պիտի միաւորուին Նորա հեա՝ Ար է իրենց կեանքի նպատակը և որից է ամենայն բարութիւն և օգտակարութիւն. Արդիք իրենց ուսմամբ և գիտութեամբ աւելի ևս պիտի յարգեն ու պաշտեն Հայրենական Եկեղեցին և

Եկեղեցւոյ Աստուածպաշտութիւնը, անձնանուէր կերպով պիտի կատարեն Եկեղեցւոյ բոլոր պատուիրանները և որդիանան Աստուծոյ. Անհիմն և սուտ պիտի համարուի այն կրթութիւնը՝ որի հետ զուգընթաց չէ տարոււմ ճշմարիտ Աստուածգիտութեան ուսումը՝ որ է Պարտուց ճանաչումը և իրաւանց հարազատարար զործադրութիւնը: Այսպիսի որդիք բարի կենօք և խաղաղութեամբ կանցնեն իրենց օրերը, որպէս և այս բնական օրէնքին հակառակող՝ այսինքն առ Աստուած և առ ծնօղս ապերախտ և երախտամոռ զաւակները անհանգիստ կեանքով կապրեն աշխարհքումը և կզոկուեն Աստուծոյ որդիութիւնից:

Իսկ ծնօղք չպէտք է որոշեն իրենց որդիքը. այն է չպէտք է սիրեն, պատուեն, խնամեն, դաստիարակեն գեղեցիկը, վայելչակազմը, աւողջը և արհամարհեն, ատեն և անուշադիր թողնեն տղեղը, հիւանդը, կարճահասակը, կոյրը, կաղը և սապատողը, այլ ամենքի վերայ հաւասարապէս պիտի տարածեն իրենց խնամքը, հասկանալով որ իրանք Աստուծոյ պատկերն են ձևակերպում աշխարհիս երեսին որդւոց վերաբերմամբ, և ինչպէս Աստուած է որոշում, այլ բոլոր արարածոց հաւասարապէս է տալի իւր արեգակը, անձրևը և ամենայն բարիք (8) «Զի զարեգակն իւր ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց և ածէ անձրև ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց.» Մատթ. Ե. 45. Նոյնպէս պարտական են վարուել և ծնօղք, որովհետեւ որդիքն ևս իրանց պիտի նմանուեն թէ բարութեան և թէ չարութեան մէջ:

Ծնողական պարտուց են ենթարկոււմ և ծնօղաց փոխանակ կարգուած Հոգաբարձուք կամ Խնամակալք՝ զէպի որբերը, որոնք յանձնուած են իրենց խնամատարութեան և հոգատարութեան. Տէրերը՝ զէպի իրանց ծառաները. Քահանայք՝ զէպի իրանց Ժողովուրդը. Ուսուցիչները՝ զէպի իրանց աշակերտները. մանաւանդ կնքահայրերը զէպի իրանց սանիկները. Եւ փոխադարձը՝ այն է Արգիական պարտուց են ենթարկոււմ Արբերը՝ զէպի իրանց Հոգաբարձուներն ու Խնամակալները. Ծառաները՝

դէպի իրանց տէրերը. Թողովուրդը՝ դէպի իրանց քահանաները. Աշակերտները՝ դէպի իրանց ուսուցիչները, Սանիկները՝ դէպի իրանց կնքահայրերը և այլն:

Որպէս ծնողաց և որդւոց, նոյնպէս և ծնողական և որդիական պարտուց վերոյիշեալ ենթարկւողներին՝ ոչ միայն մարմնաւոր պարտականութեան շողկապը պիտի զուգէ ու կապէ իրար հետ, այլ որ գլխաւորն է հոգևորը, այն է Քարոյականը՝ առանց որոյ սոցա ամենքի շողկապը կլինի սոսկ մարմնաւոր և ուրեմն անձնական շահուց համար, որ է զայթակողութիւն, զըկանք, մեղք և յանցանք:

### ՎԵՅԵՐՈՐԴ ԳՍՏՈՒԻՐԱՆ.

«Մի սպանութիւն»:

Այս պատուիրանով Աստուած արգելում է մարդասպանութիւնը. որովհետև մարդոյ սանցծաղորութեան նպատակն է ընկերակցական և ոչ միայնակեցական կենցաղավարութիւն, որին կհասնէր նա և կզազանանար, եթէ օրէնք դնէր իրեն մարդասպանութիւնը:

Մարմնաւոր սպանութիւնը կամ մարդասպանութիւնը լինում է շատ տեսակ, ինչպէս ա. Ինքնասպանութիւն՝ որ մարդը թոյլ գտանուելով իւր կոչմանը ծառայելու, յուսահատուում է մարմնական կեանքի անյաջողութիւններէ, որոց պէտք է երկայնմտութեամբ համբերէ, ինչպէս հրամայում են Աստուածային օրէնք և պատուիրանք, չուզելով շարունակել այլ ևս իւր դառնացած ու վշտերով լի կեանքը, վերջ է դնում նորան սպանելով իրան. առանց առ վայրիկ մի խորհրդագրած լինելու, թէ ինքը ոչ թէ հանգիստ և բարեբաղդութիւն վայելելու համար է ծնուած այս աշխարհքում, այլ չարչարանք,

վեշտք, նեղութիւնք և անյաջողութիւնք կրելու՝ և երկայնամիտ համբերութեամբ դիմանալու այն չարեաց ի փառս Աստուծոյ, ըստ այնմ (1) «Երանի է ձեզ, յորժամ նախափոցեն զձեզ և հարածեսցեն. և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Յնծացէք և ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս.» Մատթ. Ե. 11, 12: (2) Մտէք ընդ նեղ դուռն, քանզի ընդարձակ է դուռն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, և բազումք են որ մասնեն ընդ նա: Քանզի անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն որ տանի ի կեանս. և սակաւք են որ գտանեն զնա.» Մատթ. Ե. 13—15: Անձուկ դուռը և նեղ ճանապարհը Յիսուս նմանացրեց յուսահատուած, անյաջող, վշտերով և դառնութեամբ լի կեանքին, որից բոլոր տիեզերքի միակ իմաստուն էակը և տէրը, որ է մարդը, չպէտք է յուսահատուի ամենեին՝ այլ ընդունէ զայն իբրև դժուարին ճանապարհ՝ ապահով և երջանիկ նաւահանգստի՝ որ է յաւիտենական կեանք: Մանաւանդ եթէ աւելացնէք սորա վերայ և այն ճշմարտութիւնը, որ չարիք, վնասք, անյաջողութիւնք և յուսահատութիւնք մեծ մասամբ ոչ թէ Աստուածանից են իջնում ի մարդիկ, այլ մարկանցից են ծընւում և յառաջ գալի, և մարդիկ պիտի նոցա առաջն առնեն եթէ հնարէ, և ոչ թէ յուսահատութեամբ վերջ տան այն կեանքին՝ որի իրաւունքը Ամենախնամ Արարչին է յատուկ և սեպհական և ոչ իրանց:

Եղևնագործութիւն կամ Ընկերասպանութիւն, որ մարդը հակառակ բոլորովին իւր կոչման՝ ոսկահարելով բնուին ի բնէ իւր վերայ դուռած ընկերսիրութեան և կարեկցութեան վնէմ պարտիքը, կամ զրդուելով նախանձից, ատելութիւնից, թշնամութիւնից և կամ զրաւուելով դրամական և բազմատեսակ շահերից՝ սպանում է ընկերին կամ օտարին, սիրելուն կամ թշնամուն՝ յազեցնելով իւր անյոգ ծարաւը նոցա արիւնով:

գ. Տղայասպանութիւն, սա վերաբերում է այն ծնողաց՝ որոնք ամուսնութիւնը համարելով լոկ յազեցնող միջոց իրանց մարմնական հեշտութեանց և ոչ թէ նպատակ որդէծնութեան և ընկերական կիսակցութեան՝ զանազան դեղորեքով ոչնչացնում են տղայի գոյաւորութիւնը արգանդի մէջ և կատարում են որդէսպանութեան անքաւելի յանցանքը, անթողլի մեղքը։ Չե՞ն սարսափում արդեօք այդպիսի ծնողք այն սոսկալի Գատաորից, որի առաջին նոցա սպանած որդիք յետ պիտի պահանջեն իրենց այն կեանքը, որ մեռցրին ծնողները։ Ի՞նչ զարհուրելի տեսարան և ի՞նչ քսամնեցուցիչ դրութիւն որդէսպան ծնողներին։ Բարեք չէ՞ր արդեօք ամենեւին որդիք չուզող ծնողներին՝ չամուսնանալ և կամ իմաստաբար չէ՞ր արդեօք քիչ որդիք ուզող ծնողներին՝ պահել ողջախոհութեան կամ որ նոյն է չափաւորութեան սուրբ կանոնը։ Թող մտածեն սորս վերայ ժամանակակից ծնողները։

դ. Մենամարտական սպանութիւն ասելն, որով մարդը իւր անարգուած պատիւը վերականգնելու նկատմամբ և կամ վրէժխնդրութիւնից դրդուած՝ հրաւիրում է ընկերին մենամարտութեան, և սպանում է կամ սպանում է։ Խորհրդաւոր չէ՞ր լինի արդեօք և մեծարելի, եթէ հոգեւոր լինէր այդ մենամարտութիւնը, ոչ յանուն պատուոյ, վրիժուց և սնտոեաց՝ այլ յանուն Յիսուսի՝ այն է, որ մենամարտողները Աշխարհի խաղաղարարի Սիրոյն զոհելով իրենց կիրք և վրէժք և պատիւք՝ փոխանակ սպանութեամբ՝ կենդանի փարէին և զրկէին զիրար սիրոյ համբուրիւ, միմեանց ներողամտաբար խոնարհուելով։

ե. Ակամայ կամ պատահական սպանութիւն, որ գործւում է միայն անզգուշութեամբ և ոչ չարախորհուրդ նպատակներով։ այսպիսի դէպքում սպանողը ըստ Ա. գրոց ազատ է համարւում սպանութեան մեղքից. ըստ այնմ<sup>(4)</sup> «Այս սահման եղիցի ամենայն սպանողի, որ փախիցէ անդ և ապրեացի։

որոք հարկանիցէ զընկեր իւր ակամայ, և նա ոչ ատեայր զնա յերեկն և յեռանդն» Օրին. ԺԹ. 4. և այս պատճառաւ ի հնումն ասպատանարաններ և տաճարներ կային, ուր փախչում էին ակամայ սպանողները և ազատուում էին ըստ Աստուածադատի օրինի։

Սակայն Յիսուս՝ որ միշտ հոգեւորով էր պարարում մարդկանց սրտերը, լրացրեց այս վեցերորդ պատուիրանը, ուսուցանելով որ սպանութիւնը չպէտք է հասկանանք միայն կեանքից զրկելը և կամ արիւն թափելը, այլ ամենաթեթեւ խօսքը անգամ սպանութիւն պէտք է համարել, եթէ նպատակն է վրէժխնդրութիւն և չար հատուցումն ընկերին, ինչպէս և ասում է ինքը՝ Ճմարտութեան քարոզը<sup>(5)</sup> «Լուարուք զի ապացատաջնոցն՝ թէ մի սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։ Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի ի գեհն հրոյն։ Եթէ մատուցանիցես զպատարագ քո՝ ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունի ինչ խէթ դքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուցիր զպատարագն քո» Մատթ. Ե. 21—25։ Ասում է և Առաքեալը<sup>(6)</sup> Ամենայն՝ որ ատեայր զեղբայր իւր՝ մարդասպան է» Ա. Յովհ. Գ. 15. Սա է ահաւասիկ հոգեպէս կամ բարոյապէս սպանութիւնը։

Սորանից եզրակացնում ենք որ ամենաթեթեւ խօսքը՝ որ նպատակ ունի վրէժխնդրութիւն, այն է խայթելու ընկերի սիրտը, վերաւորելու նորա հոգին և վրդովելու հոգեկան խաղաղութիւնը՝ սպանութիւն է, որովհետեւ վրէժխնդիր հոգեով է ասուած և այն խօսքը չպիտի մոռացուի Աստուծոյ անհուն իմաստութեան առաջ, այլ Աստուածային Արդարադատութիւնը

հաշիւ պիտի պահանջէ ասողից ասած խօսքի համար, որովհետեւ վրէժխնդրութեան հատուցումը Աստուծոյ է պատկանում և ոչ մեզ, ըստ այնմ (7) «Մի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք. այլ առք տեղի բարկութեան. քանզի գրեալ է՝ իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ Տէր.» Հռովմ. ԺԲ. 19:

Ծնողք իրանց լեզուով, վարմունքով և կենցաղավարութեամբ ոչ միայն մարդասպանութիւն են սորվեցնում իրենց որդւոց, այլ նաև մարդասպաններ են մեծացնում իրենց զաւակները. ինչպէս. ա. Նոքա իրենց որդւոց և զաւակաց իւրաքանչիւր ինքնակամութիւնը կատարելով, դազանութիւն են սերմանում նոցա սրտի և հոգւոյ մէջ. որովհետեւ ժամանակից ինչ յետոյ երբ նոյն մանուկ զաւակները մեծանում են և իրանց կամքը կամ պահանջը չէ կատարում, նոքա արդէն պատրաստ են արիւնի մէջ թաթախելու իրանց ձեռքերը և կամ ամենայն անաղնիւ միջոցների դիմելու, որպէս զի կատարուի իրենց կամքը: Բ. Նոքա որդւոց ներկայութեանը զրկում են վարձկանին իւր վարձից և անպատիւ ու անաղնիւ վարմունքով յուսահատացնում են խեղճ վարձուորին. իրանց այս զրկանաց և անաղնիւ վարմունքի ձեւը վերցնելով որդիք, զաղափար են կազմում իրենց և հետագէտ մարդասպաններ են պատրաստում, որովհետեւ զրկողութիւնը մարդասպանութիւն է, (8) «Որ հեղու զարիւն և որ զրկանս առնէ վարձկանի, եղբարք են.» Եկղես. 1. 27:

Գ. Նոքա իրենց առևտրական, դատաստանական, կալուածային և այլ շատ տեսակ գործքերի արդիւնաւոր շահուց համար, որդւոց ներկայութեանը և կամ նոցա յայտնի զրկում են շատերին, դատապարտում են դատաւորների առաջ, մինչև անգամ մարդասպաններ են կաշառում մեծ գումարներով, իրանց հակառակորդների կեանքը աշխարհի երեսից վերցնելու նպատակաւ. Այս բոլոր եղեռնագործութիւնքը տեսնելով որդիք՝ սովորում են դեռ մանկական հասակից. ծնողաց այս դաժան

գործքը յասկութիւն և բնութիւն կազմելով իրենց որդիք՝ մեծանում են և դառնում նոյնպիսի հրէշներ և աւելի ևս քան ծնողները, և պատրաստում են իրենց շահը և վաստակը ընկերի թափած արեան կաթիններով բազմապատկել: Գ. Նոքա հաւատում են իրենց որդիքը օտարների դատարարութեանը, իրանք խնայում են իրենց ժամանակը, ափսոսում են զոհել իրենց հանգստութիւնը և զուարճութիւնները որդւոց կրթութեանը և դաստիարակութեանը, առանց ընտրութեան շատ անգամ, վարձում են գուլբերնէօրներ և գուլբերնանտկաներ և հաւատում են նոցա անպայման իրենց մատաղ որդիքը. որ գուլբերնէօրը և կամ որ գուլբերնանտկեն արդեօք ծնողից աւելի կարող է սիրել և կրթել զաւակներին. չէ՞ որ յանցանք է ծնողքի կողմից, իւր անձնական բաւականութեանց և զուարճութեանց համար ափսոսալ ժամակը որդւոց դաստիարակութեանը նուիրելու. կարող է արդեօք օտար դաստիարակը ներշնչել նոցա որդւոց և զաւակաց սրտի մէջ ազգութեան և կրօնի սէրը և գաղափարը. չէ՞ որ որդիք՝ օտար դաստիարակի կամ դաստիարակուհւոյ ձեռքի տակ խորթ և անհարազատ, անպէտք և մեռեալ անդամներ կպատրաստուեն որպէս իրենց ազգի՝ նոյնպէս և Եկեղեցւոյ համար, և վերջապէս որ գուլբերնէօրը կամ գուլբերնանտկեն ծնողից աւելի կը մտածէ իրեն յանձնուած օտար մանուկների բարւոք կրթութեան համար. ժամանակ չունեն մեր բարձր դասակարգի մայրերը պարսպել իրենց հարազատ որդւոց դաստիարակութեամբ. ի՞նչ է նոցա գործը. սյցելութիւններ, հրաւերքներ, թատրոններ, պարերեկոններ, դիմակահանդէսներ, զբօսանքներ, զանազան դրամական խաղեր՝ ինչպէս թուղթ, լոտօ և այլն. Ահաւասիկ արիստոկրատ ծնող մօր զբաղմունքը, որով խեղճը զբաղուելով ժամանակ չունի դաստիարակելու իւր հարազատ որդիքը և յանձնում է անհարազատ մայրերին ու հայրերին. անմեղ երեխայոց սէրը բաժանուում է սորանով երկուսի մէջ՝ հարա-

զատ և անհարազատ ծնօղների մէջ. երեխաները որքան սիրում են և յարգում ծնօղին, նոյնքան ևս սիրում են և մեծարում գուժերնետրին և գուժերնանտկին. ինչո՞ւ ուրեմն այդ ծնօղք ծախսեցին իրենց ծնօղների գումարներից ուսման և կրթութեան համար. ինչո՞ւ արդեօք տարիներով մաշուեցան ուսումնարաններում, մի՞թէ նորա համար որ զուարճանան միայն և որդւոց կրթութիւնը օտար դաստիարակի յանձնեն, ոչ ոչ շատ են սխալուում մեր ժամանակակից արիստոկրատ համարուած ծնօղները իրենց այս ընթացքի մէջ: Իհա՞ն արդեօք ծնօղք, թէ իրենց որդիքը ի՞նչ են սովորում գուժերնանտկաներից. վաճառական արիստոկրատը գիտէ՞ արդեօք պատճառը, թէ ինչո՞ւ որդիքը չեն հաւանում իրեն մի քանի ժամանակից յետոյ, ոչ իւր լեզուն, ոչ իւր կեանքի ձևը, ոչ իւր ազգային սովորութիւնը, եթէ չգիտէ, թող իմանայ, որ պատճառը օտար դաստիարակն է, որին հաւատացել է իւր որդիքը. Ծնօղ մայրը ամենեւին իրաւունք չունի խնայելու որդուն այն՝ ինչ որ ինքը ստացել է և ունէ նորա համար. նա ստացել է ուսում և կրթութիւն, ոչ իւր համար միայն, այլ և իւր որդւոց համար. նա պարտական է, այդ կրթութիւնը տալու իւր որդուն. նա պարտական է ընկերանալ իւր որդւոց հետ, խաղալ նոցա հետ, զբօսնել, զբաղուել և մնալ միշտ մայր նոցա և սկզբնական և ճշմարիտ դաստիարակ. նա պարտական է զոհել իւր բոլոր պարտականութիւնները որդւոց դաստիարակութեան համար, ներշնչել նոցա մէջ ազգասիրութիւն և կրօնասիրութիւն, ընկերսիրութիւն և Աստուածասիրութիւն և երախտագիտութեան անկիւ զգացմունքը. նա պարտական է օրական հաշիւ պահանջել իւր որդւոց՝ նորա ուսումնարանական կեանքի մասին և ինքը եթէ ունի հնարաւորութիւն՝ օգնէ նորան ուսման գործումը. վերջապէս խելացի և կրթեալ մօր զբաղմունքը պէտք է լինեն իւր որդիքը, իւր ամուսինը, իւր տունը և ոչ արտաքին զուարճութիւնները. խելացի և իմաստուն

մայրը, անպատուութիւն պիտի համարէ իրան՝ իւր որդիքը օտար գուժերնանտկաներին յանձնելը. և եթէ ապագայումը նա լայ է լինում՝ պատճառն այն է, որ որդուն՝ սկզբնական կրթութիւնը ինքը չտուեց, այլ տուեց օտարը. ի՞նչ կայ հարազատ և որդէսէր մօր համար աշխարհիս երեսին քաղցր և գրաւիչ՝ քան եթէ որդիքը և նոցա հետ իւր զբաղմունքը. ինչո՞ւ ուրեմն մայրերը փախչում են իրանց այս քաղցր պարտականութիւնից. թող խորհրդածեն արիստոկրատ մայրերը այս խնդրի վերայ. ևս յոյս ունեն, որ կզգան ճշմարիտը և կորոշեն օգտակարը՝ վնասակարից:

ե. Մոքա խստութեան փոխանակ՝ զգուժում են և փայփայում որդւոց շատ պահասաւոր և վնասակար կողմերը կամ յատկութիւնները, որով երեխան սասնում է ինքնակամութիւն և կամակորութիւն հասարակ. Չափաւորութեան փոխանակ՝ Շուայլութիւն են սովորեցնում իրենց որդւոց, թէ զարդարանքների, թէ մեծագին հանդերձների և թէ ամենայն պճնասիրութեան մէջ. դեռ մանուկ հասակում զարթեցնում են որդւոց մէջ սէր գէպի պճնասիրութիւնը, զարդարելով նոցա պարանոցները՝ մանակներով, ականջները՝ գինտերով, բաղուկները՝ ապարանջաններով, մատները՝ օղերով և մատանիներով, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ շուայլութեան շարժառիթներ. Բարւոք էր և օգտակար այդ ակնեղէնների և ոսկեղէնների փոխանակ, զարդարել նոցա սիրտը և հոգին ընկերսիրութիւնով, կարեկցութիւնով, համեստութիւնով և պարկեշտութիւնով, ամօթխածութեամբ, ազգի և եկեղեցւոյ, Ծնօղի և Աստուծոյ սիրով և տենչանք. Մոքա են օգտակար և անուսոյնող զարդարանքները, որոնցմով պիտի փայլէ խելացի և իմաստուն չայ ծնօղի որդին և զաւակը, մանաւանդ աղջիկը: Հագցնում են որդւոց մեծագին և բարդ հանդերձներ, փոխանակ պարզ և անպաճոյճ շորերի և գորանով պատճառ են տալի որդւոց մտածելու միայն իրանց զարդարանքների և հանդերձների վերայ: Արգելելու

փոխանակ՝ թոյլատրում են նոցա շոպյութեանց և դուարձու-  
թեանց տեղերը՝ ինչպէս թատրոնները, դիմակահանդէսները,  
պարերեկոնները, երգերածիշտները, որտեղից նոքա օգտի փո-  
խանակ վնաս են դուրս բերում, որովհետեւ ժամանակը չէ,  
դեռ վաղ է նոցա հասակի համար: Բարեւոք կլինէր, եթէ ծը-  
նօղք վերոյիշեալ տեղերը թոյլատրելու փոխանակ՝ առաջնոր-  
դէին նոցա դէպի Աստուծոյ տաճարները, հիւանդանոցները,  
թշուաւ և աղքատ դերդաստունները, դէպի վշտացածներն ու  
սգաւորները և մինչև անգամ բանտերը, պատմելով որդւոց այդ  
բոլորի նշանակութիւնները. Սա այնպիսի կենդանի դաս կլինի  
երեսմաների համար, որի օգուտը միշտ անկասկած է և հաս-  
տատուն. Սորա համար է բազմափորձ Սողովման իմաստնոյ  
խօսքը թէ (9) «Սիրտ իմաստնոց՝ ՚ի տան սգոյ. և օրտտ անզգա-  
մաց՝ ՚ի տան ուրախութեան: Կաւ է երթալ ՚ի տուն սգոյ, քան  
՚ի տուն արբեցութեան. վանդի այն է կատարած ամենայն  
մարդոյ.» Թող. Է. 6. 3:

Փոխանակ վերոյիշեալ վնասակար ուղղութիւններին՝  
որոնցմով ծնօղք, չափազանցութիւն չպէտք է համարուի եթէ  
ասենք, սպանում են իրենց որդւոց մէջ ազնուութիւնը, կա-  
րեկցութիւնը, չափաւորութիւնը և այլ շատ տեսակ առաքի-  
ւի յատկութիւններ՝ պէտք է և պարտական են սովորեցնել,  
վարժեցնել և դաստիարակել նոցա Աստուածսիրութեան և  
Ընկերսիրութեան, Ազգասիրութեան և Մեղախորութեան,  
Նկեղեցասիրութեան և Կրօնասիրութեան և ամենայն կարեկ-  
ցական և բարեգործական յատկութիւնների մէջ, սոքա են  
Աստուածային պատգամք, որ պիտի ուսուցանեն ծնօղք իրենց  
որդւոց, միշտ և ամեն ժամանակ, ինչպէս պատուիրում է Ս.  
գիրքը (10) «Աւ ուսուցիք որդւոց ձերոց խօսել զտաս ՚ի նս-  
տիլ ՚ի տան, ՚ի դնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել. և  
գրեսջիք զտաս ՚ի վերայ սեանց տանց ձերոց և ՚ի գրունս ձեր  
զե բաղմօրեսոյք լինիջեք ՚ի վերայ երկրի.» Բ. Օր. Ժ. 19—21:

Մեծիկների վերոյիշեալ պակասուոր և սխալ վարմանց  
պայմաններով են ընթանում և շատերը իրենց ընկերների,  
թշնամիների, տէրերի, ծառաների, ամուսինների, աշակերտ-  
ների, ուսուցիչների, մշակների և այլոց հետ. և ուրեմն թէ-  
պէտ սրով չեն սպանում և արիւնհեղութիւն չէ լինում, սա-  
կայն թունաւորում են և զայթակրեցնում սիրաբ, հոգին և  
ամբողջ կեանքը. և այս ձև մարդասպանութիւնը չարագոյն  
է, քան սրով սպանութիւնը:

Բացի ձեռքի կամ սրի, լեզուի և վարմանց՝ սպանութիւնը  
լինում է և սրտով ու մտքով. եթէ մէկը ցանկանում է սրտով  
իւր ընկերի կամ թշնամոյ ձախորդութիւնը և անկումը. կա-  
տարուի թէ ոչ, միևնոյն է. նորա սրտի սպանողական ցանկու-  
թիւնը արդէն սասնում է կատարումը. հետևապէս այնպիսին  
սրտով մարդասպան է, որովհետեւ նա ցանկանում էր կատա-  
րումը, և եթէ կատարուէր՝ նա պիտի ուրախանար, հասած  
համարուելով իւր չար նպատակին: Նոյնպէս և նա՝ որ մտա-  
ծում է զըկել ընկերին կամ թշնամուն, սենզութեան զանա-  
զան դարաններ պատրաստելով ընկերի համար, կատարուի թէ  
ոչ, միևնոյն է. նորա մտածած չարիքը արդէն կատարուած են  
իւր համար, հետևապէս այնպիսին մտքով մարդասպան է.  
որովհետեւ եթէ յաջողուէր նորա չարախորհուրդ մտածու-  
թիւնը, նա կուրախանար, հասած համարուելով իւր չար  
նպատակին՝ որ էր սպանութիւն:

Սոքա են ահաւասիկ այն հզօր պատճառները, որոնք հե-  
ռու են պահում մեզ մեր Նրինաւոր Հօրից, որոնք զառնաց-  
նում են մեր Աստուծոյ կամքի քաղցրութիւնը դէպի մեզ,  
որոնք Աստուծոյ շայրական սէրը, Արարչական խնամքը, Նա-  
խախնամական դուրժ՝ փոխում են յատկութիւն և յանտարբե-  
րութիւն. Սոքա են պատճառներ՝ որոնցմով մեր ազօթքը, մեր  
պահքը, մեր ողորմութեան տուրքերը անցնում են ՚ի զուր.  
Սոքա են պատճառներ՝ որոնցմով մերժում է մեզ Աստուած և

է Լուսմ մեր լացի ու ազաղակի ձայները, ինչպէս ասում է մեզ ինքը Աստուած մարգարէի բերանով<sup>(1)</sup> «Եւ ասեն՝ զի է զի պահեցաք մեք՝ և դու ոչ տեսեր. խոնարհեցուցաք զանձինս մեր՝ և դու ոչ դիտացեր. զի յաւուրս պահոց ձերոց գտանին կամք ձեր կատարեալք. և կսկծեցուցանիցէք զամենեւեան. որք ընդ ձեռամբ ձերով են. ՚ի հակառակութիւնս և ՚ի կռիւս պահէք՝ և կռփէք զանաւազն. իսկ զի՞նչ պիտոյ է ինձ այն պիտոյ աւուր պահք. դալ՝ բողոքել ձեզ առ իս՝ և ինձ ոչ լսել ձեզ:» Եսայ. ԾԸ. 1—5):

### ԵՕԹՒՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Մի՛ շար:

Այս պատուիրանը արգելում է պոռնիկութիւնը կամ շնութիւնը, պաշտպանելով ամուսինների փոխադարձ հարազատութիւնն ու հաւատարմութիւնը. իսկ երիտասարդներին ողջախոհութիւն սովորցնելով, որովհետեւ շնութիւնը ամենագարշելի յանցանքներից մինն է և է ամօթալի ուխտազանցութիւն. նա խախտում է այն սուրբ ուխտը՝ որով զուգաւորութեան երկու լծակիցք Աստուածազիր սուրբ ամուսնութեամբ: Ծնութիւնն է անհաւատարմութիւն, որ յառաջ է գալի այն սուրբ սիրոյ բացակայութիւնից, որ Քրիստոս լուսն է անուանում բոլոր օրէկներին<sup>(2)</sup> «Արուսն օրինաց՝ սէր է:»

Ծնութիւնից կամ ամուսնական անհաւատարմութիւնից ծնանում են ընտանեկան կամ ամուսնական կեանքի երջանկութիւնը վաղուց, միտող ու սեւացնող դառն հետեանքներ, որպիսիք են անբաւականութիւնը, կռիւներ ու վէճեր, բանբասանք, բողոքներ և վերջապէս քակաւումն կամ բաժանումն ամուսնաց, մինչև անգամ և ոճրագործ սպանութեան: Ի՞նչ

պատասխան ունեն տալու շնացող ամուսինները իրենց խղճի և Աստուծոյ առաջ, երբ որդիքը թողնելով անխնամ և առանց դաստիարակութեան, խօսքս ճշմարիտ դաստիարակութեան վերայ է, զբաղուած են իրանց այդ գաչեր ու գարշելի տափանքներով. կենդանի օրինակ տալով որբուց նոյնը անելու, նոյնպէս վարուելու իրենց կատարեալ հասակն առած ժամանակ և յետոյ ինչու են զարմանում, երբ Աստուածային արդար նախանձն ու վրէժխնդրութիւնը հարկանում է նոցա ապագայ սերունդը, ըստ այնմ<sup>(3)</sup> «Աստուած նախանձոս եմ ես, հասուցանեմ զմեզս հարց՝ որբուց իւրեանց, յերխ և ՚ի չորս ազգս ատելեաց իմոց,» որպէս և բարի և Աստուածամանն ծնողաց ապագայ սերունդին խոստանում է իւր ողորմութիւնը, ըստ այնմ<sup>(4)</sup> «Եւ ասեմ որբութիւն ՚ի հազար ազգս սիրելեաց իմոց և որոց պահիցեն զկամս իմ:» Երկ. Սրին. Ե. 10. Այս մտքով է և Սողոմոնի նախազուշակ սպառնալիքը<sup>(5)</sup> «Թուուրք ամբարշտոց ոչ բազմաբառակեցեն զճիւղս:» Եկղես. Խ. 15: Ծնութիւնը կամ Պոռնիկութիւնը և կամ ամուսնական անհաւատարմութիւնը այնքան խիստ և սններելի յանցանքներ են, որոց մասին Ս. Քրիքը լի է պատուհասի սպառնալիքներով. ինչպէս<sup>(6)</sup> «Եւ այր եթէ շնացի ընդ առնակնօջ, կամ շնացէ ընդ կնօջ ընկերի իւրոյ՝ մահու մեռցի և շնացոյն և շնացեալն:» Ա. Ե. 10. <sup>(7)</sup> «Փախերուք ՚ի պոռնիկութենէ. զամենայն մեղս, զոր և գործէ մարդ, արտաքոյ մարմնոյ է. իսկ որ պոռնիկի՝ յիւր մարմին մեղանչէ:» Ա. կորնթ. Զ. 18. Պոռնիկներն ու շնացողները զրկում են Աստուծոյ արքայութիւնը մանելու իրաւունքից, ինչպէս ուսուցանում է մեզ Առաքեալը<sup>(8)</sup> «Ոչ պոռնիկք և ոչ շունք . . . զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:» Ա. կորնթ. Զ. 10. Ծնացող բնաւորութիւն ունեցողը՝ է կատարեալ հիւանդ և մինչև անգամ մեռեալ անգամ ընկերական կեանքի համար. նորա հոգեկան ոյժը մեռնում է, ընդունակութիւնները թմրում են բոլորովին, նորա մէջ խեղդ-

ուում են բնաւին կարեկցութիւնը, Գութը և խորհուրդներէ սրբութիւնը. նա հեռանում է միշտ խոկուն և խորհուն, զգաստ և գործող անհասնելից և կամ սիրում է առանձնութիւն որի մէջ իւր մտքերի հոսանքը տանում են նորան միշտ դէպի շնութեան աշխարհը և կամ շտապում է դէպի շնացեալները, իւր տափանքները, յագեցնելու: Սա այնպիսի մի ախտ է՝ որով հիւանդացած անհատը այլ ևս ընդունակ չէ խորհելու և կատարելու իւր առ Ստուած և առ ընկերն ունեցած սուրբ և վսեմ պարտականութիւնները:

Շնութեան կամ Բողջախոհութեան սպանիչ միակ միջոցն է Ողջախոհութիւնը, ուրիշ խօսքով ասել Պահեցողութիւն կամ նուաճումն Սրտի և Ստաց. Ողջախոհութեան վերաբերեալ շատ իմաստնալից խրատներ է տալիս երիտասարդներին՝ կեանքի ամենատեսակ հանգամանքներում բազմափորձ Սողովման իմաստունը, ինչպէս կտեսնեմք այժմ և հետևաբար այս զլեռնյա մէջ. (9) «Մի հայեր ընդ կին չար: Զի մեղը կաթէ ՚ի շրթանց կնոջ պոռնկի. որ առ ժամանակ մի պարարէ գլխն քո: Բայց յետոյ դառնագոյն ևս գտցես քան զլեղն. և սրեալ առաւել քան զսուր երկսայրի.» Առակ. Ե. 2—5: (10) «Որդեակ, մի յաղթեսցէ քեզ գեղոյ ցանկութիւն. և մի՛ ըմբռնեսցիս աչօք քովք. և մի՛ յափշտակեսցիս արտեանամբք նորա.» Առակ. Զ. 25: (11) «Մի տացես կնոջ զզօրութիւն անձի քո. զի մի՛ հասցէ ՚ի վերայ զօրութեան քո՝ և ամաչեցուցէ զքեզ.» Առակ. Թ. 2:

Ուրեմն ողջախոհ՝ որ վճիռ կզրէ իրեն Պահել իւր սրտի ցանկութիւնները և կամ Սանձել իւր մտքի հոսանքը կամ թռիչքը. նա՛ որ օրէնք կգնէ իրեն սուրբը անսուրբ շնայելու երբէք և կխորշէ դրդափչ և գայթակղեցուցիչ տեղերից և անձնաւորութիւններից. նա՛ որ չափաւորութեան կանոնին կենթարկի իւր շատյլ բնաւորութիւնն ու կամքը և վերջապէս նա՛ որ իւր մտաւոր աչքերը կդարձնէ երբեմն ևս իւր Ստեղծողի և իւր կոչման վերայ, քննելով և խորհրդածելով իւր գոյութեան

պատճառը, բնական է, որ այնպիսին կյաղթէ չարին իւր բարի խորհրդական քննադատութեամբ:

Եւ թէպէտ Ս. Գիրքը Շնութիւնը կամ Պոռնկութիւնը՝ իբրև ամենամեծ յանցանք, սարսափելի պատիժներով է դատապարտում, սակայն Յիսուս՝ մարդկային վսեմ և բարձր հոգևոր և մարմնաւոր կեանքի նպատակի քայքայումն ու խախտումն նկատելով այդ ախտի մէջ՝ հաստատուն չափ սահմանեց իւր Աստուածային խօսքերով (12) «Ուսարուք ապաքէն զի ասացաւ արածնոցն մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ թէ ամենայն որ հայի ՚ի կին մարդ առ ՚ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ նա ընդ նմա ՚ի սրտի իւրում.» Մատթ. Ե. 27—28: Ուրեմն եթէ մէկը տափական ցանկութեամբ կնայի կնոջ վերայ, նա իւր սրտում արդէն մեղանշած է համարւում. ինչպէս սպանութիւնը կատարւում է լոկ սրտի չարակամութեամբ, նոյնպէս և շնութիւնը կատարւում է լոկ աչքի տեսութեամբ և սրտի գոյթակղութեամբ: Սորանից հետևում է ուրեմն, որ մարդը այնքան բարձր պիտի դասէ զնքը և պիտի լինի այն աստիճան ողջախոհ և լրջամիտ, որ իւր բնութիւնը սանձահարուած պահելով, տեղեք չպիտի տայ ընկճուելու կերպարանաց գեղեցկութեան, մտաց չարախորհուրդ ընթացից և սրտի գայթակղութեան տակ. նա՛ իբրև բարձր էակ և հանձարեղ զոյացութիւն և՛ բարձրաթուիչ հայեացքով պիտի նայէ ամենքի վերայ, ընդունելով և համարելով նոցա իբրև իւր հայր, մայր, եղբայր, քոյր և որդի. և ուրեմն սրտով ոնգամ ցանկանալու իրաւունք չպիտի տայ իրեն, որովհետև սրտի ցանկութիւնը հաւասար է գործի կատարմանը. ցանկանալ սրտով, միևնոյն է թէ հնարաւոր դէպքում սրտի ցանկացածը կատարել. սորանով մեղքը արդէն կատարուած է համարւում:

Այս պատուիրանը չէ վերաբերում միայն չամուսնացողներին, այլ և ամուսնացեալներին, ինչպէս տեսանք: Մարդ և կին իրենց ամուսնական կեանքը չպիտի համարեն լոկ միջոց հեշտա-

սիրութեան կամ տուփական ցանկութիւնները լրուցանելու. ոչ այդ պարզ անասնական կլինէր. այլ ամուսինների հայեացքը դէպի ամուսնական շողկապը, պիտի լինի աւելի վնասէ և բարձր նպատակաւ. Այդ նպատակն է Կենակցութիւն և Որդէծնութիւն. Զատեց Աստուած մեր նախածնողաց և այլ նահապետաց թէ (13) «Տուփական ցանկութեամբ ձերով յագեցարուք,» այլ ասաց «Աձեցէք և բազմացարուք,» իսկ աճիլը և բազմանալը միայն որդէծնութեամբ պէտք է հասկանանք և այն ոչ այլ կերպ, բայց եթէ ամուսնական կենակցութիւնից. Ուրեմն ամուսինները պէտք է մտածեն և խորհրդածեն որ իրանց ամուսնական միաւորութիւնը կամ շողկապը ոչ թէ տուփական ցանկութիւնները յագեցնելու նպատակն ունի, այլ նորա նպատակն է ընկերական Կենակցութիւն և Որդէծնութիւն: Այն ամուսինները որոնք ամուսնանում են լոկ առաջին նպատակաւ և չեն կամենում որդէծնութիւնը, դատապարտուած են արդէն և պատասխանատու՝ Աստուծոյ առաջին, որովհետև ոչ միայն չընդունեցին և չիրագործեցին, այլ և մերժեցին և կոծեցին Աստուածային օրինաց սահմանը և կանոնը:

Ծնութիւնը կամ պոռնկութիւնը կարող է լինել և՛ համբուրիւ, գրկախառնութեամբ, բազմատեսակ շոշափմունքներով, անամթ և չարախորհուրդ նայուածքով, խօսակցութեամբ և մտքով:

Ծնութիւնը յառաջ է գալիս անգործութիւնից կամ ծուրութիւնից, պարերից կամ կաքաներից, շոյլ զուարճութիւններից և զուարճալի տեղեր՝ ինչպէս պարերեկոներ, թատրոններ, դիմակահանդէսներ, երգերածիշտներ և այլ տեղեր յաճախելուց. Թէպէտ վերը յիշուած ձևերն ու այս տեղերը կարող են լինել և կամ են սուրբ և օգտակար նպատակներով. սակայն դոքա գայթակղութեան միջոցներ են, որ գրգռելով մարդուն իւր խաղաղ գրութեան մէջ, հանում են նոյն գրութիւնից և հասցնում են շնութեան աստիճանին: Թոյլ բնուո-

րութեան տէր երիտասարդները չէին սխալուի մեծ փորձերով զտուած Սողովմոն իմաստնոյ խօսքերին առ ժամանակ մի աշակերտել. նա ասում է (14) «Առ երգեցիկս մի կանխեր, զի մի լուիցես զայն. մի գուցէ կորնչիցիս յազգութենէ նորա. ընդ կոյս մի պշուր, մի՛ գուցէ գայթակղեսցիս ի գեղ նորա.» Եկղեա. Թ. 4—5:

Ոչինչ չկայ չար և վատ, որովհետև ամենայն ինչ բարի է ոտեղծուած Ամենաբարի Արարչից և բարի նորատակաւ և յօգուտ մարդկան. Սակայն մարդոյ միտքը՝ որ մանկութիւնից չարի խնամոց տակ է հաստատուած, նա է փոխում բարւոյ նշանակութիւնը դէպի չարն. Սորանից հետևում է նախ՝ որ մարդը ամենայն մի իրականութիւն և երևոյթ պիտի ընդունէ սուրբ մտքով, չնայելով որ գրգռիչ և գայթակղեցուցիչ է. իսկ երկիրորդ՝ եթէ ամենայն զրկանք, հրապոյրք և գայթակղութեան բիւրատեսակ պատճառները նա չէ կարող ստանութեամբ ընդունելու, առանց և ոչ մազ մի գայթակղութեան, հիմնուելով իւր բնութեան թուրութեան վերայ՝ այն դէպքում, նա պէտք է հեռացնի իրան այդպիսի գրգռիչ և գայթակղեցուցիչ երևոյթներից և իրականութիւնից, որպէս զի չընկնի մեղքի մէջ, որպէս փորձուած իմաստունն է խրատում (15) «Ծրարիցէ՛ որ զհուր ի գոգ՝ և զհանդերձն ոչ այրիցէ. կամ գնայցէ՛ որ ի վերայ կայծականց հրոյ, և զոտս իւր ոչ խարչիցէ.» Առակ. 9. 27—28:

**ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ.**

Սէ՛ գոշանար: Սիւնի զոջրոտա, մամեյ յոմ ասորար, իմաստի զնամեյ որթօղ, իցմաստիցա զուամնցան թօ զ Այս պատու իրանը արդելում է գողութիւն անելը, պաշտպանելով չափաւորութիւնը և արդար վատասկով ձեռք բերած

աշխատանքը. Որովհետև եթէ մարդը իւր դրութեամբ բաւականանայ և չափաւորութեան կանոնով ընթանայ՝ հետևաբար նորա վաստակը արդար կլինի. իսկ եթէ անգահութեան ցանկայ և կամ շոյլ կենցաղավարութեան պատճառաւ արքատութեան հասած լինի՝ յայնդէպս նա պէտք է զրկէ ուրիշն և գողանայ. իսկ գողութեան մէջ ոչ արդար վաստակ և ոչ չափաւորութիւն է երևում: Մարդոյ կեանքի նպատակն է Աշխատութիւն և Աստուած կամ Աշխատութիւն յԱստուած կամ յԸնկերն. Այն ինչ շատերը իրանց կեանքի նպատակ են համարում Աշխատութիւն և Անձն կամ Աշխատութիւն յԱնձն և ոչ յԸնկերն:

ա. Աշխատութիւն յԱստուած կամ յԸնկերն՝ այն է, որ մարդը իբրև արարած Արարչի՝ կախում ունի նորանից և իբրև Ընկեր իւր նմանների՝ կապ ունի նոցա հետ. Աւրեմն նորա աշխատութեան նպատակը պիտի լինի՝ փառք և գոհութիւն Արարչին, իբրև Հասուցում և Յայտարար իւր Յրախտագիտութեան՝ առ անասման բարիքն Աստուծոյ և Օգնութիւն և Աէր կարեկցական առ ընկերն, իբրև Պատուիրանապահութեան և Պարտակատարութեան Ճշմարիտ նշանարան. որպէս ուսանում ենք Ս. Աւետարանից (1) «Սիրեցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտայ քոց և զընկերքո իբրև զանձն քո.» Դուկ. Ժ. 27—28:

Մարդը պարտական է աշխատել, որովհետև դորա համար իսկ ծնուած է. և աշխատանքը պիտի լինի հոգևոր և մարմնաւոր, որովհետև մարդը հոգուց և մարմնից բաղկացած գոյացութիւն է. մարմնաւոր աշխատանքն է ջանալ իւր կենդանութեան, առողջութեան և յաջողութեան համար, և իւր մարմնաւոր աշխատանքի յաջողութեամբ փոխանակ հպարտանալու և իրան կորցնելու՝ օգնէ անյաջող ընկերին և իւր օգնութեամբը ուրախանայ. և բարձրացնելով իւր մտաւոր աշ-

քերը դէպի իւր յաջողութիւն և բարիք պարգևող Աստուածը՝ խոստովանէ նորա ողորմութիւնը և շնորհակալ լինի նորանից, ի՞նչպէս՝ հոգևոր աշխատութեամբ. իսկ հոգևոր աշխատանքն է ջանալ միշտ անթերի լցուցանելու Աստուածապաշտութեան և Աղօթասիրութեան, Ընկերսիրութեան և Բարեգործութեան պարտիքը, ամենայն քայլափոխում որոնել Աստուծոյ կամքը և նորա ամենակարող զօրութեան վերայ դնել իւր յոյսը, սարսափելով և վախենալով միևնոյն Ժամանակ նորա արդարութիւնից. և վերջապէս ամենայն գործք՝ կատարել ՚ի փառս Աստուծոյ և յօգուտ իւր և ընկերին և ոչ ընկերի վնասով ՚ի շահ անձին: Այսպիսի աշխատանքի մէջ գողութիւն չէ կարող լինել, որովհետև մարմնաւոր և հոգևոր աշխատանքները կատարում են փոխադարձ յարաբերութեամբ առ միմեանս, մէկը միւսի օգտի համար է և երկուսը միասին Աստուծոյ փառոցն են ծառայում. մարմնաւոր աշխատանքի նպատակն է հոգևոր կեանքը, իսկ հոգևոր աշխատանքը գտում է և մաքրում մարմնաւոր կեանքի պակասութիւնները:

բ. Աշխատութիւն յԱնձն և ոչ յԸնկերն՝ այն է, որ մարդը աշխատում է միայն մարմնաւորապէս, զանցառութեան և մոռացութեան տալով բոլորովին հոգևորը. նա աշխատում է ոչ թէ Աստուծոյ փառքի համար կամ որ նոյն է Ընկերի օգտի համար, այլ միայն և յատկապէս իւր անձի բաւականութեան, օգտի, շահուց և փառաց համար. նա ազահութեան ցանկութեամբ լցուած՝ հեռանում է հոգևոր աշխարհից, մերժում է չափաւորութեան գաղափարը, խեղդում է իւր մէջ կարեկցութեան հոգին, չէ կամենում տեսնել իւր հաւասարը, ձկտում է պերճանալ և բարձրանալ ամենից լոկ մարմնաւոր կեանքի յաջողութեան ձօխութեամբ. և ահա դորան հասնելու համար, ստիպւում է դիմել գողութեան չարահնար և վնասաբեր միջոցներին. նա գողանում է. բայց ի՞նչ և ի՞նչպէս. նա գողանում է իւր ընկերների սիրտը, հոգին և խօսքը. նա գողանում է

նոցա հաւատար, յոյսը և սէրը. նա գողանում է նոցա մտերիմ բարեկամական յարաբերութիւնը և մինչև անգամ կեանքը գլխովին և այդ ամենը ծառայեցնում է իւր մարմնաւոր յաջողութեանց, փառաց և ձոխութեանց փծուն նպատակին հասնելու: ա. Նա պատուում է և մեծարում, սիրում է և պաշտում, գովում է ամեն տեղ իւր ընկերին և ձեւանում է նորան իբրև սրտակից բարեկամ, բայց ինչո՞ւ համար՝ որպէս զի նորա յաջողութիւնը իւր ձեռքը ձգէ, նորա պաշտօնը ինքն ստանայ, նորան մնասելով՝ ինքն օգտուի. և յաջողում է նորան այս խարդախութիւնը. որովհետև խարուելով իւր մտերիմ կարծուած բարեկամի չարահնար խորհուրդներից, զգուեց իւր պաշտօնից, հեռացաւ այն աշխատանքից՝ որից էր ստանում իւր ապրուստը, թողեց այն ասպարէզը՝ որի մէջ գործում էր յօգուտ իւր՝ և ընկերներին. և ահա իւր բարեկամ կարծուած դադանի թշնամին օգտուում է իւր պաշտօնից, որից ինքը զրկուեցաւ. ի՞նչ անուանել ընկերի այս խարդախ յարաբերութիւնը՝ եթէ ոչ դաժան գողութիւն: բ. Նա բանբասում է և չարախօսում, մրտուում է և պատուաղուրկ է անում ընկերին. ինչո՞ւ համար՝ որպէս զի նորա տեղը, նորա յաջողութիւնը ինքը ստանայ. և յաջողում է. այս կերպ աշխատանքը չանուանե՞նք արդեօք գողութիւն: գ. Մինչդեռ ընկերը վտահասցած նորա սիրոյ վերայ՝ հաւատում է նորան, և հաստատ ու անկասկած յուսալով նորա բարեկամութեանը՝ ապահով է լինում նորանից, յանկարծ՝ զգում է իրան վտահասցած նորանից. գող չէ՞ արդեօք նա իւր ընկերօջ հաւատի, յուսոյ և սիրոյ: դ. Նա գողանում է ընկերի մտերիմ խօսքն ու խորհուրդը, միամտութիւնն ու բարութիւնը և սոցանից օգուտ քաղելով՝ նիւթում է նորան չարիք, փորում է փոսեր և վերջապէս զրկում է նորան այն յաջողութիւնից՝ որի մէջ կար. որովհետև նախանձեց ընկերի յաջողութեանը և օգտուելով նորա միամտութիւնից՝ զազանի նման յափըչ-

տակեց նորա բերանի պատառը իւր որկորը լցուցանելու. ի՞նչ անուն տանք այս տեսակ գողութեանը:

Եւ ահա մարմնաւոր աշխատանքի այս բոլոր հանգամանքները ամենադժնեայ և դառն գողութիւններ են, որոնք շատ յաճախ են պատահում ընկերական կեանքի և յարաբերութեանց մէջ, ինչո՞ւ համար՝ որովհետև աշխատանքը սոսկ մարմնաւոր է. բացակայ է հոգեւորը:

Բայցի գողութեան վերոյիշեալ տեսակները, կան և այլ տեսակ գողութիւններ. ինչպէս գողութիւն ժամանակի, աշխատանքի կամ գործքի, մտքի կամ խորհուրդների, սրտի կարեկցութեան և հոգեոյ ոլորմանութեան, խօսքի և շարժմանքների և այլն, որոնցմով մարդը թէ հոգեւորապէս և թէ մարմնաւորապէս մնասում է իրեն և ընկերին:

ա. Ժամանակի գողութիւնն է՝ որ մարդը իւր աշխատանայ և վաստակոյ ժամանակը անօգուտ և անշահաւէտ կերպով է անցկացնում թէ ըստ հոգեոյ և թէ ըստ մարմնոյ. նա սիրում է թմրութիւն, դանդաղութիւն, պարսպոցութիւն, ծուլութիւն. ՚ի գուր է ծախսում իւր աշխատանքի առոյգ ժամանակը և երբ քաղցի վտանգը սպառնում է իրեն՝ նա այն ժամանակ միայն արթնանալով՝ չէ ամաչում ասել «գործել ո՛չ կարեմ, մտերայ ամաչեմ» և սկսում է գողութիւնը:

բ. Աշխատանքի կամ գործքի գողութիւնն է՝ որ մարդը իւր ձեռքին ունեցած աշխատանքից կամ գործքից օգուտ չէ քաղում, շուտ համարելով տակաւին նորանից օգուտ քաղելը, կարծելով թէ յաւիտենական կամ մշտական է իւր ձեռքի գործքն ու աշխատանքը, ամենեւին չենթադրելով թէ կարող է զրկուել այն աշխատանքից ինչ ինչ պատճառներով. և ուրեմն յուսալով իւր ձեռքին եղած աշխատանքի վերայ՝ շուայլաբար է կենցաղավարում, ամենեւին չմտածելով ապագայի վերայ. և և կամ իւր աշխատանքի կամ գործքի արդիւնքից պարտականութիւն չէ համարում իրեն մասն հանել կարօտեալ ու զրկեալ ընկերին:

գ. Մաքի կամ խորհուրդների գողութիւնն է՝ որ մարդը փոխանակ իւր մտածութեամբ և խորհուրդներով ընկերի օգուտը, յաջողութիւնը և վերականգնումը խորհելու ու մտածելու, ընդհակառակն վնասը, անյաջողութիւնը և անկումն է մտածում և խորհում, իսկ իւր անձի՝ փառաւորութիւնը, յաջողութիւնը, հեշտութիւնն ու փափկութիւնը. նա իւր մաքի և խորհուրդների մէջ տեղ չէ տալի ամենեւին հոգեւորին, միշտ ընկ մարմնաւորն է նորա մտաց և խորհրդոց առարկայն:

դ. Սրտի կարեկցութեան և հոգւոյ ողորմածութեան գողութիւնն է՝ որ մարդը իւր սիրտը փոխանակ կարեկցութեամբ և հոգին ողորմածութեամբ ջերմացնելու՝ անգթութեամբ է սառցնում դէպի ընկերների թշուառութիւնը և ոտնահարուած դրութիւնը. Սորանով նա գողանում է իւր սրտի կարեկցութիւնը և հոգւոյ ողորմածութիւնը՝ որ Աստուած ընկերական մարդոյ մէջ ընկերական կեանքի հզօր շարժառիթ է դրոշմել, որովհետեւ այլապէս մարդոյ ընկերական կենցաղավարութիւնը չէր հասնի իւր նպատակին՝ այսինքն չէր կարող լինել կատարեալ. Կարեկից սրտի և ողորմած հոգւոյ գործնական նշանն է Սղնութիւնը. Ընկերին օգնել չսիրողը, կնշանակէ գող է իւր սրտի կարեկցութեան և հոգւոյ ողորմածութեան:

ե. Խօսքի և շարժումների գողութիւնն է՝ որ մարդը փոխանակ օգտակարը խօսելու և պատշաճաւոր շարժումներ ցոյց տալու նոյա՝ որոնք շրջապատում են իրան, որպէս զեօգտուն իւր խօսքից ու շարժումներից, որովհետեւ այդ է իւր պարտականութիւնը դէպի ընկերը. ընդհակառակը իւր թունալից խօսքերով և գայթակղեցուցիչ շարժումներով թունաւորում է իւր ընկերին՝ գայթակղեցնելով նորան բոլորովին, այսինքն հանելով նորան նորա պարզ և միամիտ դրութիւնից, սովորցնում է չարութիւնը և առաջնորդում է յանցանքի և մեղաց ճանապարհով. Այսպիսիներին խիստ սպառ-

նալքը է՝ տալի Զիսուս սուրբ Աւետարանի մէջ (2) «Ո՛չ է մարթչգալ դայթակղութեան. բայց վայ այնմիկ է՝ յոյր ձեռն գայցելաւ էր նմա թէ վէմ երկանաքար կախէր զպարանոցէ նորա՝ և անկանէր ի ծով. քան թէ գայթակղեցուցանիցէ զմի ոք ի փոքրկանցս յայցանէս» Առկ. Ժէ. 1—3: Այսպիսիներին և մարդարէն է կարգում իւր վայը ասելով (3) «Վայ, որ արբուցանէ ընկերի իւրում հրապոյրս պղտորս . . .» Ամբ. Բ. 15: Ուրեմն մարդը՝ որ չէ զգուշանում իւր խօսքերի ու շարժմունքների մէջ և չէ դործադրում յօգուտ ընկերին՝ կնշանակէ նա գող է խօսքի և շարժմունքների:

Ծնօնները իրենց խօսքով և շարժմունքներով՝ առաջին դաստիարակներն են համարուած որդեց. Քահանաները՝ Ժողովրդոց. Ուսուցիչները՝ աշակերտաց. Մեծերը՝ փոքրերին. Իշխանները՝ ստղապետներին և այլն. Եթէ յիշեալ հեղինակները չեն զգուշանայ իրենց խօսքերի ու շարժմունքների մէջ, և կգայթակղեցնեն իրենց լոյսներին և տեսնողներին՝ կնշանակէ նոքա՝ գողացան իրանցից կամ որ նոյն է խեղդեցին իրանց մէջ ազնիւ և օգտակար խօսքն ու շարժմունքը, որովհետեւ սովորին նոցա վատը, վնասակարը, չարը և գարշելին. ուրեմն են նոքա՝ գողեր ազնիւ և օգտակար խօսքի և շարժմունքների: Աւելորդ խօսելը, սուտը, երգումը, հայհոյութիւնը, անէծքը, բանբասանքը, չար խորհրդատուութիւնը՝ գողութիւններ են խօսքի, որովհետեւ պղտորում են ընկերի սիրտը, տապնապում են նորա հոգին, վրդովում և յուզում են նորա հոգեկան անդորրութիւնը և բոլորովին գայթակղեցնում են նորա խաղաղ կեանքը. այն ինչ փոխանակ նոցա՝ պէտք է լինէին ստիաւախօսութիւն և հարկաւորն ու օգտակարը, ճշմարտախօսութիւն, օրհնութիւն, գովութիւն, աղօթք և բարի խորհրդատուութիւն: Սոյնպէս և աւելորդ և վնասակար շարժումները՝ այն է Պճնասիրութիւն կամ զարդարանքներ սիւքելը, Հանդերձասիրութիւնը, Թղթախաղը և կամ այլ անեսակ դրամական խա-

ղերը, Յաճախ և Շոպլ Հրաւերները, Բազմախորաիկ ճաշերը, շատ կամ աւելորդ սպասաւորներ պահելը, Մայրենի լեզուով չխօսելը, Անհաշիւ և անպատշաճ ծիծաղը, Կրօնական խօսակցութիւնից խորշին ու հեռանալը, Աւրախալի և շոպլ հանդէսներն յաճախելը և այլ սոցա նմանները՝ գողութիւններ են շարժմունքի. այն ինչ փոխանակ սոցա՝ պէտք է լինէին Չափաւորութիւն սիրելը և աւելորդը առելը. Մերկութիւնը ծածկող անպաճոյճ՝ և պարզ հանդերձներ հարձելը. Արդար վաստակի վերայ հիմնուած աշխատանք. Կարձել Հրաւերները և տալ նոցա պարզ և չափաւոր ձև. Պատրաստել միայն հարկաւոր ճաշը և անդարարը և ոչ բազմատեսակը. Սակաւ և գործունեայ և համեստ ծառաներով բաւականանալ. Միրել և ուսանել Մայրենի լեզուն և խօսել նոյն լեզուով, որովհետեւ նա է հարազատը և սեպհականը. ծիծաղել ցած, համեստ կերպով և հարկաւոր դէպքում. Միրել կրօնական խօսակցութիւնը, որովհետեւ նա է ազնուացնում սիրտը և կերակրում հոգին. և փոխանակ ուրախալի և շոպլ հանդէսներն յաճախելու՝ Հագցնել մերկերին, կերակրել Քաղցածներին, Պատասպարել անտուն և պանդուխտ թափառականներին, Գործ տալ համեստ՝ բոյց անգործ պարապորդներին. Այցելութիւն անել կամ անձամբ և կամ դրամական օգնութեամբ հիւանդներին, բազմամարդ և չքաւոր դերդաստուններին և բանդարկեալներին օգնելով և մխիթարելով նոցա:

Բացի շարժմունքների վերոյիշեալ տեսակները, որոնք գողութիւն համարուեցան մեր կարծիքով՝ կան և այլ տեսակ շարժմունքներ, որոնց նոյնպէս գողութիւն կարելի է անուանել, ինչպէս ա. Հպարտութիւն՝ որ խեղդելով Յիսուսի քարոզած սքանչելի խոնարհութիւնը՝ գողանում է զայն. բ. Նախանձ՝ որ կեղեքում է սիրտը, ճնշում է սէրը և դուրս է ժայթքում ատելութիւն դէպի ընկերը. նախանձը գողանում է սրտից դէպի ընկերը եղած սէրը և բարի կամքը գ. Բարկութիւն՝ որ գո-

ղանում է այն երկայնամիտ համբերութիւնը՝ որով իրաւամբ պանծացաւ իբրև հեղինակ համբերութեան Ս. Գրքի մէջ յիշատակուած արդար Յովբը. դ. Մուլութիւն՝ որ մեռցնում է ամենայն սէր և եռանդ դէպի աշխատանքը. ծոյլերին Սողովմոն իմաստունը ուղարկում է աշխատասիրութիւն սովորելու միջնակներից և մեղուներից: Կան և այլ շատ տեսակ շարժմունքներ՝ որոնք գայթակղեցնում են տեսնողներին և որոնք համարում են գողութիւն. որովհետեւ մարդոյ թէ խօսքը և թէ շարժմունքը միշտ պիտի ծառայեն ընկերի օգտին և բարօրութեանը. այլպէս՝ գողութիւններ են:

Ուրեմն գողութիւն՝ նշանակում է չաշխատել կամ ծուլանալ և կամ աշխատանքը ի վնաս հոգւոյն և ընկերներին գործ դնել և միայն ՚ի շահ մարմնոյն. նա՝ որ իւր աշխատանքը չէ կապում Աստուծոյ սուրբ Անուան և Ընկերի օգտի հետ՝ և միայն աշխատում է մարմնաւոր նպատակաւ և իւր անձնական սոսկ շահոյց համար՝ նա գող է և նորա բոլոր աշխատանքն է գողութիւն:

Մինչև այժմ մեր տեսածները կարելի է անուանել Հոգւոր կամ Բարոյական գողութիւն, այժմ կանանք Մարմնաւոր կամ Նիւթական գողութիւնը: Այսպիսի գողութիւնը զանազան տեսակ է լինում, ինչպէս ա. Յափշտակութիւն՝ որ մարդը վտահանալով իւր իշխանական գորութեան վերայ, կամ յուսարով իւր մեծ անուանը և պաշտօնին՝ առանց հարցնելու ընկերի իրաւունքը և արդարութեան օրէնքը, բռնի կերպով յափշտակում է իւր ընկերօջ ինչքը, կալուածք, պաշտօնը և այլն. բնաւ չխղճահարուելով իւր գաղտնային վարմանց մէջ և նմանուելով Յովհան Ոսկեբերանի ասած ճիւղղին, որ այս պիսի մարդկանց համար է տակ երանելի հայրապետը «Ձի պնուհետեւ ոչ զազան թունաւոր և ոչ անասուն անմիտ արժան է ասել, այլ ճիւղաղ Բիւրակերպ բիւրագոյն պիտակացեալ»:

բ. Չրկանք կամ զրկողութիւն՝ որ մարդը զրկուած ազահոթեան կամ նախանձի և կամ թշնամութեան շարժառիթից՝ թէ յայտնի և թէ ծածուկ կերպով զրկում է ընկերին և խորամանկ խարդախութեամբ կամ անիրաւ իրաւունքներով իւրացնում է ընկերի սեպհականութիւնը: Զրկողական գողութեան մէջ է մտնում ծառաների, մշակների և այլ աշխատաւորների վարձը կտրելը կամ չտալը, որի մասին զգուշացնում է Առաքեալը այսպէս (4) «Ահաւասիկ վարձք մշակացն, որք գործեն զանդս ձեր, առ ձեզ են, զըկեալ ՚ի ձէնջ աղաղակէ և բողբ հնձողացն եհաս յասկանջս Տեառն զօրութեանց.» Յակ. Ե. 4: Եւրճին և տնանկին զըկելու և հարստահարելու մասին զգուշացնում է Սողովմն իմաստունը այսպէս (5) «Մի հարբստահարեր զտնանկն, վասն զի աղքատ է և մի անարգեր ըզտկարն ՚ի տուրս.» Առակ. ԻԲ. 22: Ս. Գիրքը արգելում է գործատէրերին մշակների և տնանկների օրական վարձը իրանց մօտ պահելը մինչև միւս օրը (6) «Մի զըսացիս զվարձ տնանկին և զկարօտեըց յեղբարց քոց. նոյն օրին հատուցես զվարձս նորա և մի՛ մտանիցէ արեգակն ՚ի վերայ այնորիկ, զի անակ է և այն է յոյս նորա.» Երկ. Օրին. ԻԳ. 14—15: (7) «Մի զըկեսցես զընկեր քո. և մի՛ յափշտակեսցես, և մի՛ ազցին վարձք վարձկանի առ քեզ մինչև ցառաւօտ.» Ղևտ: ԺԹ. 13: Երանի կլինէր բոլոր գործատէրերին, եթէ առանց ձանձրանալու շտապէին կատարել այս բարոյական օրէնքը, որով կապահովէին արդար և օրական ապրուստի համար տքնող ու չարչարող խեղճ մշակ դասակարգի կեանքը:

գ. Խաբեբայութիւն՝ որով մարդ խաբելով իւր ընկերը, հաւատացնում է նորան իւր սուտը իբրև ճշմարիտ և շահելով իւր անձը, մնասում է նորան:

դ. Գողութիւն՝ որով մարդ գողանում է դադանի կերպով ընկերի ինչքը կամ սեպհականութիւնը և գողացած իրը անյայտութեան մէջ պահելով՝ իւրացնում է. և երբ մի դի-

պուածով յայտնում է գողացած իբր, նա բացարձակ ուրանում է իւր գողութիւնը:

ե. Հատուցողական գողութիւն՝ որով մարդ իւր վերցրած պարտքը ուրանում է բոլորովին իբր անպարտ և չէ հատուցանում:

զ. Գործակցական գողութիւն՝ որ մարդը թէպէտ ինքը չէ գողանում, սակայն գործակից և համախոհ է իւր ընկերօջ գողութեանը, չարեացը և մնասներին՝ որ պատճառում է ուրիշին. այսպիսիները ըստ Սողովմնի ատում են իրենց անձը կամ հողին (8) «Որ բաժանակից լիցի գողոցն, առեաց զանձն իւր.» Առակ. ԻԹ. 24:

է. Վկայաբանական կամ երգմնական գողութիւն՝ որ մարդը իւր վկայութիւններով և սուտ երգումներով աշխատում է արդարայնել ընկերի, ծանօթի և բարեկամի գողութիւնը, իւր անձնական շահերի համար:

ը. Ստացական գողութիւն՝ որ մարդը իւր փոխ կամ շահով առած դրամների ստացման ժամանակ չափից և պայմանից դուրս շահ է պահանջում և կամ իւր առածի քանակութիւնը բազմապատկում է և կրկնապատկում է սուտ երգմամբ և եթէ յաջողում է իրեն, այնժամանակ խեղճ պարտապանը ստիպուած է լինում կրկնակի հատուցանել:

թ. Արգելական գողութիւն՝ որով մարդ արգելում է փոխառութիւնը կարօտեալին, նորա վերաբերութեամբ զանազան կասկածանքներ յայտնելով, որոնք պտուղ են իւր կրքի և ատելութեան դէպի խեղճ կարօտեալը. և այս իւր չարագործութեամբ մնասում է թէ Տւողին և թէ Ստացողին. Տւողին զըկելով իւր շահից և Ստացողին՝ իւր կարիքները հոգալուց. Մէկի շահն ու օգնութիւնն է գողանում և միւսի կեանքի անհրաժեշտ կարիքների լրացումը:

ժ. Գնողական և Վաճառողական կամ Առևտրական գողութիւն՝ որ վաճառողը ծախում է անպէտքը՝ իբրև պէտքա-

կան և դիւրագինը՝ իբրև մեծագին, խակ գնողը օգուտ քաղելով ծախողի անփորձութիւնից, պիտանին համարում է իբրև անպէտք և մեծագինը՝ երգումներով հաստատում է իբրև դիւրագին և գնում է ծախողից չնչին գնով: Առևտրական յարաբերութեանց մէջ շատ յաճախ պատահող այս անիրաւութիւնը արդելում է Ս. Գիրքը <sup>(9)</sup> «Ապա թէ վաճառեցէ որ վաճառ ընկերի իւրում և ստացի յընկերէ իւրմէ, մի նեղեցէ այր զընկեր իւր.» Ա.և.տ. ԻՆ. 14: <sup>(10)</sup> «Մի առնէք անիրաւութիւն . . . ՚ի չափս և ՚ի կշիռս և ՚ի զոյգս. և զոյգք արգարք և չափք արգարք.» Ա.և.տ. ԺԹ. 35:

ժա. Երաշխաւորական գողութիւն՝ որով մէկը երաշխաւոր է հանդիսանում Փոխառութեան, Հատուցման և այլ Դաշնագրութեանց մէջ, և երբ լրանում է կամ հասնում Հատուցման ժամանակը՝ հատուցումը ըստ օրինի և պայմանաւորեալ երաշխաւորութեան չէ կատարում, որովհետև երաշխաւորը ընդդէմ խղճի և ՚ի վնաս ընկերական շահուց՝ ուրանում է կամ փոփոխում իւր երդմամբ հաստատած երաշխաւորութիւնը:

ժբ. Ատակակատարական գողութիւն՝ որով կտակակատարը կտակողի կամաց հակառակ է գործ գնում նորա կտակը. նա ունահարում է Ընդհանուրի կամ Մեծամասնութեան օրինաւոր շահաւէտութիւնը և օգուտը՝ պաշտպանելով իւր անհատական շահերը: Այս ակտը երեւոյթը շատ յաճախ է պատահում մեր մէջ. պատճառն է գաժան ազահութիւնը:

ժգ. Փոխառուական կամ Տոկոսային գողութիւն՝ որ փոխատուն ամենեւին ուշադրութիւն չգարձներով իրեն դիմողի կամ իրանից փոխ ուզողի խղճալի դրութեան ու վիճակի վերայ, ամենեւին չէ խղճում նորան մտղի չափ անգամ և տոկոս տոկոսի վերայ բարդելով՝ դժուարացնում և ծանրացնում է փոխառուի համար իւր դրամոց և տոկոսների հատուցումը: Յանկալի էր որ այս փոխառուք առ ժամանակ մի լսէին և հա-

ւանէին Դաւիթ մարգարէի խօսքը <sup>(11)</sup> «Ձարծաթ իւր ՚ի վարձու ոչ տայ և կաշառս ՚ի վերայ իրաւանց ոչ առնու, որ զայս արացէ՛ մի՛ սասանեցի յաւիտեան.» Սարմ. ԺԿ. 5: Այս մասին Ս. Գիրքն ևս խրատում է այսպէս <sup>(12)</sup> «Եթէ արծաթ փոխ տայցես եղբոր քում, որ աղքատ իցէ և բնակեցի առ քեզ՝ մի՛ ճեպեցես զնա. և մի՛ արկանիցես նմա տոկոսիս.» Ելից. ԻԲ. 25:

Գողութեան տեսակները շատ բազմադիմի են, սակայն օգուտ քաղել ցանկացողները և այս համառօտիւս կարող են բաւականանալ:

Գողութեան գլխաւոր շարժառիթներն են Մուլութիւնը և Ազահութիւնը. Մոյլերին կամ անգործ պարապորդներին խելացի խրատ է տալի Սողովմոն իմաստունը ասելով <sup>(13)</sup> «Երթ առ մրջինն ով վատ. և նախանձեաց ընդ ձանապարհս նորա. լըր իմաստնազոյն ևս քան զնա. Զի նորա ոչ գոյ երկրագործութիւն և ոչ հարկադիր. և ոչ այն՝ որ տագնապիցէ. և ոչ ընդ տէրամբք է: Եւ պտորաստէ յամբարայնոց զկերակուր. և բազում համբարս դնէ ՚ի հունձս: Կամ երթ առ մեղու. և ուսիր՝ զխարդ գործունէսց է. գործ նորա որպէս պարկէշտութեամբ. զորոյ զվաստակն թագաւորք և անանկք ՚ի բժշկութիւն մատուցանեն. զի թէպէտ և տկար է զօրութեամբ. պատուեաց զիմաստութիւնն և յարգեցաւ: Մինչև յերբ անկեալ կաս ով վատ կամ երբ ՚ի քնոյ զարթիցես. փոքր մի ննջիցես, փոքր մի նատիցիս. փոքր մի նիրհիցես. փոքր մի հանդուցանիցես զձեռն քո ՚ի վերայ լանջաց քոց: Ապա այնուհետև հասանիցէ քեզ իբրև զչար ձանապարհորդ՝ աղքատութիւն. և կարօտութիւն՝ իբրև զժիր սուրհանդակ.» Առակ. Զ. 6) - 11: Մոյնպիսի անգործութիւնը՝ որ առիթ է գողութեան, արգելում է և Աւաքեալը ասելով <sup>(14)</sup> «Ար գողանայրն՝ մի՛ ևս զողացցի. այլ մանաւանդ վաստակեցի գործել ձեռօք իւրովք զբարիս. զի բաւական իցէ տալ, ում պիտոյ իցէ.» Եփես. Գ. 28:

Իսկ որ ինչ վերաբերում է Ազահութեան՝ պէտք է ասել որ դա այնպիսի մի դժոխային ցեղ է, որ ուսում է մարդոյ ներքին հոգեւոր կեանքը մի որ և իցէ մարմնական օրտի և շահուց համար. որպէս էր Իսկարիովասցի Յուդան, որ երևսուն արծաթի ազահութեամբ շողախուած ու վարակուած, ուրանալով իւր Երկնաւոր Աւսուցչի և Տիրօջ երեք տարուայ մտերմական քաղցրութիւնը, բարիքը և գաստիարակող ու ալնուացնող անթիւ անհամար խօսքերն ու գործքերը՝ մատնեց Տիրասպան Հրէական աղբին: Որպէս մեծ է Ազահութեան յանցանքը, նոյնպէս և ծանր է նորա պատուհասի սպառնալիքը, որ է զըզուել Աստուծոյ արքայութեան ժառանգութիւնից, ինչպէս ուսուցանում է Առաքեալը <sup>(15)</sup> «Եթէ ոչ գիտէք, զի անիրաւ քարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն... ոչ գողք, ոչ ազահք...» Ա. Կորնթ. Գ—10: Գողութեան յանցանքը քաւելու երկու պայման կայ կամ միջոց. ա. Առ Աստուած կատարեալ զղջումն. բ. Առ մարդ լիովին հատուցումն գողութեան:

ա. Առ Աստուած կատարեալ զղջումն է՝ որ մարդ սիրելով Աշխատութիւնը և պահելով Զափաւորութեան կանոնը՝ կխոստանայ Աստուծոյ և կուխտէ չսեպհականել իրեն միւս անգամ այն՝ որ ինչ ուրիշինն է:

բ. Առ մարդ լիովին հատուցումն է, որ գողացած բաները առանց պակսեցնելու, մինչև անգամ աւելացնելով իսկ պէտք է վերադարձնէ տիրօջը, նմանուելով Ս. Աւետարանի մէջ յիշուած Զաքէոս մաքսաւորին՝ որ սոսց Յիսուսին <sup>(16)</sup> Տէր, ահա զկէս ընչեց իմոց տաց աղքատաց և եթէ զօք զըզեցի՝ հատուցից չորեքկին» Առկ. ԹԹ. Ծ: Իսկ եթէ կենդանի չեն այլ ևս այն անձինք՝ որոնց զըզել էր գողը, նա պէտք է հատուցանէ ժառանգներին. եթէ նոքա ևս չկան՝ մերձաւոր արխնակիցներին. եթէ չկան և այս վերջինները՝ այն ժամանակ գողացած բանը ըստ Ս. Գրոց հասնում է Աստուծոյ Պաշտօնէին՝ որ է

քահանան <sup>(17)</sup> «Ապա եթէ չեցէ որ առն մերձաւոր ինչ հատուցանել նմա զյանցանաց նորա, և ընդ յանցանացն որ ինչ ընծայի Տեառն, քահանային եղեցի.» Թւոց. Ե. Ծ: Իսկ եթէ չունի կամք քահանային հատուցանելու, յայնպէս պէտք է նուիրէ յօգուտ կարօտելոց կամ մի որ և իցէ Բարեգործական նպատակի:

### ԻՆՆԵՐՈՐԳ ՊԵՏՈՒԻՐԱՆ.

(1) Մի՛ սոսք շնորհիւ զնշնէրէ չա՛մբ:

Այս պատուիրանը արդելում է սուտ վկայութիւն տալ ընկերի մասին. պաշտպանելով ճշմարտութիւնը և արդարութիւնը, որովք ընկերական մարդոյ յարաբերական շողապը կլինի հիմնաւոր և հաստատուն, տեղը և հզօր, մեծարելի և սիրելի:

Ինքնին վկայութիւնը աւելորդ է, եթէ մարդկան յարաբերական կեանքը հիմնած է անկեղծաւոր սիրոյ և համակրանաց հիմնաքարի վերայ. եթէ մարդկան կենցաղավարական յարաբերութիւնը, ունի իրան այն կատարելութիւնը՝ իբրև նշանաբան, որը ցանկանում է և պատուիրեց Յիսուս իւր գերագոյն ուսման բոլոր աշակերտեալներին. Վկայութիւնը չունի գին և նշանակութիւն հաւատաւոր և անկեղծաւոր կամ ճշմարիտ յարաբերութեանց մէջ. իսկ եթէ կայ և հարկաւոր է համարուում վկայութիւնը՝ դա պարզ ապացոյց է մարդկան իրարու հետ ունեցած յարաբերութեանց մէջ հաւատի՝ զգոյութեան կամ խախտման, ճշմարտութեան՝ թուլութեան և կատարելութեան՝ բոլորովին բացակայութեան:

Եթէ ուրեմն վկայութիւնն ինքնին աւելորդ է համարելի, ուր կմնայ ապա սուտ վկայութիւնը՝ որ չարաչար յանցանք է

վկայողի համար և փնաս կարծուած յանցաւորին. և իրաւամբ զա է մարդասպանութիւն. որովհետեւ այդ յանցանքի կամ ախտի շարժառիթներն են գլխաւորապէս կաշառակերութիւն. և ապա նախանձ, ատելութիւն, մոխրի տակ ծածկուած և միշտ բորբոքուելու պատրաստ հին վրէժ կամ ոխ, թշնամական յարաբերութիւններ. երբեմն ևս պատուոյ և Բարեկամական հանգամանքներ:

Դատաւորական աթոռի առաջ կանչուած սուտ վկայն, զգում է որ իւր վկայութիւնը պիտի լինի ընդդէմ խղճի օրէնքներին, մարդասիրական գաղափարին և ճշմարտութեանց ձայնին. սակայն ի՞նչ օգուտ, երբ նա խեղդում է իւր մէջ այդ բոլորը, որովհետեւ մամոնան գերել է նորա սիրտը, կաշառքը կուրացրել է նորա հոգեւոր տեսութեան աչքը, նախանձը և ատելութիւնը, վրէժխնդիր քէնը կամ ոխը յուզել են արդէն իւր ամբողջ ներքին կեանքը և թունաւորել են ճշմարտութիւնը՝ որի ձայնը նա ընդունակ չէ լսելու այն միջոցին. Այդ կեղեքիչ և սպանող կիրքերը մոռացնել են տալիս նորան այն սէրն ու կարեկցութիւնը՝ որ նա պէտք է ունենայ դէպի իւր ընկերը. նա այդ բոլորը մոռանում է այդ միջոցին և տալով իւր գաղտնի պատերազմը ընկերի դէմ իւր սուտ վկայութեամբ՝ կործանում է նորան, սպանում է կարծուած յանցաւորին՝ որ անմեղ է բոլորովին. Սուտ վկայութիւններն չէին արդեօք, որոնցմով յանցաւոր և մեղաւոր համարուեցաւ հրէական և Պիղատոսի ատենաների առաջ Անմեղութեան, ճշմարտութեան և Արդարութեան Մեծ Հեղինակն Յիսուս:

Արդարութեան օրէնքը և ճշմարիտ իրաւունքը չէ՞ն թոյլ տայ արդեօք սուտ վկայութիւնը հաւասար համարել չարագործ մարդասպանութեանը՝ այո՛ և բոլորովին անկասկած. որովհետեւ նախ՝ որ սուտ վկայութեան նպատակն է ուրիշէ փնասը, անկումը, ապաբաղդութիւնը, զրկանք և բացի այս հոգեւոր մահճից, շատ անգամ ևս նոյն իսկ մարմնաւոր մահճը,

պատճառ որ ինքը անմեղ՝ և սակայն դատաստանական վճռով յանցաւոր համարուելով սուտ վկաների շնորհիւ, յուսահատուում է բոլորովին և յուսահատ մտատանջութեամբ՝ կամ ինքնասպանութեամբ վերջ է դնում կեանքին և կամ անդադար մտածելով՝ տկարանում է և ոչ մի բժշկական օգնութիւն չէ կարողանում այլ ևս վերականգնել նորա նախկին առողջութիւնը. և ահա՛ նա մահուան անկողնում, պատրաստուում է տանելու իւր բոլորը Արդարագատի առաջ անարդար դատաւորներին և սուտ վկաներին. Ի՞նչ պիտի պատասխանեն նոյն Արդարագատ և Անաչառ Դատաւորի ահարկու դատաստանական աթոռի առաջ երկրային դատաւորները և սուտ վկաները, թող մտածեն և պատրաստեն իրենց պատասխանատուութեան հաշիւը. որովհետեւ այդ դատաստանը անխուսափելի է. և երկրորդ՝ որ սուտ վկայութիւնը բոլորովին հակառակ է Աստուածային ճշմարտութեան օրէնքին որովհետեւ նոյն իսկ վկայութիւնը՝ հաւատի պակասութեան ապացոյցն է, եթէ լինէր հաստ և ճշմարտութիւն մարդկանց յարաբերական կեանքի մէջ՝ կարօտութիւն չէր զգացուի վկաներին դիմելու. բայց որովհետեւ բացակայ է մարդկանց փոխադարձ հաւատը և խեղդուած է ճշմարտութիւնը՝ ուստի և յառաջ է եկել վկայութիւնը, որպէս զն գործքն ու խօսքը հաստատութիւն և վաւերականութիւն ստանան. եթէ լինէր ճշմարիտ և հաւատաւոր յարաբերութիւն մարդկանց մէջ՝ կարօտութիւն չէր զգացուի վկայութեան. խօսքը և գործքը կ'լինէին ճշմարիտ և մարդիկ անկասկած կ'հաւատային միմեանց. Ուրեմն վկայութիւնը՝ է հաւատի պակասութեան կամ բացակայութեան ապացոյցը և է փոքրազոյն չարիք. իսկ սուտ վկայութիւնը՝ է ամենամեծ չարիքը, որովհետեւ նպատակն է անձնական շահը և ընկերի կորուստը և մինչև անգամ մահը. հետեւաբար ուրեմն սուտ վկայութիւնն է մարդասպանութիւն ամենայն իրաւամբ:

Վկայութիւնը նոյն բանն է, որ ինչ գրաւը, երդումը

և պարտատուները, որոնք արդիւնք են մարդկանց ճշմարիտ և հաւատաւոր յարաբերութեանց խախտման. բայց ժամանակը պահանջում է, կասեն շատերը. սակայն ո՞չ ապաքէն ժամանակի գործադիրն ևս նոյն իսկ մարդն է. ժամանակը ինքնին ոչինչ ներգործութիւն չէ կարող ունենալ մարդոյ խղճի օրէնքների վերայ. ժամանակը մի հոսանք է, ընթացք՝ որ կապ չունի մարդկային հանձարի և կամ Աստուածային օրէնքների հետ. ուրեմն և ժամանակը չունէ իրաւունք փոխելու այն բնական օրէնքը՝ որ Աստուած ՚ի բնէ զրել է մարդոյ մէջ՝ իբրև առաջնորդ մարդոյ՝ նորա կեանքի բազմատեսակ հանգամանքներում, այդ բնական օրէնքը կամ այդ առաջնորդն է խղճմանքը՝ որ իբրև արդար դատաւոր՝ ցոյց է տալի մարդուն չարը և բարին, օգտակարը և վնասակարը, ոգևորում է և քաջալերում բարի և օգտակար գործանութեան մէջ և խթում է ու յանդիմանում չար և մնասակար գործքերի համար. ուրեմն մեղաւոր չէ ժամանակը և չէ կորող լինել. մեղաւոր է մարդը, և միշտ մեղաւոր, յանցաւոր և ապերախս՝ որ ՚ի տրիտուր Ամենաբարի Արարչի մեծ բարիքներին՝ չար հատուցումների պատրաստութեամբ է զբաղուած իւր ամբողջ կեանքում, այն է չէ ստորագրում խղճի օրէնքներին՝ որ է Աստուծոյ ձայնը չէ հպատակում Աստուածային կամքին և պատուիրաններին՝ որ է ամենայն ճշմարտութեան սկզբնապատճառը և չէ սիրում, կարեկցում և օգնում ընկերին՝ որ է իւր կեանքի միակ պայմանը և նպատակը, որի նշանակութիւնը վսեմանում է մեր առջև երբ յիշում ենք Առաքելոյ խօսքը սիրոյ մասին<sup>(2)</sup> «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և զսէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղնձ՝ որ հնչէ, կամ իբրև զծածր-ղայս որ զօղանջեն.» Ա. Կորնթ. ԺԳ. 1: Սիրոյ վսեմութեան վերայ աւելորդ է երկար խօսելը, քանի որ չկայ մի անհատ՝ որ ուրանայ նորա բարձր նշանակութիւնը և անհրաժեշտ կարևորութիւնը կեանքի մէջ, որովհետև կեանքը՝ որ առանց

սիրոյ է, նա մեռած է բարոյապէս. Այս Սէրն է՝ որ Յիսուս «Արումն օրինաց» անուանեց, որովհետև բոլոր օրէնքների լրացուցիչն է: Այս Սէրն է, որ Յիսուս իւր խաչին հետ միասին նշան գրոշմեց իւր աշակերտների ճակատին տսելով<sup>(3)</sup> «Յայսմ դիտասցին ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս.» Յովհ. ԺԳ. 35. և վերջապէս այս գերագոյն Սէրն է որ իբրև անլուծանելի կուռ շղթայից օղակապ, պէտք է շրջապատէ տիեզերքի ոլորտը, որ տիեզերքը իւր ամբողջութեան մէջ մնայ և չլուծուի, չքայքայուի. Սիրոյ հաստատուն և անդրդուելի Սեան վերայ են առնում Տիեզերք և Կեանք իրենց վարչութեան շրջանն ու պտոյտը. եթէ կթագաւորէ այս Սէրը Տիեզերքի տիրապետող դահի վերայ՝ որ է մարդոյ բարձր հանձարը, այն ժամանակ մարդը կհասնէ իւր կատարելութեանը կամ Աստուածամեծութեանը, որովհետև այդպէս ուսոյց մեզ հանձարների Տէրը ասելով<sup>(4)</sup> «Արդ՝ եղերուք դուք կատարեալք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է.» Մատթ. Ե. 48: Եւ ուրեմն որպէս ամենայն մեղք և յանցանք, չարիք և վնասք՝ նոյնպէս և սուտ վկայութիւնն է պտուղ և և արդիւնք այդ Բնկերական գերագոյն Սիրոյ Բացակայութեան:

Անմեղին՝ մեղաւոր հանելու սուտ վկայութիւնը երեք տեսակ շարագործութիւն է պարունակում իւր մէջ. Չարագործութիւն Աստուծոյ դէմ՝ նորա Հայրական Սէրը արհամարհելով և Դատաւորական երկիւղը անարդելով. Չարագործութիւն խղճի դէմ՝ նոյն խիղճը իւր մէջ մեռցնելով ու սպանելով. Չարագործութիւն Բնկերի դէմ՝ նորա անմեղութիւնը սուտ հանելով, յանցաւոր վկայելով իւր անձնական շահերի կամ կրքերի համար միայն: Այն ինչ մարդը՝ իբրև Բնկերական մի էակ, պարտական է շատ անգամ և գրեթէ միշտ անհրաժեշտ համարուած զէպքերում կեանք տալ իւր անկենդան ընկերին կամ աւելև պարզն ասել՝ զօհել իւր անձնական շահերը ընկերի օգտին և անմեղութեան հաստատութեանը. Վասն

զի այս է ընկերութեան պայմանը. այլապէս՝ մարդը ոչ թէ ընկերական արարած արժան է անուանել, այլ է նա զիշատիչ գազան՝ որ իւր որկորը լցնելու համար պատրաստ է պատառելու իւր նմանին և հաւասարին:

Այս իսկ է պատճառը, որ Ս. Գիրքը լի է դատաւորներին զգուշացնող և զգաստացնող խրատներով, իսկ սուտ վկաներին խիստ օրէնքով դատապարտող պատուհասական սպառնալիքներով <sup>(5)</sup> «և քննեսցին դատաւորքն ճշմարտութեամբ և ահա վկայ անիրաւ վկայեաց զանիրաւութիւն և եկաց հակառակ եղբօր իւրում, արասջիք նմա, որպէս խորհեցաւ չար առնել ընկերի իւրում և բարձջիք զչարն ՚ի միջոյ ձերմէ.» Թրին. ԺԹ. 18: Սուտ վկայութիւնը կարելի է անուանել Ստախսութիւն և Բանբասանք կամ Չարախօսութիւն, որոնք յառաջ են գալի խորդախութիւնից կամ նենգութիւնից, չարութիւնից կամ անօրէնութիւնից և այլ բազմադիմի մեղքերից:

Ստախօսին նմանեցնում է Յիսուս սատանային <sup>(6)</sup> «Իուք ՚ի հօրէ սատանայ էք, և զղանկութիւն հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդասպան էր իսկզբանէ և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց. յորժամ խօսեսցի սուտ, յիւրոց անտի խօսի, զի սուտ է և հայր նորա.» Յովհ. Ը. 44: Ստախօսների խօսքերը Սողովմն իմաստունը ըստ երեւութին համարում է կապուղ, սակայն ըստ ներգործութեան՝ առիթներ և պատճառներ է համարում պատերազմների <sup>(7)</sup> «Բանք սուտակասպասաց կակուղք են, բայց արկանեն ՚ի շտեմարանս մարտի.» Առակ. 9. 22:

Յիսուս ոչ միայն ստախօսութիւնն է արգելում, այլ մինչև անգամ և դատարկ խօսքը և աւելորդ զրոյցը, որ փոխանակ օգտի՝ վնաս է պատճառում որպէս խօսողին, նոյնպէս և լսողին. և որի մասին հաշիւ պիտի տան մարդիկ իւր գատատանի առաջ <sup>(8)</sup> «Բայց ասեմ ձեզ, ընդ ամենայն դատարկ

բանից, զոր խօսիցեն մարդիկ, տացն համարս յաւուրն դատատանի.» Մատթ. ԺԲ. 36:

Բանբասողը կամ Չարախօսը նոյն պատժի է ենթարկւում, որին և սուտ վկայողը. Չարախօսի կամ Բանբասողի լեզուն նմանեցնում է Առաքեալը փոքրիկ՝ և սակայն անտառներ այրող կրակի <sup>(9)</sup> «Սոյնպէս և լեզու փոքր ինչ անդամ է և մեծամեծս բարբառի. ահա սակաւ ինչ հուր ճրպիսի անտառս հրդեհէ.» Յակ. Գ. 5:

Նոյն Առաքեալը եղբօրը կամ ընկերին դատելը կամ բանբասելը արգելում է, որովհետև այդպիսի բանբասանքը՝ նա համարում է օրէնքը բանբասել <sup>(10)</sup> «Մի բանբասէք զմիմեանս, եղբարք, որ բանբասէ զեղբայր կամ դատէ զեղբայր իւր, զօրէնս բանբասէ և զօրէնս դատէ. իսկ եթէ զօրէնս դատիցես, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր.» Յակ. Գ. 11:

Դաւիթ մարդարէն լեզուով մեղանչելը համարելով իբրև յանցանք և չարագործութիւն և արմատ ամենայն վնասուց և խոտորումն սրտի խօսքի չարութեամբ <sup>(11)</sup> «Իիր Տէր պահապան բերանոյ իմոյ. և դուռն ամուր շթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւ չարութեան.» Սաղմ. ձԹ. 3. խոտանում է լեզուով չմեղանչել այլ ևս <sup>(12)</sup> «Եսացի թէ պահեցիցի զձանապարհս քո, զի մի մեղայց լեզուաւ իմով.» Սաղմ. ԼԸ. 1:

Սուտ վկայութիւնը, որ մի տեսակ բանբասանք է և որ մարդասպանութիւն ևս կարելի է անուանել Ս. Գիրքը բաց է ՚ի բաց մերժում է, չնայելով որ կարող է մինչև անգամ օգտակար նպատակաւ լինել <sup>(13)</sup> «Զհամբաւ սուտ մի՛ ընդունիցիս, մի՛ հաւանիցիս ընդ անիրաւի լինել վկայ անիրաւ.» Ելից. ԻԳ. 1: <sup>(14)</sup> Մի՛ վկայեսցես զընկերէ քումմէ զվկայութիւն սուտ.» Քւոց. Ե. 20:

Սուտ վկայութիւնն էր՝ որով ՚ի մահ դատապարտուեցաւ Աշխարհի Բարբերարն և Փրկիչն Յիսուս. Սուտ վկայութիւնն և Ստախօսներն էին՝ որոնցմով հազարներ ու բիւրեր են մա-

Հացել պատմական աշխարհում, որոց կեանքը փրկութիւն և լոյս էին այն դարուն՝ որոյ մէջ էին ապրում նոքա, որոնք բարիք և օգուտ էին մատակարարում այն հասարակութեան՝ որուն նուիրուած էին իրանց կեանքով գլխովին, Հիմնաքարեր էին հաստատութեան այն սուրբ Նիկիեցեաց՝ որոց մէջ Արարչի սուրբ Անունն էր փառաւորում. Անասանելի սիւներ էին մարդկային ընկերութեան, Սիրոյ և սուրբ շողկապի՝ որոնցից էր սպասուելու ազգերի կեանքի ապահովութիւնը և բարութիւնը, բայց ափսոս, պարտեցան դոքա Սուրբեան հարուածներից, ընկձուեցան Սուտ վկայութեանց տակ և կեղծաւորութիւնը կամ մարդեղուգութիւնը, Բանբասանքը կամ Չարախօսութիւնը, որ բոլորն ևս մի խօսքով կարելի է ասել Անուասպանութիւնը՝ տապալեց այդ ամենայն բարիք և սպանեց բնաւին և իրաւամբ նմանուեցաւ Դաւիթ մարգարէի յիշած սուր ածելոյն. <sup>(15)</sup> «Որպէս զածելի սուր՝ սրեաց զննեղութիւն, սրեաց զչարութիւն քան զբարութիւն, զանօրէնութիւն, քան զխօսս արդարութեան.» Սաղ. ԾԱ. 4:

Ուրեմն իններորդ պատուիրանը արգելում է Սաախօսութիւնը, Սուտ վկայութիւնը, Չարախօսութիւնը և Բանբասանքը՝ որոնք ծնանում են Ատելութիւնից, Վրէժխնդիր ռիակալութիւնից, Ընչասիրութիւնից կամ Ագահութիւնից:

**ՏԱՍՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ.**

(1) Մի՛ յանձնուար ասն ընկերի թո. և մի՛ ամենայնի, զինչ ընկերի թո իցե:

Այս պատուիրանը արգելում է աչք ձգել ընկերի ունեցածի վերայ և նորա ունեցածը տիրելու ջանքեր անել, պաշտպանելով աշխատասիրութիւնը և ամենապսէմ չափաւորութիւնը,

որոնք մարդոյ օգտակար և արդար կեանքի ամենամեծ պայմաններինն են:

Յանկալը մի տեսակ գողութիւն է, որ գործւում է աչքով և սրտով: Ամենայն չարութիւն և բարութիւն, զարշութիւն և սրբութիւն ծնանում են սրտից, ուստի և սրտի պահպանութեան խրատն է տալի մեզ փորձուած իմաստունը <sup>(2)</sup> «Ամենայն պահպանութեամբ պահեալ զսիրտ քո, զի ՚ի նոցանէ են ելք կենաց.» Առակ. Գ. 23. Իսկ սրտագետն Յիսուս, Աստուածային տեսութեան մեծ երանութիւնն խոստանում նոցա, որոնք իրենց սիրտը սուրբ են պահում ամենայն աղտեղութիւններից և չար ցանկութիւններից <sup>(3)</sup> «Նրանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն.» Մատթ. Ե. 8: Որովհետեւ սիրտն է՝ որի մէջ ամբարուած են ամենատեսակ չար խորհուրդք և չարութիւնք և այնտեղից են ծնանում, ինչպէս ուսուցանում է նոյն մեր Փրկիչը <sup>(4)</sup> «Զի ՚ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք.» Մատթ. ԺԵ. 19—20: Դաւիթ մարգարէն շատ խոր թափանցելով սրտի դաղանիքների մէջ. գտնելով որ սիրտն է ամենայն բարի և չար խոհմանց և ցանկութեանց անտեսանելի խորհրդարանը, որի վճիռներ գործադրում է մարդը իրական կեանքում, ուստի և իւր առ Աստուած սաղմոսերգութիւնները լցրել է սրտի և հոգւոյ վերաբերեալ շատ պէս պէս հայցուածներով <sup>(5)</sup> «Սոնարհեցո՛ զսիրտ իմ՝ ի վկայութիւնս քո և մի՛ յագահութիւնս:» <sup>(6)</sup> «Սիրտ սուրբ հաստատեալ յիս Աստուած և զհոգի ուղիղ նորոգեալ ՚ի փորի իմում.» <sup>(7)</sup> «Սոստովան եղէց քեզ Տէր յուղլութիւն սրտի իմոյ, որպէս ուսայց զերաւունս արդարութեան քո:» <sup>(8)</sup> Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ.» Սաղ. ձժԸ. 36. Ծ. 11. ձժԸ. 7 և 11:

Որպէս սիրտը անտեսանելի խորհրդարան է բարի և չար

խովմանց և ցանկութեանց՝ նոյնպէս և աչքը արտաքին անօթ է բարի և չար ցանկութիւնը իւր մէջ ամանելու և հաղորդելու սրտին. ուստի մեծ պահպանութիւն է հարկաւոր և աչքին, ինչպէս հայցում է Աստուծոյ՝ Ներսէս Ենորհային «Հաւատով խոստովանիս սքանչելի աղօթքի մէջ»<sup>(9)</sup> «Ամենախնամ Տէր, դիր պահպան աչաց իմոց՝ զերկուշ քո սուրբ ոչ ևս հայել յարասա . . . և սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն . . . այլ ուղղեա՛ ըզչարժումս սոցա լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի:» Աչքը՝ Յիսուս համարում է ճրագ մարմնոյ, որոյ լուսով սիրտը իւր մէջ պիտի առնու բարին և չարը. Հարկաւոր է որ աչքը չգայթակղուի իւր լուսոյ մէջ, որպէս զև մեղքի խաւարը զտիրէ մարմնոյն և հեռեալէս սրտին, ինչպէս ասում է<sup>(10)</sup> «Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի: Ապա թէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ եթէ լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս.» Մատթ. 2. 22—23: Դաւիթ մարգարէն մարդոյ աչքին մեծ և վսեմ պաշտօն է վերագրում, որոյ կատարմամբ՝ աչքը կլինի առատ ըստ Յիսուսի. Աչքը, ըստ Դաւթի, պէտք է նայէ ու տեսնէ Աստուծոյ օրինաց սքանչելիքը և հրաժարուի աշխարհի նանրութիւններն և ունայնութիւնները տեսնելուց, որով և սիրտը ազատ կմնայ զայթակղութիւնից. <sup>(11)</sup> «Ձարթն՝ զաչս իմ, և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց:» <sup>(12)</sup> «Դարձն՝ զաչս իմ, զև մի՛ տեսից վնանրութիւն. ՚ի ճանապարհս քո կեցն՝ զևս:» Սաղմ. ձԺԸ. 18 և 37:

Գանկալ ունենալու այն՝ որ իւրը չէ կամ ուրիշ սեպհականութիւնը տիրելու և իւրացնելու փափաղը, ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ գողութիւն և ամենամեծ ազահութիւն, որ ամենայն իրաւամբ ընդդէմ է չափաւորութեան և աշխատասիրութեան մեծարելի օրէնքին. Ուրիշ ունեցածի վերայ աչք ձգելը՝ միւնոյն է թէ իւր ունեցածը ատել, չսիրել. Այլոց սեպհակա-

նութեան ցանկալը՝ միւնոյն է թէ իւր սեպհականութիւնից զգուելը. Ընկերի ինչքը իւրացնելու փափաղը՝ միւնոյն է թէ իւր ունեցածով չբաւականանալ կամ որ նոյն է ազահութիւն. Ուրիշի աշխատանքով ապրելու կամ ապահովուելու ցանկութիւնը՝ միւնոյն է թէ աշխատանքը ատել և ծուլութիւնը սիրել:

Սակայն ցանկութիւնը և փափաղը կարող են երկու տեսակ լինել. առաջին և աղնիւ տեսակն է՝ իւրացնել կամ սեպհականել այլոց տաքինական յատկութիւնները՝ որք են Աստուածօտրութիւն, Ընկերսիրութիւն, Չափաւոր կենցաղավորութիւն, Համբերող և Ներողամիտ Բնաւորութիւն, Գթոտ սիրտ, Կարեկից հոգի, Աշխատասէր և Անյուսահատ կամք, Պարզ և Անխաղախ յարաբերութիւն ընկերութեանց մէջ և այլ այսպիսի շատ աղնիւ և օգտակար յատկութիւններ. Այս առաջին տեսակը պարտականութիւն է ամենայն մի անհատի. Տասներորդ պատուիրանի արդէլքը չէ այսպիսի ցանկութեանց և փափազանաց, այլ նա արգելում է երկրորդ տեսակը՝ որ վնասակար է թէ մեզ և թէ մեր ընկերներին. մեզ՝ որ գործում ենք ընդդէմ Աստուածային օրէնքի և խղճի՝ օրինաւոր ցուցմանց. և ընկերին՝ որ ցանկանում ենք յողեցնել մեր չար փափաղը ընկերի զրկանքով կամ վնասով:

Այս երկրորդ տեսակ ցանկութիւնը կամ փափաղը վարթեցնում է մեր մէջ անգործութեան կամ ծուլութեան և ազահութեան վնասակար ախտերը. Սոցանից են յառաջ գալի գողութիւնները, աւազակութիւնները, յափշտակութիւնները և ամենայն տեսակ զրկանք. որովհետև ինչո՞ւ աշխատանք՝ քանի որ միջոց ունենք և հնար՝ ուզած ժամանակ այլոց սեպհականութիւնը մեզ յատկացնելու, մեր ձեռքը ձգելու, սիրապետելու և վայելելու. Պատճառ է տալի և ազահութեան. ինչո՞ւ բաւականանանք մերայնով, քանի որ միջոց ունենք ուրիշ վնասակով մեր ունեցածը կրկնապատկել ու քառապատկել:

Պատճառ է տալի անբարոյականութեան և անհաւատարմութեան. ինչո՞ւ հաւատարմութեան և բարոյականութեան ծանր թուած պարտուց տակ ճնշուենք, միշտ միօրինակ կենցաղ վարենք, քանի որ կարող ենք ընտանեկան կամ ամուսնական կեանքի մէջ մեր հաւատարիմ և բարոյական յարաբերութիւնը ունակօրս անելով՝ պղծել ու պղծուիլ անբարոյական շրջաններում: Պատճառ է տալի շռայլութեան և աղքատութեան. ինչո՞ւ բաւականանալ անշուք, չափաւոր և պարզ կենցաղովարութեամբ, քանի որ միջոց ունենք մեր դատած կոպէկները կամ արծաթները տասնեակներով, հարիւրներով և հազարներով քամուն տալ ուրիշների նման, որպէս զի մեր կենցաղավարութիւնն ևս լինի շքեղ, փառաւոր և շռայլ:

Աւրեմն ցանկանալը ուրիշի կեանքին և ունեցածին, որ արդելում է տասներորդ պատուիրանը, է չարաչար վնաս որպէս ցանկացողին՝ նոյնպէս և նորան՝ որի ունեցածին ցանկանում են. և է գողութեան մի այլ տեսակը:

ԳՐԱԲԱՌ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ  
ԱՇԽԱՐՀԱԲԱՌ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ.

ԵՐԿՈՒ ԽՕՍԿ 3—5.\*)

- (1) Կեղծաւորներ, երկնքի ու երկրի երեսը գիտէք փորձել կամ քննել. ինչո՞ւ և այս ժամանակը չէք փորձում: Ինչո՞ւ արժանաւորը չէք ընտրում ձեզանից:
- (2) Մարդը պատուի մէջ էր, բայց չեմացաւ. հաւատարուեցաւ անբան անասուններին և նմանուեցաւ նոցա:
- (3) Նորանից յետոյ ո՞չ թունաւոր զաղան և ո՞չ անմիտ անասուն արժանի է ասելու. այլ նա կլինի այնպիսի մի հրէշ՝ որ տասն հազար կերպարանք ու զոյն է կրում իւր մէջ:
- (4) Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ եթէ ցորենի հատիկը չընկնի հողի մէջ և չմեռնի՝ ինքը միայն կմնայ. իսկ եթէ մեռնի՝ շատ արդիւնք կբերէ:

ՈՒՂԵՐՁ 7.

- (1) Ես եկայ աշխարհ իբրև լոյս, որպէս զի ինձ հաւատացողը՝ խաւարի մէջ չմնայ:

\*) Վերնագրերի հանդէպ դրուած թուահամարները ցոյց են տալիս էջերը:

- (1) Երանելի է այն մարդը՝ որ ամբարիշտ մարդկանց խորհուրդներին չհետևեց, մեղաւորների ճանապարհով չդնաց և ժանտ մարդկանց աթոռների վերայ չնստեց: Այլ իւր կամքը համաձայնեցրեց Աստուծոյ օրէնքին և Նորա օրէնքի վերայ է մտածում գիշեր և ցերեկ:

**ԱՌԱՋԻՆ ՊԱՏՈՒԹԻՐԱՆ 9—14.**

- (1) Ես եմ քո Տէր Աստուածը, որ հանեցի քեզ եգիպտացւոց երկրից, ծառայութեան տանից. չունենաս ուրիշ աստուածներ բացի ինձանից:
- (2) Քո Տէր Աստուծուն երկրպագութիւն կտաս և Նորան միայն կպաշտես:
- (3) Կսիրես քո Տէր Աստուածը՝ բոլոր սրտովդ, անձնովդ և մտքովդ:
- (4) Օտարների աստուծոյ անունը չվիշէք և չլսուի այն ձեր բերանից:
- (5) Ուրեմն դուք մի նմանուէք նոցա. որովհետև դեռ ձեր խնդրելուց ևս առաջ գիտէ ձեր հայրը թէ ձեզ ի՞նչ է հարկաւոր:
- (6) Երուսաղէմի աղջկներ, լաց մի՛ լինիք ինձ վերայ, այլ լացէք ձեզ՝ և ձեր որդւոց վերայ: Որովհետև այնպիսի օրեր պիտի գան՝ որ պիտի ասեն թէ երանի ամուլներին և այն որովայններին՝ որոնք օրդիք չձնան, և այն ստինքներին՝ որ երեսաներ չդիւցրին և չմեծացրին: Այն ժամանակ կասեն լեռներին՝ թէ ընկէք մեզ վերայ և բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ: Որովհետև եթէ դալար

- փայտի կամ մատաղ ծառի հետ այսպէս են վարուում, չոր փայտի հետ ի՞նչ կանեն:
- (7) Խանձարուրի \* և հոգսի մէջ ծնուեցայ:
- (8) Չէ՞ որ իբրև փորձութիւն է մարդոյ վարքը երկրի վերայ. իսկ նորա կեանքը՝ իբրև օրական վարձ մշակի. կամ իբրև ծառայ՝ որ վախենալով իւր տիրոջից, հովանաւորութեան տակ է թագնւում կամ պահուում, և իբրև վարձիան՝ որ սպասում է իւր վարձին. նոյնպէս և ես սպասեցի դատարկ կամ անօգուտ շատ ամիսների. իմ անցկացրած գիշերները լիքն են ցաւերով. երբոր քրնում եմ՝ ասում եմ թէ երբ կլինի ցերեկ. իսկ երբ վեր եմ կենում՝ ասում եմ թէ երբ կլինի գիշեր: \*\*)
- (9) Խոնարհուեցէք Տիրոջ կամ Աստուծոյ առջև և Նա ձեզ կբարձրացնէ:
- (10) Յուսով մխիթարուեցէք, նեղութիւնները կամ վշտերը համբերութեամբ տարէք:
- (11) Համբերի՛ր Աստուծուն և քաջալերուի՛ր. թող զօրանայ քո սիրտը համբերի՛ր Աստուծուն:
- (12) Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին. իմ ճանապարհները նման չեն ձեր ճանապարհներին. ասում է Տէրը:
- (13) Որքան աւելի եմ ձկտում կամ աշխատում ճանաչել Աստուծոյ իսկութիւնը կամ ճշմարտութիւնը, այնքան քիչ եմ ըմբռնում կամ հասկանում. բայց այս ևս շատ է ինձ, որ նա կայ. քանի քիչ եմ հասկանում կամ ըմբռ-

\*) Խանձարուր նշանակում է քաղաք, որմանք քաղաք են ասում, որ սխալ է և ուրիշ նշանակութիւն ունի:

\*\*) Այս խօսքերը ասել է երանելի կամ արդար Յովբը այն ժամանակ՝ երբ դժբաղդութիւնը դժբաղդութեանց ետեւից էին գալի նորա վերայ. սակայն նա մեծ հոգւով համբերում էր այդ բոլորին՝ օրհնելով Աստուծոյ կամքը:

նում՝ այնքան աւելի երկրպագանում եմ նորան. խոնարհեցնեմ ես ինձ և ասեմ նորան. Ով Արարիչ Աստուած բոլոր արարածների, ես կամ, որովհետև Քու կաս. Իմ մտաւոր և հոգեւոր բարձրութիւնն այն է՝ որ միշտ Քեզ վերայ մտածեմ: Իմ բանականութեան ամենալաւ կենցաղավարութիւնն այն է՝ որ ինձ ոչինչ համարեմ Քո առաջին. իմ հոգեւոյ հիացումը կամ զարմանքը և իմ տկարութեան մխիթարութիւնն այն է՝ որ ինձ ընկձուած տեսնեմ Քո մեծութիւնից:

(14) Որովհետև Քո Տեսչութիւնն է վարում կամ կառավարում ո՞վ Հայր:

(15) Դուրս արի դու քո երկրից, քո ազգից և քո հօր տանից. և արի այն երկիրը՝ որ քեզ ցոյց կտամ. քեզանից մեծ ազգ պիտի յառաջ բերեմ. և քեզանով կորչնուեն երկրի բոլոր ազգերը:

(16) Ամենայն բարիք կամեցող և կատարող Տէր, մի թողներ ինձ իմ կամքս կատարելու, այլ առաջնորդիր ինձ լինելու միշտ Քո բարէսէր կամքին համեմատ:

### ԵՐԿՐՈՐԴ ԳԱՏՈՒԻՐԱՆ 15—23.

(1) Մի շնիր կուռքեր ոչ մի նմանութեամբ. ոչ երկնային և ոչ երկրային առարկաներից:

(2) Ամենքին խնամող Աստուած, պահապան դիր իմ աչքերիս՝ որ Քո երկիւղի վերայ արատաւոր աչքով չնայեմ. ականջներիս՝ որ չախորժեմ չարախօսութիւն լսել. բերանիս՝ որ սուտ չխօսէ. սրտիս՝ որ չարութիւն չմտածէ. ձեռքերիս՝ որ անիրաւութիւն չանեն. ոտքերիս՝ որ անօրէնութեան ճանապարհով չգնան. Բայց սոցա շարժումը

ուղիղ՝ որ ամեն բանի մէջ Քո պատուիրանների համաձայն լինին:

(3) Դատաստանի մէջ անիրաւութիւն չանես. դէպի աղքատը անհոգ չմնաս. հարստին երեսպաշտութիւն չանես, արդարութեամբ պիտի դատես քո ընկերդ:

(4) Չպէտք է լինեն՝ երկու լեզուանի, գինեակէր, արծաթասէր կամ թամբեար, այլ սուրբ մտքով պիտի ունենան հաւատոյ խորհուրդը:

(5) Մտադրութեամբ ընթերցիր մխիթարական վարդապետութիւնները, ուսմունքը. երիցութեան մէջ ձեռնադրութեանդ ժամանակ մարգարէութեամբ ստացած շնորհքիդ վերաբերութեամբ անխոյժ չլինես. դորա վերայ մտածիր և դորա մէջ արագաշարժ եղիր:

(6) Դու գիտութիւնը մերժեցիր, իսկ ես քո քահանայութիւնդ եմ մերժում, որ ինձ քահանայ չլինես դու:

(7) Ո՞վ է հիւանդանում՝ որոյ հետ և ես չեմ հիւանդանում. ո՞վ է զայթակղում՝ որի համար ես չեմ այրում ու խորովում:

(8) Ուխտ էի դնում և խնդրում, որ ես ինքս նզովում Քրիստոսից, իմ ըստ մարմնոյ եղբարցս և ազգականացս համար:

(9) Մարդոյ որդի, տեսուչ կարգեցի քեզ Խորայէլի տան վերայ. կլսես իմ պատգամները և կսպառնաս նոցա իմ կողմից: Նրբ որ կասեմ անօրէնին թէ մահով կմեռնես. իսկ դու չես զգուշացնի նորան. և չես համոզի նորան զգուշանալ. և իւր չար ճանապարհից դառնալ և սպրել այն անօրէնը իւր անօրէնութեան մէջ կմեռնի և նորա արիւնը քեզանից կպահանջմ:

(10) Երիցանց աղաչում եմ այսուհետև իբրև երիցակից և վկայ Քրիստոսի չարչարանացը և իբրև հաղորդ կամ մասնակից ապագայ յայտնուելու փառքին. արածեցէք կամ հովուեցէք ձեզ յանձնուած Աստուծոյ հօտը, այ-

սինքն ժողովուրդը. վերակացու լինելով, ոչ ակամայ, այլ կամովին կամ յօժարութեամբ ըստ Աստուծոյ:

(11) Զգուշութեամբ հովուեցէ՛ք ձեր հօտը, որի վերայ տեսուչ է կարգել ձեզ Ս. Հոգին. հովուելու Աստուծոյ ժողովուրդը, որին կեանք տուեց իւր Արիւնձովը կամ պահպանեց:

(12) Վայ նորան, որ կասէ հօրը թէ ինչո՞ւ ինձ ծնար, կամ մօրը՝ թէ ինչո՞ւ յղացար ինձ:

(13) Որդեակ՝ թիկունք և օգնական եղեր քո հօր ծերութեանը և մի՛ տրտմեցներ նորան իւր կեանքի մէջ:

(14) Թող շգտանուի քո մէջ այնպիսին, որ իւր աղջիկը կամ տղան կրակի չորս կողմը ման ածէ, կամ կախարհութիւն և հմայութիւն անէ, կամ հաւահարց լինի, կամ կախարհաբար և իբրև վհուկ՝ մեռելներին հարցնելու նշան դնէ կամ սուտ մարգարէութիւն և մագութիւն անէ:

(15) Սպանեցէ՛ք այսուհետև ձեր երկրաւոր անդամները. հեռացրէ՛ք ձեզանից պոռնկութիւնը, պղծութիւնը, բիծը կամ յանցանքը, չար ցանկութիւնները և ազահութիւնը՝ որ կռասպշտութիւն է:

### ԵՐՐՈՐԴ ԳԱՏՈՒԻՐԱՆ 23-29.

(1) Աստուծոյ անունը ի՛ գուր բաների մէջ մի՛ գործածեր, կամ Աստուծոյ անունով սուտ մի՛ երգուիր:

(2) Որ լինէ՛ք որդիք ձեր շօրը՝ որ երկնքումն է:

(3) Երկինքը պատմում են Աստուծոյ փառքը և հաստատութիւնը պատմում է նորա ձեռաց ստեղծուածները:

(4) Տիրօջ ողորմութեամբ երկիրը լցուեցաւ և Տիրօջ խօսքով երկինքը հաստատուեցան և նորա բերանի հողով՝ նոցա բոլոր զօրութիւնքը:

(5) Քոնն է ցերեկը և Քոնն է գիշերը. լոյսը և արեւը Դու հաստատեցիր և Դու հաստատեցիր երկրի բոլոր սահմանը. զարունն ու ամառը Դու ստեղծեցիր:

(6) Քո Տէր Աստուծուց վախեցիր, նորան պաշտիր, նորան միացիր և նորա Անունով երգուիր:

(7) Մտոյգ է որ մարդիկ, երգում են նորանով՝ որ բարձր է իրանցից. և նոցա բոլոր հակառակութեանց հաստատութեան վճիռը՝ երգումն է:

(8) Եւ կհանեմ դորան, ասում է Ամենակալ Տէրը, և կը մանէ գողերի տունը, և նոցա տունը՝ որոնք սուտ են երգում իմ Անունով. և կբնակուի նորա տան մէջ, և կվերջացնէ նորան և կհատացնէ նորա փայտերը և նորա քարերը:

(9) Եթէ ուխտ ես դրել քո Տէր Աստուծուն, մի դանդաղիր ուխտածից հատուցանել. որովհետև խստիւ կպահանջէ քեզանից քո Տէր Աստուածը և մեղք կհամարուի այն քեզ համար. իսկ եթէ չես կամենում ուխտել՝ այն մեղք չի համարուի քեզ:

(10) Դարձեալ լսեցէ՛ք. առաջինները ասում էին սուտ մի երգուիր, ապա թէ ոչ պէտք է հատուցանես քո Աստուծուդ սուտ երգումդ. Բայց ես ձեզ ասում եմ ամենեին չերդուել, ոչ երկնքով՝ որովհետև Աստուծոյ աթոռն է. ոչ երկրով՝ որովհետև նորա պատուանդանն է այսինքն ոտքի դնելու տեղը կամ ոտքի տակի աստիճանը. ոչ երուսապէմով՝ որովհետև մեծ թագաւորի քաղաքն է. ոչ քո գլխով՝ որովհետև մի մազ անգամ չես կարող սպիտակացնել կամ թուխ շինել. բայց ձեր խօսքը պէտք է լինի այն ու ոչ. դորանից աւելին՝ չարիցն է:

(11) Ուրեմն եղէ՛ք դուք կատարեալ, ինչպէս կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը:

**ՉՈՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 29—35.**

(1) Յիշել՝ սրբել շաբաթ օրը այսինքն սուրբ պահել վեց օր աշխատիր և կատարիր քո բոլոր գործքերը. եօթներորդ օրը քո Տէր Աստուծոյ շաբաթն է այսինքն հանգիստը, այն օրը դադարիր քո գործերիցը:

(2) Եւ պատահեցաւ որ մտաւ նա շաբաթ օրը մի փարիսեցի իշխանի տունը հաց ուտելու. և նոքա սպասուած էին նորան: Այն տեղ կար ջրգողութեամբ հիւանդացած մի մարդ որ կանգնած էր նորա առջ: Պատասխան տուեց Յիսուս և ասաց օրինականներին և փարիսեցիներին, թէ արժան է արդեօք շաբաթ օրը բժշկութիւն անել: Նոքա լուս մնացին: Եւ բռնելով նորան բժշկեց և արձակեց: Եւ ասաց նոցա. ձեզանից ո՞ւմ էջը կամ եզը որ ընկնի ջրհորը, չէք հանի նորան շուտով շաբաթ օրը: Սորան շկարողացան պատասխան տալ:

(3) Հոգս մի՛ քաշէք ձեր կեանքի մասին, թէ ինչ պիտի ուտէք և ինչ պիտի խմէք. ո՛չ ևս ձեր մարմնոյ մասին, թէ ինչ պիտի հագնէք. չէ՞ որ կեանքը առաւել է կերակուրից և մարմնը հանդերձից: Մտիկ արէք, նայեցէք երկնքի թռչուններին, որ ո՛չ վարում են, ո՛չ հնձում են, ո՛չ շտեմարանում կամ ամբարումն են հաւաքում, սակայն ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նոցա. չէ՞ որ դուք առաւել էք քան թէ այն թռչունները:

(4) Ալինի՞ արդեօք ձեր մէջ այնպիսի մարդ՝ որից որդին հաց խնդրէ. և նա մի՞թէ հացի փոխանակ քար կտայ. կամ խնդրէ ձուկ՝ մի՞թէ օձ կտայ: Աւրեմն դուք՝ որ չար էք, գիտէք բարի պարզներ տալ ձեր որդւոց, որչափ առաւել ձեր Հայրը՝ որ երկնքումն է, բարիք կտայ նոցա՝ որոնք կխնդրեն նորանից:

(5) Գողանում էք, սպանում էք, շնանում էք, սուտ էք երդում. և դալիս էք կանգնում էք իմ առջս այս տանը մէջ. մի՞թէ աւազակների այր դարձաւ իմ տունը՝ որի վերայ դրուած է իմ անունը ձեր առջև. ես ահա տեսայ այդ, ասում է Տէրը:

(6) Բայց ոչնչացրու և ջնջիր անիրաւութեանդ խարդախութիւնը, չար մտածութիւնը, քանդիր վաճառականութեանդ, առուտուրիդ խաբեբայութիւնը կամ խարդախութիւնը, նեղացածներին կամ վշտացածներին թողութեամբ կամ ներողութեամբ արձակիր և պատուիր անիրաւութեան մուրհակները, այսինքն ջնջիր քո մէջ մեղքի տեսակները:

(7) Փոխ է տալի Աստուծուն նա՛ որ անանկին ողորմում է. նորա տուածի համեմատ կհաստուցանէ նորան Աստուած:

(8) Բրդիր քաղցածներին քո հացը և անյարկ կամ անտուն աղքատներին տար քո տունը, եթէ տեսնես մերկին՝ հագցրու. և քո ընտանիքի որդուն անհող ու անխնամ չթողես:

(9) Չասես թէ գնա և յետոյ արի և վաղը կտամ, քանի որ կարող ես բարի անել. որովհետև չգիտես թէ վաղը քեզ համար ինչ պիտի բերէ:

(10) Իւրաքանչիւր միաշաբաթին ամեն մէկը ձեզանից թող հաւաքէ իւր համար ինչքան որ կարող է:

(11) Եթէ Պատարագ մատուցանելու լինես Սեղանի վերայ, և այնտեղ յիշես որ քո եղբայրը ոխ ունի քո դէմ կամ նեղացած է քեզանից. թող պատարագը Սեղանի վերայ գնա նախ հաշտուիր քո եղբոր հետ և յետոյ արի Պատարագ մատուցանելու:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 36-42.**

- (1) Պատուիր քո հօրը և մօրը, որ քեզ բարի լինի և երկայն կեանք ունենաս աշխարհիս երեսին:
- (2) Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին, որովհետև այդ է արժանաւորը:
- (3) Որդեակի, թիկունք և օգնական եղիր քո հօր ծերութեանը և մի տրամեյներ նորան իւր կեանքի մէջ:
- (4) Ինձ սասելի հայրերի մեղքը կհատուցանեմ նոցա որդւոց երեք և չորս ազգ կամ պորտ տեղութեամբ. իսկ իմ սիրելիներին և իմ կամքը կատարողներին՝ կողորմեմ հազար ազգ կամ պորտ տեղութեամբ:
- (5) Չծիծաղես քո որդւոյ երեսին. որպէս զի վերջումը չթմրուին քո ասամները. ծօիր կամ խոնարհեցրու նորա պարանոցը կամ վեղը՝ քանի որ փոքր է. և խփիր կամ ծեծիր նորա կողքը՝ քանի որ մատաղ է, որպէս զի չլինի թէ կարծրանայ այսինքն պնդանայ և չհաւանի քեզ և վեշտ լինի անձիդ:
- (6) Խրատիր քո որդւոցդ և կհանգստացնէ քեզ և զարդ կլինի անձիդ:
- (7) Ինչք հայրեր, մի բարկացնէք և նեղացնէք ձեր որդւոցը, այլ սնուցէք կամ դաստիարակեցէք խրատով և Աստուծոյ ուսմամբ:
- (8) Որովհետև իւր արեգակը ծագում է ինչպէս չար՝ նոյնպէս և բարի մարդկանց վերայ. և տալիս է իւր անձրևը ինչպէս արդարներին՝ նոյնպէս և մեղաւորներին:

**ՎԵՅԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 42-52.**

- (1) Երանի՛ է ձեզ, երբ կհալածեն ձեզ և կնախատեն և կչարախօսեն ձեզ իմ պատճառով: Ուրախացէ՛ք դուք, որովհետև դորանով ձեր վարձքը շատանում է երկնքումը:
- (2) Նեղ դռնով մտէք, որովհետև լայն դուռը և համարձակ ճանապարհը ձեզ տանում է դէպի կորուստ. և շատերը այդ դռնով են մտնում: Իսկ նեղ դուռը և ճանապարհը տանում են դէպի կեանքը և քիչ են այդ դռնով մտնողները և այդ ճանապարհով գնացողները:
- (3) Սպանողների սահմանը այս կլինի, որ կփակուի այնտեղ և կապրի, որովհետև սկամայ սպանեց իւր ընկերօջը, որին չէր ատում նա երեկ և անցեալ օրը:
- (4) Լսեցէք. առաջինները ասում էին թէ մի՛ սպաներ. որովհետև ով որ կսպանէ, դատաստանին՝ պարտական կը մնայ: Բայց ես ասում եմ ձեզ, որ եթէ մէկը իզուր տեղը կբարկանայ ընկերի վերայ՝ դատաստանին պարտական կը մնայ. իսկ ով յիմար կասէ իւր եղբօրը՝ ատենի առաջ պարտաւոր կլինի. և եթէ իւր եղբօրը մորոս այսինքն անխելք կասի՝ պարտաւոր կմնայ դժոխքի կրակին: Եթէ Պատարագ մատուցանելու լինես Սեղանի վերայ և այնտեղ յիշես որ քո եղբայրը ռիս ունի քո գէմ կամ նեղացած է քեզանից՝ թող Պատարագը Սեղանի վերայ. զնա նախ հաշտուիր եղբօրդ հետ և յետոյ արի Պատարագ մատուցանելու:
- (5) Նա՛ որ ատում է իւր եղբօրը, մարդասպան է:
- (6) Չեր անձի վրէժը դուք մի՛ խնդրէք սիրելիք, այլ թողէք ձեր բարկութիւնը, որովհետև զբուած է իմն է վրէժխնդրութիւնը և ես կհատուցանեմ, ասում է Տէրը:
- (7) Նա՛ որ թափում է արիւն և նա՛ որ զրկում է վարձկանին կամ մշակին՝ եղբայրներ են:

- (8) Իմաստունների սիրտը պիտի լինի սգոյ կամ տխուր աներու՞մը. իսկ անզգամների սիրտը ուրախութեան աներու՞մն է. Լաւ է սգոյ տունը գնալ, քան թէ արբեցու թեան, որովհետեւ նա է ամենայն մարդոյ վերջը:
- (9) Եւ կտորվեցնէք ձեր որպէսցը որ խօսեն այս բաները թէ տանը նստած ժամանակ, թէ ճանապարհ գնալիս, թէ քնելիս և թէ վեր կենալիս. և կգրէք այս բաները ձեր աների սխնեղի վերայ և դռների վերայ, որ շատօրեայ կամ երկայնակեաց լինիք երկրի վերայ:
- (10) Եւ ասում են, ի՞նչ է պատճառը որ մենք պահէք պահեցինք՝ և դու չտեսար. խոնարհեցրինք մեր անձը՝ և դու չիմացար. որովհետեւ ձեր պահոց օրերին ձեր կամքն էք կատարում. վշտացնում էք և նեղացնում էք ձեր ձեռքի տակը եղբայրներին. հակառակութեամբ և կռուով էք պահում. զբնում էք, նեղացնում էք սկարին, թոյլին կամ խեղճին. իսկ ի՞նչ հարկաւոր է ինձ այնպիսի օրուայ պատը. որ դալիս էք բողբոլում էք ինձ և ես չեմ լսում ձեզ:

**ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 52—57.**

- (1) Ծնութիւն կամ պոռնկութիւն չանես:
- (2) Սէրն է օրէնքի կատարելութեան չափը:
- (3) Նյախանձոտ Աստուած եմ ես, ինձ ատելի հայրերի մեղքի վրէժը կհաննեմ նոցա որդիքներից, եթէ մինչև անգամ չորորդ ազգը լինի կամ պորտը:
- (4) Իսկ իմ սիրելիներին և իմ կամքը կատարողներին կողորմեմ մինչև հազար ազգ կամ պորտ տեղութեամբ:
- (5) Անբարիչտ մարդկանց թողները ճիւղերով չեն շատանայ, այսինքն քանի գնայ սերունդը կպակասի:
- (6) Եթէ մէկը կշնանայ պսակուած կնօջ հետ կամ բնկերի կնօջ հետ՝ պէտք է մեռնի, ինչպէս շնացողը՝ նոյնպէս և շնացեալը:

- (7) Փախէք, հեռու կացէք պոռնկութիւնից, բոլոր մեղքերը, որ գործում է մարդը՝ մարմնից դուրս է. իսկ նա՛ որ շնանում է կամ պոռնկում է, իւր մարմնի մէջն է մեղանշում:
- (8) Ոչ պոռնիկները, ոչ շները այսինքն շնացողները... Աստուծոյ արքայութիւնը չեն կարող ժառանգել:
- (9) Չար կնօջ վերայ մի՛ նայիր, որովհետեւ մեղք է թափուում պոռնիկ կնօջ շրթունքներից, որ մի կարճ ժամանակ կզմայլեցնէ՝ այսինքն դուրեկան կլինի քեզ. բայց յետոյ լեզվիցն էլ դառար կլինի քեզ՝ համար և կլինի սրուած երկու բերնանի սրի կամ թրի նման:
- (10) Որդեակ, թող չյաղթէ քեզ զեղեցկութեան ցանկութիւնը, չգերուես քո աչքերովդ և չյափշտակուես նորա արտեանունքներով:
- (11) Քո անձի զօրութիւնը այսինքն քո իրաւունքը կնօջը չասս. չլինի թէ թուլացնէ քո զօրութիւնը և ամաչեցնէ քեզ:
- (12) Լսեցէք ուրեմն, առաջինները ասում էին կամ առաջ ասուած էր շնութիւն չանես. բայց ես ձեզ ասում եմ, թէ նա՛ որ կնայէ կնօջ վերայ ցանկանալու մտքով, արդէն շնացաւ նա՛ նորա հետ իւր սրտումը:
- (13) Չեր տափական ցանկութիւններով կշտացէք: Շատացէք և բազմացէք:
- (14) Երգողների մօտ մի՛ յաճախեր, որ չլսես նոցա ձայնը, որպէս զի չլինի թէ նոցա ձայնի ազդութիւնից քեզ կորցնես: Կոյս աղջկայ վերայ ապշութեամբ կամ յափշտակուած մի՛ նայիր, որպէս զի չլինի թէ գայթակղուես նորա զեղեցկութեամբը:
- (15) Ո՞վ կարող է կրակը գողումը դարսել՝ որ շորերը չայրուեն. և կամ ո՞վ կարող է մանգալ կրակի կայծերի վերայ՝ որ ոտքերը չխարշուեն կամ չայրուեն:

**ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 57—71.**

- (1) Պէտք է սիրես քո Տէր Աստուածը բոլոր սրտովդ, անձովդ, զօրութիւնովդ և մտքովդ. պէտք է սիրես և ընկերդ իբրև քո անձդ:
- (2) Չէ կարելի որ գայթակղութիւն չլինի. Բայց վայ նորան, որոյ ձեռքով կլինի. լաւ էր նորան որ երկանի կամ ջրաղացի քարը պարանոցից կախէր և ծովը ընկնէր, քան թէ այս փոքրիկներից մէկին գայթակղեցնէր:
- (3) Վայ նորան, ով վատ խորհուրդներ, մնասակար խրատներ կտայ իւր ընկերին:
- (4) Ահաւասիկ ձեր արտերում աշխատող մշակների վարձը, ձեզ մօտ են. ձեզանից զրկուածը ձայն է տալի և հնձողների բողբոջը կամ գանդատը հասաւ Զօրութեանց Տիրօջականջը:
- (5) Մի հարստահարիբ, այսինքն մի զրկիր անանկին, որովհետև աղքատ է. և չանպատուես նորան քո ողորմութեան տուրքի մէջ, այսինքն քո ողորմութիւնը չանես նորան անպատուելով:
- (6) Չզլանաս անանկի և քո կարօտեալ եղբայրների վարձը, նոյն օրը պէտք է հասուցանես նորա վարձը արեգակը մայր մոնելուց առաջ. որովհետև աղքատ է և այն է նորա յոյսը:
- (7) Չզրկես քո ընկերդ. չյափշտակես կամ չխլես նորանից. և վարձկանի կամ մշակի վարձը չմնայ քեզ մօտ մինչև միւս առաւօտ:
- (8) Ով որ գողերի հետ կբաժանէ գողացած իրերը, կնշանակէ նա ատում է իւր անձը:
- (9) Իսկ եթէ կծախէ մէկը ընկերին մի բան և կամ կբաժանայ ընկերից, չպէտք է զերար նեղեն:
- (10) Անիրաւութիւն չանէք ձեր չափերի, կշեռքների և

- գոյգերի մէջ. ձեր գոյգն ու չափը արդար պիտի լինեն:
- (11) Իւր արծաթը վարձով կամ շահով չի տայ. և իրաւունքը պաշտպանելու համար կաշառք չի վերցնի. ով որ այսպէս կանէ, նա յաւիտեան չի սասանի:
- (12) Քեզ մօտ բնակող, քո աղքատ եղբորդ եթէ փոխտաս քո արծաթը, չշտապեցնես նորան և շահ չպահանջես նորանից:
- (13) Գնահ մրջևեւի մօտ, ով վատ կամ ծոյլ, և նախանձիր նորա ձանապարհի վերայ, եղեր աւելի իմաստուն քան զնա: Նա ոչ երկրագործութիւն ունի, ոչ էլ ստիպող սւնի. ոչ նեղացնող ունի և ոչ տէրերի ձեռքի տակն է: Բայց ամառուանից սկսեալ պատրաստում է իւր կերակուրը, և շատ պաշար է հաւաքում ամառը. զնա մեղրաձանձի մօտ. և սովորիր, ի՞նչպէս գործունէաց է և նորա գործը ի՞նչպէս պարկեշտութեամբ է. որի վաստակը բժշկութեան համար են գործածում թէ թագաւորները և թէ խեղճ անանկները. թէպէտ նա ոյժի կողմից թոյլ է, տկար է. բայց իմաստութիւնը պատուեց և ինքը յարգուեցաւ: Մինչև երբ այդպէս ընկած պիտի լինես ով ծոյլ կամ երբ պէտք է զարթնես քնիցդ. փոքր ինչ ննջում ես, փոքր ինչ նստում ես, փոքր ինչ նիրհում ես և փոքր ինչ հանգստացնում ես ձեռքերդ կուրծքիդ վերայ: Նւ նորանից յետոյ աղքատութիւնը իբրև չար ձանապարհորդ կհասնէ քեզ վերայ. և կարօտութիւնը իբրև ժիր սուրհանդակ այսինքն շուտ մանկող թղթատար:
- (14) Ով որ գողանում էր, այսուհետև էլ չգողանայ. այլ ընդհակառակը պէտք է աշխատէ բարի գործել. այնքան որ բաւական լինի տալ ում հարկաւոր կլինի:
- (15) Իմացէք, որ անիրաւները Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգի, ոչ էլ գողերն ու ագահները:

(16) Տէր, ահա իմ ունեցած կարողութեանս կէսը կտամ աղքատներին. և եթէ մէկին զըկել եմ, չորս անգամ աւելի կհատուցանեմ:

(17) Բայց եթէ նորան մերձաւոր մէկը չկայ, որին կարելի լինի հատուցանել զորձած յանցանքի համար, և յանցանքի փոխանակ ինչ որ Տիրօջն է ընկնելու, պէտք է հասնի քահանային:

**ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 71—78.**

(1) Ընկերօջղ մասին սուտ վկայութիւն չտաս:

(2) Եթէ մարդկան և հրեշտակաց լեզուով անգամ խօսելու լինիմ և սակայն սէր չունենամ՝ կլինեմ ես իբրև պղինձ՝ որ հնչում է և իբրև ծնծղայ՝ որ մեծ ձայն է հանում:

(3) Սորանով կիմանան թէ դուք իմ աշակերաններն էք, եթէ միմեանց կը սիրէք:

(4) Ուրեմն եղէք և դուք կատարեալ, ինչպէս կատարեալ է ձեր երկնաւոր Հայրը:

(5) Ճշմարտութեամբ պէտք է քննեն դատաւորները, և ահա մի անիրաւ վկայ, անիրաւ վկայութիւն է տալի և հակառակ է կանգնում իւր եղբօրը, վարուեցէք նորա հետ այնպէս՝ ինչպէս նա մտածել էր վարուելու իւր եղբօր հետ. և չարը մշտեղեց վերցրէք կամ հանէք ձեր միջեց:

(6) Դուք սատանայ էք ձեր հօրից, և ձեր հօր ցանկութիւնն էք կամենում կատարել, որովհետև նա հենց սկզբից մարգասպան էր և ճշմարտութեան մէջ չմնաց, երբ որ սուտ է խօսում, խրաչիններից է խօսում, որովհետև սուտ է և նորա հայրը:

(7) Սուտփաստանների խօսքերը կակուղ են. բայց պատերազմի շտեմարանն են ընկնում այսինքն պատերազմների պատճառ. են լինում:

(8) Բայց ասում եմ ձեզ, ամեն դատարկ խօսքի համար, որ կխօսեն մարդիկ, համար կամ հաշիւ կտան դատասանի օրը:

(9) Այսպէս և լեզուն փոքր անգամ է, և մեծմեծ բաներ է խօսում, ահա մի քիչ կրակ և ի՞նչպիսի անտաներ է այրում:

(10) Մի բանբասէք մէկ մէկու, եղբարք, ով որ կբանբասէ իւր եղբօրը կամ կգատէ նորան՝ կնշանակէ օրէնքն է բամբասում կամ դատում: Իսկ եթէ օրէնքն ես դատում, կը նշանակէ դատաւոր ես և ոչ թէ օրէնքը կատարող:

(11) Տէր, պահպան դիր իմ բերնին և ամուր դուռն իմ շրթունքներիս. որ իմ սիրտը չար խօսքերով չխտարուի:

(12) Ասացի թէ կպահեմ քո ճանապարհը, որպէս զև լեզուովս չմեղանչեմ:

(13) Սուտ համբաւ չընդունես, մի հաւանիր անիրաւի հետ անիրաւ վկայ լինել:

(14) Քո ընկերի մասին սուտ վկայութիւն չանես:

(15) Սուր ածելոյ նման, օրեց նենդութիւնը, սիրեց ասուել չարութիւնը քան թէ բարութիւնը, անօրէնութիւնը առաւել քան թէ արդար խօսքը:

**ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏՈՒԻՐԱՆ 79—82.**

(1) Մի ցանկար քո ընկերօջ տանը և այն ամեն բանին ինչ որ նորանն է:

(2) Մեծ պահպանութեամբ պահիր սիրտդ, որովհետև նորանից է կեանքի ելքը:

(3) Երանի՛ նոցա, որոնք սրտով սուրբ են, որովհետև նոքա Աստուծուն կտեսնեն:

(4) Որովհետև սրտիցն են դուրս գալի չար խորհուրդներ, սպանութիւններ, շուտիւններ, պոռնկութիւններ, գո-

- ղութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ:
- (5) Խոնարհեցրու իմ սիրտս Քո վկայութեանց մէջ և ոչ ողբահոլութեան:
- (6) Սուրբ սիրտ հաստատիր իմ մէջ, ով Աստուած, և ուղիղ հոգի նորոգիր ՚ի փորի:
- (7) Կխոստովանիմ Քեզ Տէր իմ սրտի ուղղութեան համար, որպէս զի սովորեմ Քո արդարութեան իրաւունքը:
- (8) Թագցրի սրտիս մէջ Քո խօսքերը, որպէս զի չմեղանչեմ Քեզ:
- (9) Ամենքին խնամող Տէր, պահապան զիր իմ աչքերիս, որ Քո երկիւղը արատաւոր աչքերով չնայեմ. և սրտիս՝ որ չարութիւն չխորհէ. այլ ուղիղ սոցա շարժումը, որ ամեն բանի մէջ Քո պատուիրանների համաձայն լինի:
- (10) Մարմնոյ ճրագը աչքն է. եթէ աչքդ առատ է, բոլոր մարմինդ լուսաւոր կլինի. Իսկ եթէ աչքդ չար է, բոլոր մարմինդ խաւարին կլինի. Իսկ արդ եթէ լոյսը որ քո մէջ է, խաւար է՝ խաւարը որչափ աւելի:
- (11) Զարթեցրու իմ աչքերս և կնայեմ կամ կտեսնեմ Քո օրինաց սքանչելիքը:
- (12) Դարձրու իմ աչքերս. որ նանրութիւնները այսինքն դատարկ և սուտ բաներ չտեսնեմ. Քո ճանապարհի վերայ պահպանիր ինձ:

Վ Ե Ր Զ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք . . . . .	3.
Ուղերձ . . . . .	6.
Առաջին պատուերան . . . . .	9.
Երկրորդ պատուերան . . . . .	15.
Երրորդ պատուերան . . . . .	23.
Չորրորդ պատուերան . . . . .	29.
Հինգերորդ պատուերան . . . . .	36.
Վեցերորդ պատուերան . . . . .	42.
Նօթներորդ պատուերան . . . . .	52.
Ութներորդ պատուերան . . . . .	57.
Իններորդ պատուերան . . . . .	71.
Տասներորդ պատուերան . . . . .	78.

ԳՐԱԲԱՌ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկու խօսք . . . . .	83.
Ուղերձ . . . . .	—
Առաջին պատուերան . . . . .	84.
Երկրորդ պատուերան . . . . .	86.
Երրորդ պատուերան . . . . .	88.
Չորրորդ պատուերան . . . . .	90.
Հինգերորդ պատուերան . . . . .	92.
Վեցերորդ պատուերան . . . . .	93.
Նօթներորդ պատուերան . . . . .	94.
Ութերորդ պատուերան . . . . .	96.
Իններորդ պատուերան . . . . .	98.
Տասներորդ պատուերան . . . . .	99.



Երև. .Տող.

Սխուշ.

Ուշիշ:

52	1 (վ)	սպանու թեան	սպանու թիւն
53	4	զաչեր	զաղեր
57	13	զրգուիշ	զրգուիչ
59	14	փառոցն	փառացն
66	14 (վ)	անակ	անանկ
—	10	ճշմարտութեանց	ճշմարտութեան
79	11 (վ)	վճիռներ	վճիռները
80	12	չտիրէ	չտիրէ
88	11	չգտանուի	չգտանուի

10	10	10	10
11	11	11	11
12	12	12	12
13	13	13	13
14	14	14	14
15	15	15	15
16	16	16	16
17	17	17	17
18	18	18	18
19	19	19	19
20	20	20	20
21	21	21	21
22	22	22	22
23	23	23	23
24	24	24	24
25	25	25	25
26	26	26	26
27	27	27	27
28	28	28	28
29	29	29	29
30	30	30	30
31	31	31	31
32	32	32	32
33	33	33	33
34	34	34	34
35	35	35	35
36	36	36	36
37	37	37	37
38	38	38	38
39	39	39	39
40	40	40	40
41	41	41	41
42	42	42	42
43	43	43	43
44	44	44	44
45	45	45	45
46	46	46	46
47	47	47	47
48	48	48	48
49	49	49	49
50	50	50	50
51	51	51	51
52	52	52	52
53	53	53	53
54	54	54	54
55	55	55	55
56	56	56	56
57	57	57	57
58	58	58	58
59	59	59	59
60	60	60	60
61	61	61	61
62	62	62	62
63	63	63	63
64	64	64	64
65	65	65	65
66	66	66	66
67	67	67	67
68	68	68	68
69	69	69	69
70	70	70	70
71	71	71	71
72	72	72	72
73	73	73	73
74	74	74	74
75	75	75	75
76	76	76	76
77	77	77	77
78	78	78	78
79	79	79	79
80	80	80	80
81	81	81	81
82	82	82	82
83	83	83	83
84	84	84	84
85	85	85	85
86	86	86	86
87	87	87	87
88	88	88	88
89	89	89	89
90	90	90	90
91	91	91	91
92	92	92	92
93	93	93	93
94	94	94	94
95	95	95	95
96	96	96	96
97	97	97	97
98	98	98	98
99	99	99	99
100	100	100	100

ՀՀ Ազգային գրադարան



NL0685768

